




Ecoline
International

ՀԱՅԱՍՏԱՆ. ՍԻՍԻԱՆ-ՔԱԶԱՐԱՆ (ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՄԻՋԱՆՑՔ) ՃԱՆԱՊԱՐՀԱՅԱՏՎԱԾԻ ԾՐԱԳԻՐ

ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ



Աղբյուր՝ նկարները Սիսիան-Քաջարան առաջարկվող ճանապարհի 3D հորվակից, Ճանապարհային դեպարտամենտ, 2022
[<https://www.youtube.com/watch?v=fu-dgAwjSsU>]

Հունիս 2023

Էկոլայն Ինթերնեյշնլ ՍՊԸ, Բուլղարիա, 1000, Սոֆիա, Ռաչո Դիմչև 1, www.ecoline-int.org

ՀԱՅԱՍՏԱՆ. ՄԻՍԻԱՆ-ՔԱԶԱՐԱՆ (ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՄԻԶԱՆՑՔ) ՃԱՆԱԴԱՐՀԱՅԱՏՎԱԾԻ ԾՐԱԳԻՐ

ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ

Մշակված է



Ecoline
International

Էկոլայն Ինթերնեյշնլ ՍՊԸ
(Սոֆիա, Բուլղարիա)



Տնօրեն. Մայա Գաչեչիլաձե-
Բոժեսկու
Հեռ. +38095 11 00 727
+ 359 876 63 0522
Էլ.փոստ.
mgachechiladze@ecoline-int.org



SE SOLUTIONS
Advancing Environmental Sustainability

ՍԻ Ի Սոլյուշնս ՍՊԸ (ՀԱՀ)

Տնօրեն. Շոն Օ Բեյրն
Հեռ. +27 (0)12 643 0190
+27 (0)82 903 9751
Էլ.փոստ.
sobeirne@tiscali.co.za



ATMS Solutions

ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս ՍՊԸ
(Երևան, Հայաստան)

Տնօրեն. Արտակ Տեր-Թորոսյան
Հեռ. +37491 497128
+37499 109495
Էլ.փոստ.
artak.ter-torosyan@atms.am

Մշակված է

Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության «Ճանապարհային
դեպարտամենտ» հիմնադրամի համար

© Էկոլայն Ինթերնեյշնլ ՍՊԸ, 2023

Բոլոր իրավունքները պահպանված են:
Սույն փաստաթղթի ամբողջական կամ մասնակի օգտագործումը կարող
է կատարվել միայն հղում անելով սկզբնաղբյուրին:

ՓԱՍՏԱՂԹՐԹԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ

Տար- բերակ	Մշակված է	Ստուգված է	Հրապարակված է	Հրապարակման ամսաթիվը	Նկարագիրը
1-10	Արսեն Հայրիյան Մայա Գաչեչիլադե- Բոժեսկու	Թեդ Փոլեթ Մայա Գաչեչիլադե- Բոժեսկու	Մայա Գաչեչիլադե- Բոժեսկու	01.2022 - 06.2023	Վարկատուների, պատվիրատուի և պետական մարմինների վերանայման տարբերակ
11	Սուրեն Գյուրջիկյանի և Թեդ Փոլեթի աջակցությամբ	Արտակ Տեր- Թորոսյան		27.06.2023	Վարկատուների և պատվիրատուի հաստատման համար տարբերակ, հայերեն թարգմանության և հրապարակման համար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ՆԱԽԱԲԱՆ	1
Բ. ԱՌԱՋԱՐԿԿԱԾ ԾՐԱԳԻՐԸ, ՀԱՐԱԿԻՑ ՀՈՂԱՅԻՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱԿԱԿԵՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	1
Գ. ԽՈՑԵԼԻ ԽՍԲԵՐ	3
Դ. ՏԾ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ	3
Ե. ԻՐԱԿԱՎԱՆ ԵՎ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ	5
Ե.1 Հողերի օտարման և տարաբնակեցման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը	5
Ե.2 Տարաբնակեցման նախապատրաստման և իրականացման սկզբունքները	7
Ե.3 ՀՕՏ վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համեմատությունը վարկատուների չափանիշներ հետ	8
Ե.4 ՀՕՏ սույն ծրագրի համար որդեգրված սկզբունքները և իրավունքները	12
2. ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ԵՎ ԿԵՆՍԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱԿՈՒՄՆԵՐ	13
2.1 Իրավունքներ	22
2.2 Փոխհատուցում և կենսամիջոցների վերականգնման օժանդակություն ստանալու իրավունքները	22
2.2.1 Փոխհատուցման իրավունքներ	23
2.2.2 Կենսամիջոցների վերականգնման օժանդակություններ ստանալու իրավունքները	28
2.3 Միավորի փոխհատուցման արժեքի գնահատումը	31
2.4 Սեփականության օտարման պայմանները	32
2.5 Օրինականացման պայմանները	33
Ե. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	33
Ը. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ, ՇԱՀԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱԿՈՒՄ ՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ	34
Թ. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ	35
Թ 1. ՏԿԵՆ ԵՎ ԾԴ	36
Թ 2. Տեղական ինքնակառավարման մարմիններ	37
Թ 3. Այլ կառույցներ և հաստատություններ	37
Թ 4. Խորհրդատուներ	37
Թ 5. ՎՉԵԲ, ԱՉԲ և ԵՆԲ	38
Ժ. ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ԴԺԳՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	40
ԺԱ. ՄՇԱԳԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ	41
ԺԱ.1 Ներքին մշտադիտարկում	41
ԺԱ.2 Անկախ արտաքին մշտադիտարկում	42
ԺԲ. ՏԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌՆՉԿՈՂ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ	43
ԺԳ. ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԲՅՈՒՋԵ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ	43
ԺԴ. ՏԾ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ	44
Հավելված Ա. Տիպային ՏԾ բովանդակության ամփոփ նկարագիր	
Հավելված Բ. Խոցելի անձանց օժանդակությունների և ձեռնարկատիրական գործունեության, աշխատանքի կորստի համար փոխհատուցման հաշվարկի մեթոդաբանություն	

Աղյուսակներ

Աղյուսակ 1. ՀՕՏ վերաբերյալ Հայաստանի օրենքների և կանոնակարգերի համեմատությունը վարկատուների չափանիշների հետ
Աղյուսակ 2. Իրավունքների սխեմա

Պատկերներ

Պատկեր 1. Ծրագրի գտնվելու վայրը, Հայաստան
Պատկեր 2. ՀՕՏ կազմակերպչական կառուցվածքը և գործողությունները

Շրջանակներ

Շրջանակ 1. ՀՕՏ գործողությունների իրականացման գործընթաց

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԶԲ	Ասիական Չարգացման Բանկ
ԱԵԱ	Ազդեցության Ենթարկված Անձ
ԱԵՏՏ	Ազդեցության Ենթարկված Տնային Տնտեսություն
ՄԽԽ	Մանրամասն Նախագծման Խորհրդատու
ԳՄ	Գործադիր Մարմին (Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն)
ՎԶԵԲ	Վերակառուցման և Չարգացման Եվրոպական Բանկ
ԱՍԳ	Արտաքին Մշտադիտարկման Գործակալություն
ԵՆԲ	Եվրոպական Ներդրումային Բանկ
ԲՍՍ	Բնապահպանական և Սոցիալական Ստանդարտ (ԵՆԲ-ի)
ԸԱԳՀ	Ընտանիքի Անապահովության Գնահատման Համակարգ
ԲՊԱ	Բողոքների Պատասխանատու Անձ
ԲՖԳ	Բազմափուլ ֆինանսավորման Գործիք
ԻԿ	Իրականացնող Կազմակերպություն (Ճանապարհային Դեպարտամենտ հիմնադրամ)
ԻԽ	Իրականացման Խորհրդատու
ՄՖՀ	Միջազգային Ֆինանսական Հաստատություն
ԾԿԽ	Ծրագրի Կառավարման Խորհրդատու
ԻՊ	Իրականացման Պահանջներ (ՎԶԵԲ-ի)
ԾԿԽ	Ծրագրի Կառավարման Խորհուրդ
ԾՆՏԱԽ	Ծրագրի Նախապատրաստման Տեխնիկական Աջակցության Խորհրդատու
ՀԿ	Հասարակական Կազմակերպություն
ՀՕՏ	Հողի Օտարում և Տարաբնակեցում
ՀՕՏՇ	Հողի Օտարման և Տարաբնակեցման Շրջանակ
ՀՕՏԾ	Հողի Օտարման և Տարաբնակեցման Ծրագիր
ՏԻՄ	Տեղական Ինքնակառավարման Մարմին
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՏՇ	Տարաբնակեցման Շրջանակ
ՏԾ	Տարաբնակեցման Ծրագիր
ՃԴ	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ
ՍՏՀԱ	Սոցիալական և Տարաբնակեցման Համակարգման Աշխատակազմ
ՍՏՈՒ	Սոցիալ-տնտեսական Ուսումնասիրություն
ՄՉՀ	Մանրամասն Չափագրման Հետազոտություն
ՏԿԵՆ	Տարածքային Կառավարման և Ենթակառուցվածքների Նախարարություն

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Կիրառելի չափանիշներ` Ծրագրի իրավական և քաղաքականության շրջանակի համար հիմք են հանդիսանում հողերի օտարման և տարաբնակեցման (ՅՕՏ) վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը, ինչպես նաև ՎՉԵԲ Բնապահպանական և սոցիալական քաղաքականությունն իր իրականացման պահանջներով (ԻՊ 5, 2019թ.), ԱԶԲ Անվտանգության պահանջներ 2-ը (Հարկադիր տարաբնակեցում) և ԵՆԲ Բնապահպանական և սոցիալական չափանիշները (հատկապես չափանիշ 6-ը) (2018թ.) (այսուհետ` Վարկատուների չափանիշներ):

Ազդեցության ենթակա անձ (ԱԵԱ)` ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով Ծրագրի իրականացման արդյունքում մշտական կամ ժամանակավոր ազդեցության է ենթարկվում իրեն պատկանող կամ իր կողմից փաստացի օգտագործվող անշարժ գույքի (հողի, տան, շենք-շինության) օտարումից, ինչպես նաև բնակության վայրի, փաստացի կարգավիճակի, կենսամիջոցի` ներառյալ աշխատանքի, և եկամուտների ստեղծող այլ գործունեության մասնակի կամ ամբողջական ազդեցությունից: Սա ներառում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ տնտեսական տեղահանումը:

Ազդեցության ենթարկված տնային տնտեսություն (ԱԵՏՏ)` մեկ տանիքի տակ բնակվող տնային տնտեսության բոլոր անդամները, որոնք ապրում են միասին և գործում են որպես մեկ տնտեսական միավոր: Ազդեցության ենթարկված տնային տնտեսությունը կարող է բաղկացած լինել մեկ հիմնական ընտանիքից, ընդլայնված ընտանիքային խմբից կամ ընտանիքի անդամ չհանդիսացող անձանց ներառող միավորից:

Իրավական կարգավիճակ ունեցող ԱԵԱ` այն ԱԵԱ-ները, որոնք ազդակիր գույքի նկատմամբ ունեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված իրավունք:

Փաստացի / չձևակերպված օգտագործողներ` ԱԵԱ-եր, ովքեր նկարագրության արձանագրության կազմման օրվա դրությամբ փաստացի օգտագործում են օտարվող սեփականությունը, ինչը հավաստվում է օտարվող սեփականության սեփականատիրոջ կողմից, իսկ սեփականատիրոջ բացակայության դեպքում` համայնքի ղեկավարի կողմից:

Փոխհատուցում` փոխարինման արժեքով ծրագրի կողմից ձեռք բերվող կամ ազդեցության ենթակա ակտիվի դիմաց կանխիկ վճարում կամ փոխարինող գույքի տրամադրում: Սույն ՏՇ իմաստով փոխհատուցումը ներառում է ՏՇ-ի 2.2 բաժնում նկարագրված փոխհատուցումները:

Վարչնաժամկետ` օտարվող սեփականության նկարագրության արձանագրության կազմման օրն է (արձանագրությունների ստորագրումը ԱԵԱ-ների և Ձեռքբերողի կողմից): Անձինք, ովքեր զբաղեցնում են տարածքը վերջնաժամկետից հետո փոխհատուցման կամ տարաբնակեցման օժանդակության որևէ այլ ձևի իրավունք չունեն:

Փոխհատուցման իրավունք` փոխհատուցում, եկամտի վերականգնում, տեղափոխման աջակցություն, եկամտի փոխարինում և վերաբնակեցում ներառող այն միջոցառումների ամբողջությունը, որոնք պետք է տրամադրվեն ազդեցության ենթակա անձանց` կախված նրանց կորուստների կամ ազդեցությունների բնույթից` նրանց տնտեսական, սոցիալական հիմքերը և իրավունքները վերականգնելու համար:

Հարկադիր վերաբնակեցում` ազդեցություն, որն առաջացել է ծրագրի հետ կապված հողերի օտարման կամ հողօգտագործման սահմանափակումների հետևանքով: Հարկադիր վերաբնակեցմամբ ծածկված ազդեցությունները ներառում են և՛ ֆիզիկական տեղահանումը (տեղահանում կամ հողի կամ ապաստանի կորուստ), և՛ տնտեսական տեղահանումը (ակտիվների կամ ակտիվների հասանելիության կորուստ, որը հանգեցնում է եկամտի աղբյուրների կամ ապրուստի միջոցների կորուստի): Վերաբնակեցումը համարվում է հարկադիր, երբ ազդակիր անհատները կամ համայնքներն իրավունք չունեն հրաժարվելու

հողի օտարումից, որը հանգեցնում է տեղահանման (օրինակ՝ հանրության գերակա շահի հիման վրա օտարման կամ հողօգտագործման սահմանափակումների դեպքում, ինչպես նաև բանակցության միջոցով օտարում, որտեղ գնորդը իրավասու է դիմելու հարկադիր օտարման:

Բարելավումներ՝ հողամասերում կառուցված շենքեր, շինություններ կամ կառույցներ (ստորգետնյա և վերգետնյա), այդ թվում՝ բնակելի շինություններ՝ իր տնտեսական շինություններով կամ կառույցներով, այգետնակը (ամառանոցը) այգեգործական տարածքի առանձին հողամասի վրա կառուցված իր տնտեսական շինություններով կամ կառույցներով, հասարակական և արտադրական նշանակության շինությունները, կիսակառույց շինությունները, նոր կառուցված, ձեռքբերված կամ փոփոխություններ կրած և լիազոր մարմնի (ՀՀ կադաստրի կոմիտե) կողմից հաշվառված անշարժ գույքը, որը դեռևս չի ստացել պետական գրանցում, ինքնակամ շինությունները, ենթակառուցվածքները, ինժեներական ցանցերը և այլն, որոնք հողամասի անբաժանելի բարելավումներ են:

Հողի օտարում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքներին (սեփականատերեր) սեփականության իրավունքով պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստացած կամ հաշվառված հողի կամ դրա մի մասի (և դրան կից անշարժ գույքի, գույքային իրավունքների և այլն) օտարումը հանրության գորակա շահերի ապահովման համար՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ:

Կենսամիջոց՝ միջոցների մի ամբողջ շարք, որոնք անհատները, ընտանիքները և համայնքներն օգտագործում են ապրուստ վաստակելու համար, օրինակ՝ աշխատանքի վարձատրությունը, ձեռնարկատիրական գործունեությունից կամ արտադրանքի, ապրանքների, արհեստների կամ ծառայությունների վաճառքից ստացված կանխիկ եկամուտ, վարձակալած հողից կամ տարածքից ստացված եկամուտ, բերքահավաքից կամ անասնապահությունից ստացված եկամուտը, բերքի կամ անասնաբուծության բաժինը, ինքնուրույն արտադրված ապրանքներ կամ ապրանքներ, որոնք օգտագործվում են փոխանակման համար, ինքնասպառմով ապրանքներ կամ արտադրանք; բնական կամ ընդհանուր ռեսուրսներից ստացված մենդամթերք, նյութեր, վառելիք և անձնական կամ կենցաղային օգտագործման կամ առևտրի համար նախատեսված ապրանքներ, կենսաթոշակներ և տարբեր պետական նպաստներ:

Կենսամիջոցների վերականգնման կամ բարելավման միջոցառումներ՝ օժանդակություն՝ ի լրումն գույքի փոխարինման փոխհատուցմանը, որոնք նախատեսված են աջակցելու ԱԵԱ-ներին՝ բարելավելու կամ առնվազն վերականգնելու ծրագրից առաջ իրենց ունեցած կենսամակարդակը: Կենսամիջոցների վերականգնման միջոցառումները կարող են ներառել դրամական միջոցների, անցումային աջակցության կամ այլ օժանդակությունների և այլ օժանդակ գործողությունների համադրություն, ինչպիսիք են ուսուցումը, գյուղատնտեսական կամ բիզնեսի բարելավման օժանդակություններ:

Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ՝ այն ԱԵԱ-ները, որոնք ազդեցության ենթակա անշարժ գույքի նկատմամբ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված եղանակով ձեռքբերված գույքային իրավունքները (օրինական ակնկալիք), որոնք, սակայն օրենքով սահմանված կարգով պետական գրանցում չեն ստացել:

Մարզ/Համայնք՝ Հայաստանը բաժանված է 10 մարզերի: Մարզերը ղեկավարվում են մարզպետի կողմից, որը նշանակվում է ՀՀ կառավարության կողմից: Մարզերը բաղկացած են համայնքներից: Յուրաքանչյուր համայնք ինքնակառավարվող է և բաղկացած է մեկ կամ ավելի բնակավայրերից: Բնակավայրերը դասակարգվում են որպես քաղաք կամ որպես գյուղ: 2022թ. դրությամբ Հայաստանում կա 77 համայնք:

Իրավական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա ԱԵԱ՝ այն ԱԵԱ-ները, ովքեր նկարագրության արձանագրության կազմման օրվա դրությամբ թեև փաստացի

տիրապետում և օգտագործում են ազդեցության ենթակա գույքը, սակայն չունեն գույքի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունքներ ձեռք բերելու օրինական ակնկալիք:

Վերաբնակեցում՝ ԱԵԱ/ԱԵՏՏ ֆիզիկական տեղահանումը նախքան Ծրագրի իրականացումը նրա բնակավայր/ձեռնարկատիրական գործունեության վայր հանդիսացող տարածքից:

Փոխարինման արժեք՝ արժեք, որը որոշվում է հիմնվելով հետևյալ բաղադրիչների վրա՝ ա) գույքի արդար փոխհատուցում, գնահատված շուկայական իրական արժեքով, բ) օտարման գործընթացի հետ կապված ծախսեր, գ) տեղափոխման և այլ անցումային ծախսեր, դ) կիրառելի այլ վճարներ և հատուցումներ, եթե այդպիսիք կան: Գնահատման այս մեթոդը կիրառելիս շենք, շինությունների, կառույցների և այլ ակտիվների մաշվածությունը (ամորտիզացիան) չի նվազեցվում: Փոխհատուցումը հաշվարկվում է փոխարինման արժեքով օտարվող հողի, շենք, շինությունների, մշակաբույսերի, բարելավումների և օտարվող այլ ակտիվների համար:

Չողօգտագործման սահմանափակումներ՝ գյուղատնտեսական, բնակավայրերի, արտադրական կամ այլ հողերի օգտագործման սահմանափակումներ կամ արգելքներ, որոնք առաջանում են Ծրագրի արդյունքում: Դրանք կարող են ներառել այգիների և օրենքով սահմանված պահպանվող տարածքների մուտքի սահմանափակումներ, հանրային սեփականության այլ ռեսուրսների հասանելիության սահմանափակումներ, ներառյալ նաև հողօգտագործման սահմանափակումներ կոմունալ ենթակառուցվածքների սերվիտուտի կամ անվտանգության գոտիներում:

Խիստ ազդեցության ենթարկված ԱԵՏՏ՝ այն ԱԵՏՏ-երը, որոնք (i) կորցնում են իրենց արտադրողական հողի 10%-ը կամ ավելին (ii) ֆիզիկապես տեղահանված ԱԵՏՏ-ները և (iii) ձեռնարկատիրական գործունեությունից զրկվող տնային տնտեսությունները:


Խոցելի ԱԵՏՏ՝ այն ԱԵՏՏ-երը, որոնք ներառված են սույն ՏՇ-ի Չավելված «Բ»-ի 4-րդ բաժնում ներկայացված խոցելի 5 խմբերից որևէ մեկում:

Ա. ՆԱԽԱԲԱՆ

1. Ի սկզբանե Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի երկրորդ փուլի համար մշակված Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակը (ՀՕՏՇ) մշակվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (ներկայումս՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (ՏԿԵՆ)) կողմից և հաստատվել է ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի հողերի օտարման և տարաբնակեցման շրջանակը և դրա փոխհատուցման սկզբունքները հաստատելու մասին» թիվ 1274-Ն որոշումով: Այդ ՀՕՏՇ-ն մշակվել է Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) տարաբնակեցման երաշխիքներին համապատասխան: Ծրագրի 2-ի վերանայված ՀՕՏՇ-ն հաստատվել է 2012թ. սեպտեմբերին և հետագայում թարմացվել և հաստատվել է 2015թ.-ի սեպտեմբերին «Տրանշ 3» ենթածրագրի համար:
2. Սույն Տարաբնակեցման շրջանակը (ՏՇ) մշակվել է **Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի** (այսուհետ՝ Ծրագիր) հետ կապված, որը նախատեսվում է համաֆինանսավորվել ՎԶԵԲ, ԱԶԲ և ԵՆԲ կողմից: Այս ՏՇ-ում, պահպանելով սկզբնական ՀՕՏՇ-ի չափանիշներն ու սկզբունքները, թարմացվել են փոխհատուցումների տրամադրման իրավունքի շրջանակը՝ համաձայն ՎԶԵԲ-ի, ԱԶԲ-ի և ԵՆԲ-ի պահանջների: Բացի այդ, թարմացվել են նաև իրավական և ինստիտուցիոնալ շրջանակը և բողոքների լուծման մեխանիզմը՝ համաձայն Ծրագրի ներկայիս կազմավորման: ՏՇ-ն մանրամասնում է մեխանիզմները, ընթացակարգերը և փոխհատուցումը, ինչպես նաև կենսամիջոցների վերականգնման միջոցառումները, որոնք պետք է կիրառվեն Ծրագրի ՀՕՏ առաջադրանքների պլանավորման և իրականացման ժամանակ:
3. Այս ՏՇ-ն կներկայացվի ՎԶԵԲ, ԱԶԲ և ԵՆԲ հաստատման համար: Դրանից հետո այն կհաստատվի ՀՀ կառավարության կողմից: ՀՀ կառավարության կողմից հաստատվելուց հետո ՏՇ-ն կիրառարակվի 120 օրվա ընթացքում՝ որպես Ծրագրի համար մշակված շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման բանկային փաթեթի մաս, հայերեն՝ ՃԴ կայքում և անգլերեն՝ ՎԶԵԲ, ԱԶԲ ու ԵՆԲ կայքերում: Նախքան շինարարության մեկնարկը Ծրագրի համար կպատրաստվի և կիրականացվի ՎԶԵԲ-ի, ԱԶԲ-ի և ԵՆԲ-ի կողմից հաստատված Տարաբնակեցման պլանը (ՏԲ) (տես՝ բաժին «Դ»): Այն նույնպես ենթակա է հաստատման ՀՀ կառավարության կողմից: Ճանապարհի շինարարությունը նախատեսվում է սկսել 2023 թվականին և կունի 5-6 տարի:
4. Ծրագիրը ֆինանսավորվելու է ՎԶԵԲ-ի, ԱԶԲ-ի և ԵՆԲ-ի կողմից և կիրականացվի «Ճանապարհների դեպարտամենտ» հիմնադրամի (ՃԴ) կողմից:

Բ. ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԾՐԱԳԻՐԸ, ՀԱՐԱԿԻՑ ՀՈՂԱՅԻՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԲՆԱԿԵՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածը Հյուսիս-Հարավ միջանցքի հայկական մասի հինգ ենթածրագրերից մեկն է և գտնվում է երկրի հարավային մասում: ՎԶԵԲ, ԱԶԲ և ԵՆԲ դիտարկում են մոտ 60 կմ երկարությամբ նոր Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի համաֆինանսավորումը, ներառյալ թունելների, կամուրջների, խաչմերուկների և հանգույցների կառուցումը (ինչպես նշված է վերևում Ծրագիր): Ծրագրի գտնվելու վայրը ներկայացված է **Պատկեր 1**-ում:



Պատկեր 1. Ծրագրի գտնվելու վայրը, Հայաստան¹

6. Ճանապարհի երեք այլընտրանքային ուղեգիծ է դիտարկվել 2015 թվականի տեխնիկատնտեսական հիմնավորման և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ընթացքում (ըստ ԱԶԲ-ի և ազգային պահանջների), որն ավարտվել է 2016-2017 թվականներին: Ընտրվել է Միսիան-Քաջարան ճանապարհահատվածի նախընտրելի ուղեգիծը (**Պատկեր 1**), քանի որ ենթադրվում էր, որ այն առաջարկում է

¹ Հյուսիս-Հարավ Ճանապարհային Միջանցք, Տրանս 4, Միսիան-Քաջարան հատված, Մանրամասն աշխատանքային նախագիծ, Գլխավոր հաշվետվության, 2019թ. ապրիլ

ամենամեծ առավելությունները, մասնավորապես՝ բարելավելով կապը երկրի շատ կարևոր հատվածի հետ, փոխարինելով գոյություն ունեցող վատ ճանապարհը, ինչպես նաև կտրուկ կրճատելով ճանապարհորդության ժամանակը: Այս այլընտրանքը նախընտրելի էր ՀՕՏ և շրջակա միջավայրի վրա ազդեցության համեմատաբար ավելի փոքր ազդեցության տեսանկյունից՝ երկար թունելի և ավելի կարճ մակերևութային ճանապարհի պատճառով, ինչը հաստատվեց խորհրդակցությունների ընթացքում (տես՝ բաժին «Ը»):

7. Նախնական նախագիծն ավարտվել և հաստատվել է 2016թ.-ին, որով ճանապարհահատվածը նախագծված է որպես մեկ ընդհանուր երթևեկելի մասով ճանապարհ՝ բոլոր վերընթաց հատվածներում վերելքի գոտիներով, իսկ թունելները՝ որպես երկու ուղղություններով մեկ երթևեկելի մաս: Այս ուղեգծի երկարությունը մոտավորապես 60 կմ է և այն ունի 100 կմ/ժ նախագծային արագություն: Մանրամասն նախագիծն այնուհետ վերջնականացվեց և հաստատվեց ՃԴ-ի կողմից 2019 թ.-ին: Ըստ 2019 թվականի մանրամասն նախագծի՝ առաջարկվող ճանապարհը կունենա երեք հիմնական խաչմերուկ, 27 կամուրջ և 9 թունելային հատված:

8. Ծրագրի տեխնիկատնտեսական հիմնավորումն իրականացնելիս և նախնական ու մանրամասն նախագծերը մշակելիս հաշվի են առնվել մի շարք նկատառումներ՝ ա) նախագծի օպտիմալացում՝ հողի օտարումը և ծրագրի ազդեցությունը հնարավորինս նվազագույնի հասցնելու համար, բ) խուսափել ֆիզիկական տեղահանումից, ինչպես նաև գ) օգտագործել ոչ արոտավայրերի նշանակության պետական կամ համայնքային հողերը, որոնք հնարավորինս զերծ են կառուցապատումից կամ մասնավոր օգտագործման հնարավորություններից:

9. Ծրագրի հողի ընդհանուր պահանջը հստակեցվում է, քանի որ Ծրագրի ոչ բոլոր բաղադրիչների չափերն են հայտնի (հատկապես ժամանակավոր հողերի առնչությամբ), ինչպես օրինակ՝ տեղակայման վայրերը, շինարարական ճամբարները և հանքերի տեղամասերը: Դրանք կորոշվեն մշակման ընթացքում կամ Շինարարական կապալառուի կողմից ՏԾ-ի իրականացման սկզբում: Այս հողերը ենթակա չեն օտարման:

10. Համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-ծրագիր 4-ի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» թիվ 981-Ն որոշման հավելված 1-ի, ծրագրի շրջանակներում ազդեցության են ենթակա ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան և Քաջարան համայնքների 14 բնակավայր և 566 հողակտոր:

9. ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐ

11. ՀՕՏԾ-ում ներառված միջոցառումների միջոցով հատուկ ուշադրություն է պետք դարձնել ոչ բարենպաստ պայմաններում գտնվող մարդկանց և խոցելի խմբերի (հողի նկատմամբ գրանցված իրավունք չունեցող հողօգտագործողներ, աղքատներ, կանանց կողմից ղեկավարվող տնտեսություններ, ծերեր և հաշմանդամներ) կարիքների բացահայտմանն ու դրանք հաշվի առնելուն և, ֆինանսական փոխհատուցումից և օժանդակությունից բացի, պետք է փորձել բարելավել նրանց ապրուստի միջոցները:

7. ՏԾ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

12. ՏԾ մշակման գործողությունները կազմում են Ծրագրի նախապատրաստական փուլի անբաժանելի մաս՝ սկսած ՀՕՏ նախնական ուսումնասիրության աշխատանքներից և վերջացրած նախագծի վրա հիմնված իրականացման ենթակա ՏԾ-ով: ՏԾ-ի պատրաստման ընթացակարգը հետևյալն է.

1) ճանապարհների ուղեգծման և լայնական կտրվածքների նախնական նախագծի կազմումից հետո կիրականացվի նախնական ուսումնասիրություն՝ ազդեցության ենթակա սեփականությունը և դրա սեփականատերերին ու օգտագործողներին բացահայտելու նպատակով: Այս քայլը նախնական իրականացվեց 2016թ.-ին, երբ ծրագրի համար կազմվեց նախնական ՀՕՏԾ-ն: Այս նախնական ՀՕՏԾ-ն կօգտագործվի այն չափով, որքանով դա տեղին է Ծրագրի նախագծային վերջին տվյալների վրա

հիմնված ՏԾ-ի առաջին նախագծի պատրաստման համար:

2) Նշված հետազոտության և ճանապարհի հաստատված մանրամասն նախագծի հիման վրա ՀՀ կառավարությունը որոշում է ընդունում Ծրագրի ազդեցության ենթակա հողամասերի ազդակիր մասերի նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին:

3) ՀՀ կառավարության որոշումից հետո ձեռքբերողի՝ ՀՀ-ի անուկից հանդես եկող ՃԴ-ի կողմից վարձած Ծրագիրը նախապատրաստող խորհրդատուները կիրականացնեն դաշտային մանրամասն հետազոտություններ, որոնք ներառում են 100% ազդակիր (օտարվող) հողերի և դրա վրա առկա գույքի մանրամասն չափագրման հետազոտություն (ՎՉՀ), բոլոր (100%) ԱԵՏՏ-երի և ԱԵԱ-երի մարդահամար, ինչպես նաև անկախ և որակավորված գնահատողների կողմից ազդեցության (օտարման) ենթակա ամբողջ գույքի և բարելավումների գնահատում՝ փոխհատուցման և կենսամիջոցների վերականգնման ամփոփ բյուջեի կազմման նպատակով: Մարդահամարի երկրորդ նպատակն է բացահայտել լրացուցիչ աջակցության կարիք ունեցող բնակչության խոցելի և ռիսկային խմբերին՝ ՏԾ-ի բյուջեի մեջ ներառելու համար:

4) Վարկատուների պահանջներին համապատասխանելու նպատակով Ծրագրի նախապատրաստման խորհրդատուները կիրականացնեն սոցիալ-տնտեսական ուսումնասիրություն (ՍՏՈՒ) ԱԵՏՏ 25% հետ: ՍՏՈՒ-ն պետք է պարունակի ազդեցության ենթակա բնակչության բոլոր հիմնական սոցիալ-տնտեսական առանձնահատկությունների բնութագրերը (կրթամակարդակը, կենսամակարդակի ապահովման ձևերը և եկամտի աղբյուրները, աղքատության/եկամտի մակարդակները, ինչպես նաև բնակելի տան տեսակը, շինությունների և հողի սեփականության ձևը), որոնք հետագայում կհանդիսանան ՏԾ իրականացման գնահատման չափորոշիչներ:

5) Այս հետազոտությունների հիման վրա կմշակվի ՏԾ-ը: Հետազոտությունների ընթացքում բոլոր ԱԵՏՏ-երը մանրամասնորեն կտեղեկացվեն ՏԾ-ով նախատեսված բոլոր պայմանների և միջոցառումների վերաբերյալ՝ ներառյալ ծրագրի ազդեցությունները, փոխհատուցման չափերը, կենսամիջոցների վերականգնման միջոցառումները և ժամանակացույցը: ՎՉՀ-ն, ԱԵԱ ցուցակագրումը և փոխհատուցման գումարները կվերանայվեն (օրինակ՝ նախագծի վերանայման դեպքում) և, անհրաժեշտության դեպքում, կթարմացվեն աշխատանքային նախագծի ամփոփումից և հաստատումից հետո:

13. **ՏԾ մշակում**՝ Ծրագրի նախնական ՏԾ-ն մշակվել է 2016թ.-ին: Դրա հիման վրա (որքանով դա տեղին է) և վերջին տեղեկատվության հիման վրա կմշակվի ծրագրի ՏԾ-ն ՎՉԵԲ-ի, ԱՉԲ-ի և ԵՆԲ-ի տարաբնակեցման պահանջներին համապատասխան: ՏԾ-ի իրականացումը համակարգելու է լիազորված պետական մարմինը, որը ՀՀ կառավարության հանրության գերակա շահ ճանաչելու մասին որոշմամբ նշանակվել է որպես տվյալ օտարման գործառույթների իրականացումը համակարգող և սեփականության օտարման գործառույթների իրականացման համար պատասխանատու պետական մարմին (այսուհետ՝ Լիազոր մարմին): ՏԾ-ի մշակումը և իրականացումը կիրականացվի հետևյալ ընթացակարգի համաձայն (լրացուցիչ մանրամասները ներկայացված են «ԺԴ» բաժնում)։

1) ՏԾ մշակում՝ այս փուլը պետք է սկսի ծրագրի ՏԾ-ն ՀՀ կառավարության կողմից հաստատելուց հետո, որը սպասվում է 2023թ.-ի 1-ին եռամսյակում: (ՏԾ-ի տիպային բովանդակության համար, տես՝ հավելված «Ա»):

2) ՏԾ վերանայում և վերջնականացում՝ այս փուլն իրականացվելու է առկա աշխատանքային մանրամասն նախագծի տեխնիկական վերանայման ընթացքում և ներառելու է ազդեցությունների և ԱԵԱ-երի մասին տվյալների հնարավոր թարմացումը, փոխհատուցման դրույքաչափերի հնարավոր վերանայումները և օրինականացման ենթակա ԱԵԱ-երի կարգավիճակի օրինականացման աշխատանքները: ՏԾ-ի վերջնականացումը կարող է ավարտվել 2023թ.-ի 2-րդ եռամսյակում: ՎՉԵԲ-ի, ԱՉԲ-ի և ԵՆԲ-ի, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից վերջնական ՏԾ-ն հաստատվելուց և հրապարակվելուց հետո, շինարարական աշխատանքների համար պայմանագրերը կկնքվեն: Հաստատման գործընթացը կարող է տևել մի քանի ամիս և ավարտվել 2023 թվականի 3-րդ եռամսյակում:

3) ՏԾ իրականացում՝ այս փուլը կսկսվի վերջնական ՏԾ-ի հաստատումից հետո և կավարտվի բոլոր ԱԵԱ-երի պատշաճ փոխհատուցման և կենսամիջոցների

վերականգնման օժանդակությունների տրամադրմամբ և ազդակիր հողերի օտարմամբ: Ժամկետները կհամապատասխանեն 2024 թվականի կեսերին:

4) Շինարարական աշխատանքների իրականացում` շինարարական աշխատանքները կսկսվեն միայն ԱԵԱ-երին փոխհատուցման տրամադրումից, ճԴ-ի և մշտադիտարկման խորհրդատուի կողմից համապատասխանության վերաբերյալ հաշվետվության ՎՉԵԲ, ԱԶԲ և ԵՆԲ կողմից հաստատումից հետո:

Ե. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԻՄՔԵՐԸ

Ե.1 Հողերի օտարման և տարաբնակեցման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը

14. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ` Սահմանադրություն) 60-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով` միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

15. Հողի օտարման և փոխհատուցման գործընթացը և դրա հետ կապված մի շարք իրավահարաբերություններ կարգավորվում են նաև ՀՀ իրավական այլ ակտերով`

- 1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք,
- 2) Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք,
- 3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք,
- 4) Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք,
- 5) «Հանրության գերակա շահերը ապահովելու նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,
- 6) «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,
- 7) «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,
- 8) ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 8-ի «Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի գնահատման ստանդարտները հաստատելու մասին» թիվ 955-Ն որոշում:

16. ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ, 104-րդ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածներն ամրագրում են, որ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով հողամասի սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով` միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

17. Ելնելով ՀՀ Սահմանադրության և վերոհիշյալ իրավական ակտերի պահանջներից` Հայաստանի Հանրապետության կողմից ընդունվել է օտարման ու փոխհատուցման գործընթացը կարգավորող հիմնական օրենք` «Հանրության գերակա շահերը ապահովելու նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը (այսուհետ` Օրենք), որը սահմանում է հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման հիմքը, կարգը, օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման տրման կարգը, հանրության գերակա շահի նպատակները, սկզբունքները և հանրային շահը գերակա ճանաչելու կարգը:

18. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման սահմանադրական պայմաններն են` օտարումը պետք է իրականացվի օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով, ինչպես նաև օտարվող սեփականության դիմաց պետք է տրվի նախնական և համարժեք փոխհատուցում:

19. Վերոհիշյալ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հանրության գերակա շահի սկզբունքները, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը` գերակա հանրային շահով հետապնդվող հնարավոր նպատակները:

20. Օրենքն ամրագրում է այն հիմնարար մոտեցումը, համաձայն որի` հանրային շահը պետք է գերակա լինի օտարվող գույքի սեփականատիրոջ շահերից, հանրային գերակա շահի արդյունավետ իրականացումը հնարավոր չէ ապահովել առանց այդ սեփականության օտարման, սեփականության օտարումը չպետք է չհիմնավորված վնաս

պատճառի սեփականատիրոջը, հանրային շահը գերակա պետք է ճանաչվի կառավարության որոշմամբ և բացառիկ հանրային շահի առկայության փաստը կարող է վիճարկվել դատական կարգով:

21. Գերակա հանրային շահը կարող է հետապնդել հետևյալ նպատակները՝

1) պետության պաշտպանության, պետության ու հասարակության անվտանգության ապահովումը.

2) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման ապահովումը.

3) միջազգային և հանրապետական նշանակության պատմության և մշակութային արժեքների կամ հուշարձանների, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման կամ պահպանության ապահովումը.

4) շրջակա միջավայրի պահպանության ապահովումը.

5) կրթության, առողջության, սպորտի, ինչպես նաև գիտության կամ մշակույթի զարգացման ապահովումը.

6) էներգետիկայի, հեռահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, ջերմամատակարարման, քաղաքաշինական, ընդերքի հետախուզման, ընդերքօգտագործման, տրանսպորտի, հաղորդակցության ուղիների կամ բնակավայրերի ենթակառուցվածքների զարգացման բնագավառում համապետական կամ համայնքային կամ միջհամայնքային կարևոր նշանակություն ունեցող ծրագրերի իրականացման ապահովումը.

7) անձանց կյանքի, առողջության կամ սեփականության պաշտպանությունը.

8) արտակարգ իրավիճակների կանխումը, արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցումը, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացումը:

22. Օրենքը նաև կարգավորում է օտարվող սեփականության օտարման, փոխհատուցման պայմանները և այն որոշելու կարգը:

23. Մասնավորապես, Օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է, որ հողամասի օտարման դեպքում դրա հետ օտարման են ենթակա նաև հողամասի վրա գտնվող անշարժ գույքը (շենքեր, շինություններ, այլ ամրացված գույք և այլն), ինչպես նաև հողամասի վրա գտնվող այլ բարելավումները: Իսկ շենքի կամ շինության օտարման դեպքում, դրա հետ միասին օտարման են ենթակա նաև այդ շենքի կամ շինության սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը:

24. «Հանրության գերակա շահերը ապահովելու նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը տարածվում է միայն ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքներին (այսուհետ՝ սեփականատերեր) սեփականության իրավունքով պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստացած կամ հաշվառված սեփականության իրավունքի բոլոր օբյեկտների (անշարժ կամ շարժական գույք, գույքային իրավունքներ, արժեթղթեր և այլն) վրա (այսուհետ՝ օտարվող սեփականություն) և կարգավորում է օտարման և փոխհատուցման հիմնական հարաբերությունները: Մասնավորապես.

1) Հանրության գերակա շահ ճանաչելու մասին կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո կառավարության սահմանված կարգով և ժամկետներում լիազոր մարմինը կազմում է օտարվող սեփականության նկարագրության արձանագրությունը, որին իրավունք ունեն մասնակցելու ձեռքբերողը, սեփականատերը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողները, եթե սեփականության նախնական ուսումնասիրության ժամանակ արձանագրություն չի կազմվել: Օտարվող սեփականության նկարագրության արձանագրության մեկ օրինակը, այն կազմվելուց հետո ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում, պատշաճ ձևով ուղարկվում է սեփականատիրոջը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող անձանց, որոնք իրավունք ունեն արձանագրությունն ստանալուց հետո՝ տասն օրվա ընթացքում, այն բողոքարկել լիազոր մարմին կամ դատարան,

2) Օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը վճարվում է համարժեք փոխհատուցում: Համարժեք է համարվում օտարվող գույքի շուկայական արժեքից տասնհինգ տոկոս ավելի գումարը: Անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների շուկայական արժեքի գնահատումն իրականացվում է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» (2005 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՕ-189-Ն) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

3) Սեփականությունը կարող է օտարվել՝ ձեռքբերողի և օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջ միջև կնքվող պայմանագրի համաձայն: Այս դեպքում կողմերի համաձայնությամբ են միայն որոշվում օտարվող սեփականության դիմաց տրվող համարժեք փոխհատուցման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմաններն ու կողմերի պատասխանատվությունը,

4) Եթե օտարման պայմանագիրը, այն ուղարկելուց հետո երեք ամսվա ընթացքում չի կնքվում, ապա ձեռքբերողը պարտավոր է մեկ ամսվա ընթացքում սեփականության օտարման դիմաց փոխհատուցման ենթակա գումարը հանձնել դատարանի կամ նոտարի դեպոզիտ հաշիվ՝ այդ մասին պատշաճ ձևով տեղեկացնելով օտարվող սեփականության սեփականատիրոջը և օտարվող սեփականության նկատմամբ ձեռքբերողին հայտնի գույքային իրավունքներ ունեցողներին: Փոխհատուցման գումարի չափի հաշվարկը պետք է կատարված լինի այն դեպոզիտ հանձնելուց ոչ շուտ, քան մեկ շաբաթ առաջվա դրությամբ,

5) Եթե ձեռքբերողի կողմից փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելուց հետո՝ յոթ օրվա ընթացքում, չի կնքվում օտարման պայմանագիրը կամ նույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն սեփականությունը չի օտարվում, ապա ձեռքբերողը պարտավոր է մեկամսյա ժամկետում սեփականության օտարման հայցով դիմել դատարան: Այս դեպքում դատարանի քննարկման առարկա կարող է լինել միայն փոխհատուցման չափի հարցը:

25. Օրենքը սահմանում է հանրության գերակա շահերի ապահովման նպատակով օտարվող սեփականության սեփականատիրոջ իրավունքները և երաշխիքները: Օրենքը մասնավորապես սահմանում է, որ օտարվող սեփականության սեփականատերը, մինչև դրա օտարումը կամ օտարումից ծագող իրավունքների պետական գրանցումն իրավունք ունի այն տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու, ինչպես նաև կատարելու միայն այնպիսի բարելավումներ, որոնք ապահովում են տվյալ սեփականության օգտագործումն իր նշանակությանը համապատասխան:

26. Օրենքը որոշակի սահմանափակումներ է նախատեսում օտարվող սեփականության նկատմամբ, որը կառավարության որոշմամբ սահմանած կարգով կազմված օտարվող սեփականության նկարագրության արձանագրությունը կազմելու օրն է: Նշված օրվանից հետո արձանագրվածից ավելի օտարվող սեփականության վրա կատարված բարելավումների, ինչպես նաև օտարման ենթակա սեփականության նկատմամբ ծագած ծանրաբեռնվածությունների կամ երրորդ անձանց տրված կամ նրանց կողմից դրա նկատմամբ ստացած իրավունքների դիմաց փոխհատուցում չի տրվում:

Ե.2 Տարաբնակեցման նախապատրաստման և իրականացման սկզբունքները

27. Հարկադիր տարաբնակեցման վերաբերյալ վարկատուների չափանիշները հիմնված է հետևյալ սկզբունքների վրա՝

1) հարկադիր տարաբնակեցումից պետք է հնարավորինս խուսափել կամ, եթե դա հնարավոր չէ, առնվազն այն հասցնել նվազագույնի.

2) փոխհատուցման և կենսամիջոցների վերականգնման օժանդակության չափը պետք է ապահովի, որ ԱԵԱ-ների կենսամակարդակը բարելավվի կամ առնվազն վերականգնվի Ծրագրից ունեցած կենսամակարդակը.

3) բնեղեն փոխհատուցումը (հող՝ հողի դիմաց) առաջնահերթություն է: Ազդակիր հողի կամ ակտիվների համար փոխհատուցումը լրիվ փոխարինման արժեքով բնեղենային փոխհատուցման փոխարեն, կարող է կատարվել միայն որոշ դեպքերում.

4) ԱԵԱ-երին պետք է լիարժեք տեղեկատվություն և խորհրդատվություն տրամադրվի ՀՕՏ փոխհատուցման և կենսամիջոցների վերականգնման տարբերակների, ինչպես նաև ՏԾ/ՏԾ ներքո փոխհատուցվող իրավունքների մասին.

5) փոխհատուցումը պետք է իրականացվի կանանց և տղամարդկանց իրավահավասարության սկզբունքով.

6) իրավական կարգավիճակի բացակայությունը չպետք է խոչընդոտ հանդիսանա փոխհատուցման և կենսամիջոցների վերականգնման միջոցառումների իրականացման համար.

7) առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի կանանց գլխավորությամբ տնային տնտեսություններին և այլ խոցելի խմբերին, և պետք է ցուցաբերվի համապատասխան աջակցություն՝ օգնելու նրանց բարելավել իրենց կենսամակարդակը.

8) ՀՕՏ պետք է ընկալել և իրագործել որպես ծրագրի մաս, և փոխհատուցման և կենսամիջոցների վերականգնման ծախսերը պետք է ներառվեն ծրագրի ծախսերի և օգուտների մեջ.

9) փոխհատուցումը ու տարաբնակեցման հատկացումները պետք է ամբողջությամբ տրամադրվեն մինչև և շինարարության սկսելը:

Ե.3 ՀՕՏ վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համեմատությունը վարկատուների չափանիշներ հետ

28. Հայաստանի Հանրապետության օրենքների ու կանոնակարգերի և վարկատուների չափանիշների միջև առկա տարբերությունները ներկայացված են ստորև բերված Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1: ՀՕՏ վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համեմատությունը վարկատուների չափանիշների հետ

ՀՀ օրենսդրությունը	Կիրառելի չափանիշներ	Առաջարկվող միջոցներ՝ բացը լրացնելու համար
<p>1. Օրենքի գործողությունը տարածվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքներին (այսուհետ՝ սեփականատերեր) սեփականության իրավունքով պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստացած կամ հաշվառված սեփականության իրավունքի բոլոր օբյեկտների (անշարժ կամ շարժական գույք, գույքային իրավունքներ, արժեթղթեր և այլն) վրա (օտարվող սեփականություն):</p>	<p>1. Հողի սեփականության վերաբերյալ իրավական կարգավիճակի բացակայությունը պետք է խոչընդոտի փոխհատուցման գործընթացի վերականգնման իրականացմանը: Իրավական կարգավիճակ չունեցող հողօգտագործները նույնպես պետք է ստանան փոխհատուցում հողից բացի այլ կորցրած ակտիվների համար (օրինակ՝ մշակաբույսեր, տնկարկներ, կառույցներ և հողի վրա կատարված այլ բարելավումներ, եկամտի աղբյուրների կորուստ և ապրուստի այլ միջոցներ):</p> <p>Ծրագրային տարածքում կարող են լինել երեք տեսակի տեղահանված անձիք՝</p> <p>1) ամբողջությամբ կամ մասամբ ազդակիր հողի հանդեպ ֆորմալ (գրանցված) իրավունքներ ունեցող անձիք,</p> <p>2) ազդակիր հողի հանդեպ չունեն ֆորմալ (գրանցված) իրավունքներ, բայց ունեն այդ հողի հանդեպ ներպետական օրենսդրությամբ ճանաչված կամ ճանաչելի օրինական ակնկալիքներ,</p> <p>3) ազդակիր հողի նկատմամբ չունեն ֆորմալ (օրինական) իրավունքներ և ներպետական</p>	<p>1. ՏՀ-ն սահմանում է լրացուցիչ միջոցառումներ (ինչպես նախատեսված է Իրավունքների սխեմայում)՝ չգրանցված և հողօգտագործողների հետ կապված բացը լրացնելու և վարկատուի պահանջները բավարարելու համար:</p>

ՀՀ օրենսդրությունը	Կիրառելի չափանիշներ	Առաջարկվող միջոցներ՝ բացը լրացնելու համար
	<p>օրենսդրությամբ ճանաչված կամ ճանաչելի ակնկալիքներ: Հարկադիր վերաբնակեցման պահանջները կիրառելի են տեղահանված անձանց բոլոր երեք տեսակների նկատմամբ:</p>	
<p>2. Փոխհատուցում նախատեսվում է հրավումբների պետական գրանցում ստացած անշարժ գույքի՝ շենքերի, շինությունների համար: Ինքնակամ կառույցների համար փոխհատուցում չի տրամադրվում:</p>	<p>2. Գրանցում չունեցող գույքերի (շինություններ և հողի վրա կատարված այլ բարելավումներ) դիմաց նույնպես տրամադրվում է փոխհատուցում հիմնվելով փոխարինման լրիվ արժեքի վրա:</p>	<p>2. ՏՇ-ն համալրվում է լրացուցիչ միջոցներով (ինչպես նախատեսված է Իրավումբների սխեմայում)՝ չգրանցված հողօգտագործողների հետ կապված բացը լրացնելու և վարկատուների պահանջները բավարարելու համար:</p>
<p>3. Բերքի կորստի դիմաց առանձին փոխհատուցումը չի հաշվարկվում:</p>	<p>3. Բերքի կորստի դիմաց առանձին փոխհատուցում է տրամադրվում բոլոր ԱԵԱ-ին՝ կործրած բերքի շուկայական արժեքով:</p>	<p>3. Վարկատուների ստանդարտները կկիրառվեն: Բերքի կորուստների փոխհատուցումը կտրամադրվի բոլոր ԱԵԱ-երին փոխարինման արժեքով՝ համաձայն սույն փաստաթղթի:</p>
<p>4. Օտարվող հողի համար տրվում է համարժեք փոխհատուցում, որը օտարվող գույքի շուկայական արժեքից տասնհինգ տոկոս ավելի գումարն է: Շուկայական արժեքը անշարժ գույքի վաճառքի առավել հավանական գինն է, որը անշարժ գույքի գնահատման օբյեկտների համար կարող է որոշվել անկախ որակավորված գնահատողի կողմից՝ անշարժ գույքի գնահատմամբ:</p> <p>Եթե օտարվող սեփականության համար առկա չէ համապատասխան բաց և մրցակցային շուկա, ապա սեփականության շուկայական արժեքը որոշվում է այնպիսի հաշվարկման մեթոդով, որն արդարացի կհամարի դատարանը:</p>	<p>4. Գույքի փոխհատուցման չափը հաշվարկվում է փոխարինման լրիվ արժեքով:</p>	<p>4. Հողատարածքը փոխհատուցվում է փոխարինման լրիվ արժեքով, որը համարժեք է շուկայական արժեքին գումարած 15%:</p> <p>Շենքերը և շինությունները (բացառությամբ ինքնակամ շինությունների) փոխհատուցվում են փոխարինման լրիվ արժեքով + 15%, առանց մաշվածության/գործարքի ծախսերի և ապամոտաժված կյուբերի:</p> <p>Փոխարինման արժեքը որոշվում է ՏՇ-ի համաձայն:</p> <p>Ինքնակամ շինությունները կփոխհատուցվեն սույն ՏՇ-ին համապատասխան:</p>
<p>5. Բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշումը, օտարվող սեփականության նկարագրության արձանագրության օրինակը, սեփականության օտարման պայմանագրի նախագիծը ուղարկվում է հողի սեփականատերերին և գույքային իրավումբներ ունեցողներին: Ձեռքբերողը տեղեկություն է տրամադրում նաև փոխհատուցման գումարը դատարանի կամ նոտարի դեպոզիտ հաշվին հանձնելու վերաբերյալ: Իսկ ձեռքբերողի կողմից օտարման ենթակա գույքի</p>	<p>5. Բովանդակային խորհրդատվություն ծրագրի սկզբում և իրականացման ընթացքում: Ազդեցության գնահատման, շահագրգիռներին ներգրավման և բողոքների լուծման գործընթացների, գույքագրման, փոխհատուցման արժեքների, փոխհատուցման իրավումբների և ԱԵԱ/ԱԵՏՏ-երին ֆինանսական օժանդակության գումարների վերաբերյալ տեղեկատվության իրապարակում:</p>	<p>5. ՏՇ-ով սահմանվում են լրացուցիչ միջոցներ, ինչպիսիք են հանրային խորհրդակցությունները և տեղեկատվության բացահայտման միջոցառումները (ինչպես նախատեսված է սույն փաստաթղթում)՝ վարկատուների պահանջները բավարարելու համար:</p>

ԳՅ օրենսդրությունը	Կիրառելի չափանիշներ	Առաջարկվող միջոցներ՝ բացը լրացնելու համար
<p>Նախնական ուսումնասիրությունն իրականացնելու դեպքում՝ գույքի սեփականատիրոջը, տիրապետողին, օգտագործողին լիարժեք տեղեկություններ պետք է տրամադրվեն կատարվող գործողությունների իմաստի և նշանակության, այդ գործողությունների իրավական հետևանքների մասին՝ այն սկսելուց առաջ:</p>		
<p>6. Խիստ ազդեցության ենթարկված անձանց և խոցելի խմբերի համար կորցրած եկամտի կամ ապրուստի միջոցների վերականգնման միջոցառումներ, փոխհատուցման կամ տարաբնակեցման ծախսեր նախատեսված չեն:</p>	<p>6. Կարկատուների չափանիշներով պահանջվում է մեղմացող միջոցառումների իրականացում և եկամտի/ապրուստի միջոցների կորստի վերականգնում, տեղափոխման աջակցություն տարաբնակեցման գործընթացի ընթացքում, ինչպես նաև տեղահանված անառքատ բնակչության և այլ խոցելի խմբերի (ներառյալ կանանց, կենսաթոշակառուներին և հաշմանդամներին) կենսամակարդակի բարելավում:</p>	<p>6. Համաձայն Կարկատուների չափանիշների՝ կուլյնականացվեն խոցելի անձինք, և ՏՇ պահանջներին համապատասխան կիրականացվեն կենսամիջոցների վերականգնման միջոցառումներ:</p>
<p>7. Օտարման գործընթացի բոլոր փուլերում դիմումների, բողոքների, առարկությունների և առաջարկությունների ներկայացում ձեռքբերողին և լիազոր մարմնին, ինչպես նաև բողոքարկում դատարան: ԳՅ Սահմանադրության հոդված 63-ի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:</p>	<p>7. Հաստատել բողոքների լուծման մեխանիզմ՝ ազդեցության ենթակա անձանց բողոքներն արձանագրելու և դրանց լուծման գործընթացը ոլորին դարձնելու համար:</p>	<p>7. ՏՇ-ն լրացվում է լրացուցիչ միջոցներով (ինչպես նախատեսված է սույն փաստաթղթում)՝ Կարկատուների պահանջները բավարարելու համար: Մշակվել է բողոքների լուծման մեխանիզմ՝ տարաբնակեցման վերաբերյալ ԱԵԿ-ի բողոքները ստանալու և լուծումը արագացնելու համար, և այն կիրառարակվի որպես սույն ՏՇ մաս: Բողոքների լուծման ընդհանուր մեխանիզմը կիրառարակվի որպես ծրագրի շահագրգիռ կողմերի ներգրավման պլանի մաս: Բողոքների լուծման մեխանիզմը չի սահմանափակում դատարան դիմելու իրավունքը:</p>
<p>8. Գույքի սեփականատերերին տրվող փոխհատուցումը նվազեցվում է գույքային իրավունքների (բացի կադաստրի կոմիտեում գրանցված սեփականության իրավունքից) տիրապետողներին դրանց դիմաց տրվող փոխհատուցման գումարի չափով:</p>	<p>8. Կիրառելի չափանիշները առանձին չեն անրադառնում գույքային իրավունքներին, սակայն այդ չափանիշների իմաստով գույքային իրավունքը համարվում է ակտիվ, որի դիմաց փոխհատուցման չափը հաշվարկվում է փոխարինման լրիվ արժեքով:</p>	<p>8. Գույքային իրավունքներ ունեցողները կփոխհատուցվեն սույն ՏՇ-ի իրավունքների սխեմային համապատասխան: Գույքի սեփականատերերին տրվող դրամական փոխհատուցումը չի նվազեցվի գույքային իրավունքների (բացի կադաստրի կոմիտեում գրանցված սեփականության իրավունքից) տիրապետողներին դրանց դիմաց տրվող փոխհատուցման գումարի չափով:</p>

ԳՅ օրենսդրությունը	Կիրառելի չափանիշներ	Առաջարկվող միջոցներ՝ բացը լրացնելու համար
<p>9. Օտարվող սեփականության նկարագրության արձանագրությունը կազմելու օրվանից հետո օտարվող սեփականության վրա (բացի տվյալ գույքի իր նշանակությանը համապատասխան օգտագործումն ապահովող բարելավումներից) ազդելի բարելավումները, ինչպես նաև օտարման սեփականության նկատմամբ ծագած ծանրաբեռնվածությունների կամ երրորդ անձանց տրված կամ նրանց կողմից դրա նկատմամբ ստացած իրավունքների դիմաց փոխհատուցում չի տրվում:</p>	<p>9. Անձինք, ովքեր զբաղեցնում են տարածքը վերջնաժամկետից հետո (օպորտունիստներ) փոխհատուցման կամ տարաբնակեցման օժանդակության որևէ այլ ձևի իրավունք չունեն: Վերջնաժամկետից հետո տնկված մշակաբույսերը և շինությունները փոխհատուցման ենթակա չեն:</p> <p>Այն ԱԵԱ, ում կարգավիճակը կարելի է օրինականացնել և իրավունքները վերականգնել իրավունք ունեն օրինական կարգավիճակ ստանան, և նրանց կորուստները պետք է ամբողջությամբ փոխհատուցվեն:</p> <p>ԱԵԱ-երին պետք է աջակցություն տրամադրվի իրավական կարգավիճակ ստանալու համար:</p>	<p>9. Վերջնաժամկետը նկարագրության արձանագրության կազմման ամսաթիվն է:</p>
<p>10. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում և (կամ) պաշտպանական գոտում գտնվող հաղորդակցողիները և այլ շինություններն ու հարմարանքները ճանապարհի վերակառուցման կամ նորոգման դեպքում պետք է տեղափոխվեն կամ վերակառուցվեն դրանց սեփականատիրոջ հաշվին:</p>	<p>10. Բոլոր այն միջոցառումները, որոնք նախատեսված են մեղմելու համար ԱԵԱ/ԱԵՏՏ-երի սեփականության կենսամակարդակի վրա Ծրագրի թողած բացասական որևէ ազդեցություն, որը ներառում է փոխհատուցումը, օժանդակությունը, վերաբնակեցումը և վնասված քանդված ենթակառուցվածքների, շենք, շինությունների վերականգնումը համարվում է տարաբնակեցում:</p>	<p>10. Բացը վերացնելու և վարկատուների պահանջները բավարարելու համար ՏԾ-ն և նախատեսում է՝ փոխհատուցման տրամադրում փոխարինման լրիվ արժեք գումարած 15%-ի չափով:</p> <p>Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցման տրամադրում շինության ազդեցության ենթակա հատվածի համար գումարած շինության վերանորոգման ծախսերը,, եթե շինության ոչ ազդակիր մասի հետագա օգտագործումը և շահագործումը տեխնիկապես հնարավոր է:</p>
<p>11. Ազգային օրենսդրությունը որևէ դրույթ չի նախատեսում ՏԾ իրականացման մշտադիտարկման գնահատման, ինչպես նաև ավարտական արտաքին աուդիտի համար:</p>	<p>11. Պահանջվում է պատշաճ և կանոնավոր ներքին մշտադիտարկում, գնահատում և հաշվետվությունների մշակում կենսամիջոցների վերականգնման և մեղմացման միջոցառումների վերաբերյալ: Կախված ծրագրի տարաբնակեցման մասշտաբից, պատվիրատուի համար կարող է նպատակահարմար լինել վարձել անկախ խորհրդատուի (երի), որը կանոնավոր մշտադիտարկում ու գնահատում կիրականացնի և կմշակի ՏԾ-ի ավարտի վերաբերյալ հաշվետվություն՝ ՏԾ դրույթների լիարժեք իրականացումը որոշելու համար: Անհրաժեշտության դեպքում պետք է ձեռնարկվեն ուղղիչ գործողություններ:</p>	<p>11. Ծրագրի իրականացման ընթացքում ՏԾ իրականացումը կենթարկվի ներքին մշտադիտարկման ճԴ-ի կողմից (ՅՕՏ խորհրդատուների աջակցությամբ): Խորհրդատուի անկախ մշտադիտարկումը պետք է համար, որ փոխհատուցման պահանջները բավարարված են և, որ ազդեցության ենթակա հողի սեփականատերերի/օգտագործողների ապրուստի միջոցները վերականգնվում կամ բարելավվում են: ՏԾ իրականացման ավարտից հետո անկախ փորձագետներին (կազմակերպություններին) կհանձնարարվի իրականացնել ավարտի/համապատասխանության աուդիտ:</p>

29. ՀՕՏ-ը վերաբերող ՀՀ օրենսդրության և վարկատուների չափանիշների պահանջների միջև կան որոշ սկզբունքային տարբերություններ: ՀՀ իրավական ակտերը հստակ չեն սահմանում, թե ինչպես պետք է իրականացվի ԱԵԱ-ի կենսամիջոցների վերականգնումը: ՀՀ օրենսդրության և վարկատուների պահանջների միջև հիմնական տարբերություններից մեկն էլ այն է, որ համաձայն վարկատուների չափանիշների փոխհատուցման կամ առնվազն վերականգնման իրավունք ունեն թե գրանցված (օրինական) իրավունքներ ունեցող, և թե չունեցող անձինք, ինչպես նաև հաշվառված և չհաշվառված անձինք: ՀՀ օրենսդրության և վարկատուների պահանջների այս և այլ տարբերությունները վերացնելու նպատակով Ծրագրի համար մշակվել է սույն ՏՇ-ն՝ ապահովելով ազդեցության ենթակա բոլոր օբյեկտների համար փոխարինման արժեքին համարժեք փոխհատուցում, իսկ իրավական կարգավիճակ չունեցող հողօգտագործողների, չգրանցված ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողների ու սեփականատերերի և այլ հնարավոր ազդակիր անձանց համար՝ առնվազն կենսամիջոցների վերականգնում: ՏՇ-ն նախատեսում է նաև լրացուցիչ փոխհատուցման և կենսամիջոցների վերականգնման փաթեթներ այն ԱԵԱ համար, ովքեր վերաբնակեցվելու են, քանի որ նրանք համարվում են խոցելի և խիստ ազդեցություն կրող ԱԵԱ-ներ:

30. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով հողերը պետք է օտարվեն հանրության գերակա շահ ճանաչելու շրջանակներում: Ֆիզիկական անձանց սեփականությունը հանդիսացող հողն առաջին հերթին անհրաժեշտ է փորձել օտարել ազդեցության ենթարկված անձանց հետ բանակցությունների միջոցով: Այնուամենայնիվ, եթե չի հաջողվում օտարել գույքն օրենքով սահմանված ժամկետում, ապա պետք է սկսել հարկադիր (դատական կարգով) օտարման գործընթացը՝ օրենքով սահմանված կարգով: Ծրագրի շրջանակներում կիրառելի է վարկատուների հարկադիր վերաբնակեցման քաղաքականությունը:

Ե.4 ՀՕՏ սույն ծրագրի համար որդեգրված սկզբունքները և իրավունքները

31. Հայաստանի Հանրապետության օրենսդրության, վարկատուների չափանիշների ու համապատասխանության պահանջների հիման վրա սույն Ծրագրի համար մշակվել են հարկադիր տարաբնակեցման հիմնական սկզբունքները, որոնք հետևյալն են՝

1) հողի օտարումից և հարկադիր տարաբնակեցման այլ հետևանքներից պետք է հնարավորինս խուսափել, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա դրանք հասցնել նվազագույնի՝ ուսումնասիրելով Ծրագրի նախագծերի բոլոր այլընտրանքային կենսունակ տարբերակները.

2) եթե հնարավոր չէ խուսափել հողերի օտարումից և տարաբնակեցումից, ապա անհրաժեշտ է մշակել համապատասխան ժամկետնորով ՏԾ.

3) ազդակիր ակտիվների դիմաց ԱԵԱ-երին պետք է տրամադրիվի փոխհատուցում փոխարինման լրիվ արժեքով (համաձայն սույն ՏՇ-ի իրավունքների սխեմայի), ինչպես նաև աջակցություն՝ ծրագրից առաջ ունեցած կենսամակարդակը բարելավելու կամ առնվազն վերականգնելու համար.

4) պետք է ապահովել ԱԵԱ-ին փոխհատուցման իրավունքների վերաբերյալ խորհրդատվություն և տարաբնակեցման վերաբերյալ տեղեկությունների տրամադրում, ինչպես նաև ենթածրագրերի պլանավորմանն ու իրականացմանը նրանց մասնակցությունը.

5) խոցելի և խիստ ազդեցության ենթարկված անձանց պետք է նույնականացնել և ցուցաբերել հատուկ աջակցություն.

6) օտարվող հողի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունք չունեցող ԱԵԱ-երը (օրինակ՝ ինքնակամ շենք կամ շինություն կառուցած ԱԵԱ-երը, որոնք առանց գրանցված իրավունքների իրավական կարգավիճակ չունեցող բնակիչներ են) պետք է հողի դիմաց փոխհատուցման փոխարեն ստանան ապրուստի միջոցների վերականգնման օժանդակություն, ինչպես նաև լիարժեք փոխհատուցում հողից բացի այլ կորուստների դիմաց (մշակաբույսեր, շինություններ և այլ բարելավումներ)՝ ինչպես սահմանված է ՏՇ իրավունքների սխեմայով.

7) այն ԱԵԱ-ները, ում կարգավիճակը կարելի է օրինականացնել և իրավունքները

վերականգնել, իրավունք ունեն օրինական կարգավիճակ ստանան, և նրանց կորուստները պետք է ամբողջությամբ փոխհատուցվեն.

8) պետք է տրամադրվի իրավունքը, եկամուտը և ապրուստի միջոցը օրինական կարգով վերականգնելու հնարավորություն.

9) ՏԾ-ն և դրան վերաբերող փաստաթղթերը պետք է ԱԵԱ-ին տրամադրվեն հայերեն լեզվով.

10) փոխհատուցման վճարումը, տարաբնակեցման աջակցությունը և կենսամիջոցների վերականգնման օժանդակությունը (որքանով կիրառելի է) պետք է ամբողջությամբ տրամադրվեն նախքան կապալառուին շինարարության համար նախատեսված հողամասերի (շինհրապարակի) մուտքի իրավունքի տրամադրումը և նախքան շինարարական աշխատանքները ֆիզիկապես սկսելը: Կենսամիջոցների վերականգնման միջոցառումները կարող են լինել երկարաժամկետ և իրականացվեն շինարարության փուլում.

11) պետք է սահմանվեն բողոքների քննարկման համապատասխան մեխանիզմներ, որոնցով կլուծվեն ԱԵԱ-երի բարձրացրած բոլոր բողոքները:

2. ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՓՈԽՋԱՏՈՒՅՈՒՄ ԵՎ ԿԵՆՍԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

32. Ծրագրի շրջանակներում ՀՕՏ առաջադրանքները պետք է իրականացվեն փոխհատուցում և կենսամիջոցների վերականգնման օժանդակություն ստանալու չափանիշներին համապատասխան, որը հնարավորինս պետք է համահունչ լինի Կիրառելի չափանիշների հետ: Փոխարինման լրիվ արժեքով փոխհատուցումը որոշվում է գույքի շուկայական արժեքի հիման վրա՝ ներառյալ բոլոր կիրառելի գործարքային ծախսերը, տեղափոխման և վերականգնման ծախսերը և այլ կիրառելի վճարները և հատուցումները, որոնք ի հայտ են գալիս ծրագրի ազդեցության հետևանքով: Այն դեպքերում, երբ գույքի կադաստրային արժեքը² գերազանցում է շուկայական արժեքին, հիմք է ընդունվում կադաստրային արժեքը: Իրավունքների սխեմայի նկարագիրը ներկայացված է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

² Անշարժ գույքի կադաստրային արժեքը որոշվում է ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից

Աղյուսակ 2՝ Իրավունքների սխեմա

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում և կենսամիջոցների վերականգնման օժանդակություններ ստանալու իրավունքները
Փոխհատուցում ստանալու իրավունքները			
<p>1. Հողի կորուստ</p>	<p>ԱԵԱ-ներ, որոնք կորցնում են իրենց հողամասը (ցանկացած նշանակության) կամ դրա մի մասը՝ անկախ ազդեցության չափից</p>	<p>Սեփականատերեր</p>	<p>Դրամական փոխհատուցում փոխարինման լրիվ արժեքով՝ գնահատված շուկայական արժեք գումարած 15%-ի չափով:</p> <p>Եթե ԱԵՏՏ-ի ապրուստը հիմնված է հողի վրա, առկա է հավասար և համապատասխան որակի հող և պահանջվում է սեփականատիրոջ կողմից, ապա կտրամադրվի հավասար բնութագրերով փոխարինող հողատարածք (հաշվարկված փոխհատուցման սահմաններում՝ ինչպես նշված է վերևում): Այս դեպքում ձեռքբերողը կապահովի ԱԵԱ-ի փոխարինող հողի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը:</p> <p>Գործարքի բոլոր ծախսերը՝ ներառյալ ԱԵԱ-ների կողմից վճարվելիք հարկերը, տուրքերը և այլ վճարները հատուցվելու են ձեռքբերողի կողմից:</p> <p>Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ-եր</p> <p>Օրենսդրությամբ սահմանված դեպքերում իրավական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ-ները հողի նկատմամբ իրենց սեփականության իրավունքը գրանցելու դեպքում կփոխհատուցվեն որպես սեփականատեր:</p> <p>Գործարքի բոլոր ծախսերը՝ ներառյալ հողի գրանցման հետ կապված վճարները և ԱԵԱ-ների կողմից վճարվելիք հարկերը, հատուցվելու են ձեռքբերողի կողմից:</p> <p>Վարձակալ (համայնքային կամ պետական հողամասի վարձակալություն և ենթավարձակալություն)</p> <p>Օրենսդրությամբ սահմանված դեպքերում, վարձակալը կարող է ձեռք բերել սեփականության իրավունք և դառնալ ազդակիր հողամասի սեփականատեր (սման դեպքերում, նրանք կփոխհատուցվեն որպես սեփականատեր՝ սեփականության իրավունքը գրանցելուց հետո, (հողի սեփականության իրավունքը ձեռք բերելու հետ կապված վճարները պետք է կատարվեն վարձակալի կողմից), կամ վարձակալին կարող է տրվել նոր փոխարինող վարձակալություն:</p> <p>Եթե դա հնարավոր չէ, ապա, ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից, վարձակալը (և/կամ ենթավարձակալը) պետք է ստանա ազդեցության ենթակա վարձակալված</p>

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում և կենսամիջոցների վերականգնման օժանդակություններ ստանալու իրավունքները
			<p>հողի շուկայական արժեքին գումարած 15%-ին համարժեք փոխհատուցումից (վարձակալության մնացած տարիների թվից կախված) հետևյալ մասնաբաժինը`</p> <p>1) մինչև 1 տարի` փոխհատուցման արժեքի 5%-ի չափով, 2) մինչև 15 տարի` փոխհատուցման արժեքի 14%-ի չափով, 3) մինչև 25 տարի` փոխհատուցման արժեքի 20%-ի չափով, 4) 25 և ավելի տարի` փոխհատուցման արժեքի 25%-ի չափով:</p> <p>Հողամասի ձեռք բերման մասին տեղեկատվությունը պետք է տրամադրվի հողի ձեռք բերման պահից առնվազն երեք ամիս առաջ` վարձակալին վարձակալության համար այլ հող գտնելու հնարավորություն տալու համար:</p>
		<p>Մասնավոր հողի վարձակալ (մասնավոր հողամասի վարձակալություն և ենթավարձակալություն)</p>	<p>Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի և կատարված համաձայնությամբ անբաժանելի բարելավումների համար կանխիկ փոխհատուցում:</p> <p>Հողամասի ձեռք բերման մասին տեղեկատվությունը պետք է տրամադրվի հողի ձեռք բերման պահից առնվազն երեք ամիս առաջ` վարձակալին վարձակալության համար այլ հող գտնելու հնարավորություն տալու համար:</p>
		<p>Իրավական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա ԱԵԱ</p>	<p>Այս ԱԵԱ-ները կստանան փոխհատուցում միայն հողի վրա կատարված բարելավումների և մշակաբույսերի/ բերքի դիմաց, սույն ՏԾ-ով սահմանված կարգով:</p>
	<p>Հողամաս` օգտագործման սահմանափակմամբ</p>	<p>Սեփականատերեր և իրավական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ-եր</p>	<p>Հողամասի այն մասը/երը, որը չի կարող օգտագործվել իր նշանակությամբ` պայմանավորված կոմունալ ենթակառուցվածքների, բուֆերային գոտիների կամ այլ պաշտպանական/ անվտանգության գոտիների պատճառով, կփոխհատուցվի շուկայական արժեքով հողօգտագործման/ սերվիտուտի պայմանագրի հիման վրա:</p> <p>Եթե հողամասը չի կարող օգտագործվել իր նշանակությամբ, քանի որ այն դառնում է տնտեսապես ոչ կենսունակ կամ անհասանելի, ապա ամբողջ հողամասը ձեռք կբերվի փոխարինման լրիվ արժեքով:</p>
	<p>Համայնքային հողամաս</p>	<p>Համայնք</p>	<p>Համայնքային հողամասի փոխհատուցում շուկայական արժեքով</p>

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում և կենսամիջոցների վերականգնման օժանդակություններ ստանալու իրավունքները
			<p>գումարած 15%:</p> <p>Հողի օտարման հետ կապված առաջացած հարկերը, տուրքերը և այլ վճարները հատուցում է ձեռքբերողը:</p>
<p>2. Բնակելի շենքեր, շինությունների կորուստ</p>		<p>Սեփականատեր, իրավական կարգավիճակ ստանալու ենթակա և ոչ ենթակա ԱԵԱ-եր</p>	<p>Փոխհատուցում փոխարինման լրիվ արժեքին գումարած 15%-ի չափով, առանց ամորտիզացիոն մասհանումների և գործարքային ծախսերի նվազեցումների:</p> <p>Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի համար այն դեպքում, եթե շինության ոչ ազդակիր մասի հետագա օգտագործումը և շահագործումը տեխնիկապես հնարավոր է: Նշված դեպքում փոխհատուցման են ենթակա նաև շինության վերանորոգման ծախսերը:</p> <p>Եթե տարաբնակեցումը անխուսափելի է, ապա տան ձեռք բերման մասին գրավոր ծանուցումը պետք է տրամադրվի շինության ապամոնտաժումից առնվազն վեց ամիս առաջ՝ բնակիչներին այլ կացարան գտնելու հնարավորություն տալու համար:</p> <p>Գործարքի բոլոր ծախսերը՝ ներառյալ ԱԵԱ-ների կողմից վճարվելիք հարկերը, տուրքերը և այլ վճարները հատուցվելու են ձեռքներողի կողմից:</p>
<p>3. Ոչ բնակելի շենքերի և շինությունների կորուստ (այդ թվում ցանկապատեր, ամբարներ, ծածկեր և այլն):</p>	<p>ԱԵԱ-երին սեփականության իրավունքով պատկանող և պետական գրանցում ստացած շենք, շինություններ</p>	<p>Սեփականատեր</p>	<p>Վերաբնակեցվող վարձակալ</p> <p>Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի և վարձատուրի համաձայնությամբ կատարված անբաժանելի բարելավումների համար դրամական փոխհատուցում:</p> <p>Տան ձեռք բերման մասին գրավոր ծանուցումը պետք է տրամադրվի շինության ապամոնտաժումից առնվազն վեց ամիս առաջ՝ բնակիչներին այլ կացարան գտնելու հնարավորություն տալու համար:</p> <p>Շենք, շինության կորստի դեպքում՝ փոխհատուցման տրամադրում փոխարինման լրիվ արժեք գումարած 15%-ի չափով: Փոխհատուցումը տրամադրվելու է առանց ամորտիզացիոն մասնահանումների և գործարքի համար ծախսերի նվազեցումների:</p>

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում և կենսամիջոցների վերականգնման օժանդակություններ ստանալու իրավունքները
			<p>Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության ազդեցության ենթակա հատվածի համար գումարած շինության վերանորոգման ծախսերը, եթե շինության ոչ ազդակիր մասի հետագա օգտագործումը և շահագործումը տեխնիկապես հնարավոր է:</p> <p>Գործարքի բոլոր ծախսերը՝ ներառյալ ԱԵԱ-ների կողմից վճարվելիք հարկերը, տուրքերը և այլ վճարները հատուցվելու են ձեռքներողի կողմից:</p>
	<p>ԱԵԱ-երին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա առկա ինքնակամ շենքեր և շինություններ</p>	<p>Ինքնակամ շենքը կամ շինությունը կառուցած կամ օգտագործող ԱԵԱ-ներ (որոնք հանդիսանում են հողամասի և սեփականատեր)</p>	<p>Ինչպես նկարագրված է վերևում, սակայն շինությունը օրինականացնելուց/գրանցելուց հետո՝ եթե դա հնարավոր է: Եթե հնարավոր չէ, ապա՝ վերականգնման օժանդակություն ինքնակամ շենքի կամ շինության փոխարինման լրիվ արժեքի չափով՝ առանց 15 տոկոս հավելավճարի:</p> <p>Գործարքի բոլոր ծախսերը՝ ներառյալ ԱԵԱ-ների կողմից վճարվելիք հարկերը, տուրքերը և այլ վճարները հատուցվելու են ձեռքներողի կողմից:</p>
	<p>Համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասի վրա առկա ինքնակամ շենք կամ շինություն</p>	<p>Ինքնակամ շենքը կամ շինությունը կառուցած կամ օգտագործող ԱԵԱ-եր</p>	<p>Համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ շենքը կամ շինությունը կառուցած կամ օգտագործող ԱԵԱ-ին կտրամադրվի վերականգնման օժանդակություն՝ ինքնակամ կառույցի փոխարինման լրիվ արժեքի չափով՝ առանց 15 տոկոս հավելավճարի:</p> <p>Գործարքի բոլոր ծախսերը՝ ներառյալ ԱԵԱ-ների կողմից վճարվելիք հարկերը, տուրքերը և այլ վճարները հատուցվելու են ձեռքներողի կողմից:</p>
		<p>Վարձակալներ</p>	<p>Արդեն վճարված, սակայն չօգտագործված վարձավճարի դիմաց դրամական փոխհատուցում:</p>
<p>4. Հանրային շենքի/կառույցի կորուստ</p>	<p>Համայնքային կամ պետական գույք</p>	<p>Համայնք, պետություն</p>	<p>Ազդակիր կառույցի վերակառուցում և նրանց գործառույթների վերականգնում համայնքային/ պետական իրավասու մարմինների հետ խորհրդակցելով:</p> <p>Եթե դա անհնար է կամ ապացուցվել է, որ դա անիրաժեշտ չէ, ապա՝ կտրամադրվի փոխհատուցում փոխարինման լրիվ արժեքին գումարած 15%-ի չափով, առանց մաշվածության/գործարքի ծախսերի և ապամոտաժված կյուլթերի:</p>
<p>5. Կոմունալ</p>	<p>Մասնավոր</p>	<p>Կոմունալ</p>	<p>Ազդակիր կառույցի վերակառուցում և</p>

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում և կենսամիջոցների վերականգնման օժանդակություններ ստանալու իրավունքները
<p>Ծառայություններ (գազ, ջուր, էլեկտրականություն և այլն) և մասնավոր կազմակերպություններին պատկանող ենթակառուցվածքային կառույցներ</p>	<p>սեփականություն</p>	<p>ենթակառուցվածքի կամ կառույցի սեփականատերերը կամ օպերատորը</p>	<p>Նրանց գործառույթների վերականգնում համայնքային/ պետական իրավասու մարմինների և ենթակառուցվածքի սեփականատիրոջ կամ օպերատորի հետ խորհրդակցելով:</p> <p>Բոլոր նման ենթակառուցվածքները կարտացոլվեն Գլխավոր կապալառուի մանրամասն նախագծում և աշխատանքների ծավալում և կտեղափոխվեն Ծրագրի հաշվին:</p> <p>Ազդեցության ենթակա կոմունալ ենթակառուցվածքների տեղափոխման հետևանքով առաջացած ցանկացած գույքի վրա Նոր ազդեցությունները կփոխհատուցվեն՝ համաձայն սույն ՏԿ իրավունքների:</p>
<p>6. Բերքի մշակաբույսի կորուստ</p>	<p>Ազդեցության ենթակա կանգուն մշակաբույսեր</p>	<p>Մշակաբույսեր ցանած և բարելավումներ կատարած բոլոր ԱԵՏՏ-ները (անկախ հողի նկատմամբ սեփականության իրավունքներից)</p>	<p>Մշակաբույսի փոխհատուցում ընթացիկ միջին շուկայական արժեքով 1 տարվա միջին բերքի համար (տարեկան բերք):</p>
<p>7. Ծառերի/այգիների և ստացվող բերքի կորուստ</p>	<p>Ազդեցության ենթակա ծառեր և ստացվող բերք</p>	<p>Բոլոր ԱԵՏՏ-ները, ունենալով Վերջնաժամկետի օրվա դրությամբ մշակում են ծառերը/այգիները՝ անկախ հողի նկատմամբ սեփականության իրավունքից</p>	<p>Ծառի շուկայական արժեքով հաշվարկված դրամական փոխհատուցում՝ հիմնված ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա</p> <p>Համայնքային կամ պետական հողերի վարձակալները կամ փաստացի օգտագործողները կստանան իրենց ծառերի համար ամբողջական փոխհատուցում սեփականատիրոջ համաձայնությամբ:</p>
<p>8. Ձեռնարկատիրական գործունեության դադարեցում</p>	<p>Ձեռնարկատիրական գործունեություն ազդակիր հողի վրա</p>	<p>Բոլոր ԱԵԱ-ները (գործունեությունը տնօրինող/ սեփականատեր)՝ անկախ հարկային հաշվետվությունների/ հաշվարկի ներկայացումից և գործունեության իրավական կարգավիճակից</p>	<p>1. Ձեռնարկատիրական գործունեության (հարկային հաշվետվություններ/հաշվարկ ներկայացնող)՝</p> <p>1) մշտական ազդեցության դեպքում (ձեռնարկատիրական գործունեության ընդհատում 1 տարի և ավելի ժամանակահատվածով)՝ միանվագ փոխհատուցում տարեկան զուտ շահույթի /եկամտի չափով.</p> <p>2) ժամանակավոր ազդեցության դեպքում (ձեռնարկատիրական գործունեության ընդհատում մինչև 1 տարի ժամանակահատվածով)՝ զուտ շահույթի/եկամտի փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության ընդհատման ամիսների համար համար:</p>

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում և կենսամիջոցների վերականգնման օժանդակություններ ստանալու իրավունքները
			<p>Պետական գրանցման կամ լիցենզիայի վճարները Նույնպես կփոխհատուցվեն (եթե այդպիսիք առկա են), բացի այդ գույքի օտարման հետ կապված հարկերը ևս հատուցում է ձեռքբերողը:</p> <p>2. Ձեռնարկատիրական գործունեության (հարկային հաշվետվությունների/հաշվարկի բացակայության դեպքում)</p> <p>1) մշտական ազդեցության դեպքում (ձեռնարկատիրական գործունեության ընդհատում 1 տարի և ավելի ժամանակահատվածով)` վերականգնման օժանդակությունն ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափով (վերջնաժամկետի օրվա դրությամբ ՀՀ օրենքով սահմանված չափով) 1 տարվա համար.</p> <p>2) ժամանակավոր ազդեցության դեպքում (ձեռնարկատիրական գործունեության ընդհատում մինչև 1 տարի ժամանակահատվածով)` վերականգնման օժանդակության տրամադրում, հիմնված ՀՀ նվազագույն աշխատավարձի չափի վրա (վերջնաժամկետի օրվա դրությամբ ՀՀ օրենքով սահմանված չափով)` ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամիսների հաշվարկով մինչև առավելագույնը 1 տարվա համար:</p>
<p>9. Աշխատանքի կորուստ</p>	<p>Աշխատանքի մշտական կորուստ կամ հարկադիր պարապուրդ (ոչ աշխատողի մեղքով)</p>	<p>Ազդակիր կազմակերպությունում կամ ԱԶ-ում աշխատանքային կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի հիման վրա աշխատող անձինք</p>	<p>1.Փոխհատուցման տրամադրում`</p> <p>1) մշտական ազդեցության դեպքում աշխատողի վեց ամսվա միջին ամսական աշխատավարձի չափով (համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի)` առանց հարկերի.</p> <p>2) ժամանակավոր ազդեցության դեպքում գործունեության ընդհատված ամիսների հաշվարկով` մինչև առավելագույնը 6 ամսվա համար, միջին ամսական աշխատավարձի չափով (համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի)` առանց հարկերի:</p> <p>Փոխհատուցման ստացման հետ կապված հարկերը հատուցում է ձեռքբերողը:</p>
<p>10.Ժամանակավոր ազդեցություններ</p>		<p>Բոլոր ժամանակավոր ազդեցություն (որն առաջացել հողօգտագործման սահմանափակումներ</p>	<p>Կորուստների/վնասի փոխհատուցումը կտրամադրվի ժամանակավոր ազդեցությունների դեպքում փոխարինման լրիվ արժեքով` SC սահմանված փոխհատուցման</p>

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում և կենսամիջոցների վերականգնման օժանդակություններ ստանալու իրավունքները
		հետևանքով) կողմ ԱԵԱ/ԱԵՏՏ-եր	իրավունքներին համապատասխան:
11. Չնախատեսված ՋՕՏ ազդեցություններ (առկայության դեպքում)		Համապատասխան ազդեցություն կողմ ԱԵԱ/ԱԵՏՏ-եր	Ծրագրի իրականացման ընթացքում ՏԿԵՆ/ՃԴ կանդրադառնա չնախատեսված ազդեցություններին և կհոգա դրանց հետ կապված փոխհատուցումը կամ օժանդակության տրամադրումը, ըստ ՏՇ դրույթների: Շինարարական աշխատանքների ընթացքում Կապալառուի (կամ ենթակապալառուի) պատճառած վնասը կփոխհատուցվի սույն ՏՇ-ի համաձայն:
12. Բարելավումների դիմաց փոխհատուցում	Բարելավումներ, որոնք ներառված չեն այս իրավունքի սխեմայում, սակայն առկա են ազդեցության ենթարկված հողի վրա (բացառությամբ շարժական գույքի)	Բարելավումները կատարած ԱԵԱ-եր	Դրամական փոխհատուցում փոխարինման արժեքով:
13. Տեղափոխման օժանդակություն	Տեղափոխման օժանդակություն	Բոլոր ԱԵԱ , ովքեր ունեն շարժական գույք, որը պետք է հոգալու տեղափոխվի՝ անկախ սեփականության իրավունքից	Տեղափոխման, բեռնման/բեռնաթափման ծախսերը դրամական օժանդակություն (կորոշվի տվյալ տարածքում շուկայի ուսումնասիրության հիման վրա և կտրամադրվի որպես միանվագ վճար):
Կենսամիջոցների վերականգնման օժանդակություններ ստանալու իրավունքները			
1. Օժանդակություն խիստ ազդեցությունների դեպքում	Տեղահանվող ԱԵՏՏ (ֆիզիկապես տեղահանված ԱԵՏՏ-ներ) ԱԵՏՏ-եր, ովքեր կորցնում են գյուղատնտեսական բերքի 10%-ը և ավելի տոկոսը Եկամուտ ստեղծող գույքի 10%-ը կամ ավելին կորցնող ԱԵՏՏ-եր և ձեռնարկատիրական գործունեությունից զրկվող ԱԵՏՏ-եր	Խիստ ազդեցության ենթարկված բոլոր ԱԵՏՏ, ներառյալ իրավական կարգավիճակ չունեցող անձինք	Վերականգնման օժանդակություն վերաբնակեցվող ԱԵՏՏ-ներին՝ վեց ամսվա նվազագույն աշխատավարձի (ՀՀ օրենսդրությամբ սահմանված) չափով: Լրացուցիչ դրամական փոխհատուցում՝ ազդեցության ենթակա հատվածում առկա 1 տարվա բերքի չափով: Վերականգնման օժանդակություն՝ վերաբնակեցվող ԱԵՏՏ-ներին՝ վեց ամսվա նվազագույն աշխատավարձի (ՀՀ օրենսդրությամբ սահմանված) չափով:
2. Օժանդակություն խոցելի անձանց/ԱԵՏՏ-ների		Աղքատության սահմանագծից ցածր կենսամակարդակ ունեցող, կանանց, տարեց կամ	Դրամական օժանդակության տրամադրում՝ 6 ամսվա ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չափով: Ծրագրի իրականացման հետ կապված

Կորստի տեսակը	Նկարագրություն	Իրավատերը (իրավունքի սուբյեկտը)	Փոխհատուցում և կենսամիջոցների վերականգնման օժանդակություններ ստանալու իրավունքները
		հաշմանդամ անձանց կողմից ղեկավարվող ԱԵՏՏ	աշխատատեղերի համար ընտրություն կատարելիս այս անձանց կտրվի նախապատվություն:
3. Կենսամիջոցների վերականգնման աջակցություն	Կենսամիջոցների վրա ազդեցությունները, որոնք ներառված չեն այս իրավունքների սխեմայում, սակայն կարող են ի հայտ գալ ՍՏՈՒ -ի ընթացքում	ԱԵՄ-եր, որոնց կենսամիջոցները ենթարկվում են ազդեցության	Կենսամիջոցների վերականգնման միջոցառումների իրականացում սույն ՏԾ-ի և Վարկատուների պահանջներին համապատասխան, ինչպես մանրամասն ներկայացված է ստորև 2.2.2 բաժնում:

2.1 Իրավունքներ

33. Սույն ծրագրի շրջանակներում փոխհատուցում և վերականգնման (կենսամիջոցների վերականգնում) օժանդակություններ ստանալու իրավունք ունեցող ԱԵԱ-ներն են՝

1) հողամասի սեփականատերերը, այլ գույքային իրավունքներ ունեցողները, ներառյալ հողամասի վարձակալները, հողամասի օգտագործման իրավունքը կամ օգտագործման հնարավորությունը կորցնող կամ հողամասը փաստացի տիրապետող և օգտագործող բոլոր ԱԵԱ-երը, անկախ հողի նկատմամբ գրանցված իրավունքներից.

2) շենք, շինությունների սեփականատերերը, այլ գույքային իրավունքներ ունեցողները, ներառյալ վարձակալները, շենքը և շինությունը կառուցած, փաստացի տիրապետողները և օգտագործողները, ինքնակամ կառույց իրականացրած անձինք.

3) ծառերի, այգիների, բերքի, մշակաբույսերի կամ հողին ամրակցված այլ գույքի և բարելավումների սեփականատերերը, գույքային իրավունքներ ունեցողները, ներառյալ վարձակալները և փաստացի տիրապետողները և օգտագործողները.

4) ձեռնարկատիրական գործունեության, եկամտի և աշխատավարձի կորուստ կրող բոլոր ԱԵԱ-երը:

34. Օտարվող սեփականության նկարագրության արձանագրության կազմման օրվանից հետո (Վերջնաժամկետի օր՝ համաձայն ՀՀ օրենսդրության և Վարկատուների չափանիշների) կատարված բարելավումների համար փոխհատուցում չի տրվում, բացառությամբ օրենքով և ՏՇ-ով սահմանված դեպքերի: Օտարման ենթակա սեփականության նկատմամբ ծագած ծանրաբեռնվածությունների կամ երրորդ անձանց տրված կամ նրանց կողմից դրա նկատմամբ ստացած իրավունքների դիմաց փոխհատուցում տրվում է միայն սույն ՏՇ-ով սահմանված դեպքերում՝ երբ ԱԵԱ –ն ձևակերպում և գրանցում է ազդակիր գույքի նկատմամբ իր իրավունքը: Մյուս բոլոր դեպքերում՝ վերջնաժամկետից հետո օտարման ենթակա սեփականության նկատմամբ ծագած ծանրաբեռնվածությունների կամ երրորդ անձանց տրված կամ նրանց կողմից դրա նկատմամբ ստացած իրավունքների դիմաց փոխհատուցում չի տրվում: Սեփականության օտարման դիմաց տրվող փոխհատուցումից բացի, ՏՇ-ով սահմանված ծրագրի այլ ազդեցությունների համար փոխհատուցման կամ լրացուցիչ օժանդակություն ստանալու իրավունքները և սահմանափակվում են վերջնաժամկետով, որը յուրաքանչյուր ենթածրագրի շրջանակներում օտարվող սեփականության նկարագրության արձանագրության կազմման օրն է, որտեղ արձանագրվում են նաև իրականացված մարդահամարի և մանրամասն չափագրման հետազոտության տվյալները (այսուհետ՝ վերջնաժամկետ, որը կհաղորդվի ազդակիր համայնքներին և կիրառարակվի): Այն անձինք, ովքեր բնակություն են հաստատում կամ նոր բարելավումներ են կատարում ազդեցության տարածքներում վերջնաժամկետից հետո, փոխհատուցման, կենսամիջոցների վերականգնման կամ լրացուցիչ օժանդակության համար իրավունքներ չեն ստանում: Այնուամենայնիվ, նրանց պետք է նախօրոք ծանուցում ուղարկել՝ խնդրելով նախքան ծրագրի իրականացումը ազատել տարածքները և քանդել կառույցները:

2.2 Փոխհատուցում և կենսամիջոցների վերականգնման օժանդակություն ստանալու իրավունքները

35. Ծրագրի հետ կապված հողերի օտարման հողօգտագործման սահմանափակումներ հետևանքով ազդեցություն կրող ԱԵԱ-ների փոխհատուցման իրավունքները պետք է ներառեն հողի, շինությունների, բերքի/մշակաբույսերի, ծառերի և բարելավումների մշտական և ժամանակավոր կորստի վերաբերյալ դրույթներ և վերաբնակեցման օժանդակություններ, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության դադարեցման համար փոխհատուցում՝ հարկերի մասին հաշվետվությունների հիման վրա կամ միանվագ դրամական օժանդակություն վճարելու միջոցով: Տնտեսական տեղահանման իրավունքները ներառում են կենսամիջոցների վերականգնման օժանդակություններ և սահմանվում են ֆիզիկական տեղահանման և ակտիվների կորստի փոխհատուցումներից առանձին: Ծրագրի ազդեցությունները, որոնք հանգեցնում են տնտեսական տեղահանման, կարող են ներառել գործողություններ, որոնք ազդում են ԱԵԱ/ԱԵՏՏ-երի (ներառյալ ձեռնարկությունները) ապրուստ վաստակելու միջոցների վրա, ինչպիսիք են՝ աշխատողների աշխատավարձը,

ծառայությունների մատուցումը, ապրանքների արտադրությունը, հողից կամ տարածքներից վարձավճարները, բերքից կամ անասնապահությունից եկամուտը, սեփական սպառման համար ապրանքները կամ սնունդը և պետական տարբեր նպաստները: ԱԵՏՏ-ների/ԱԵԱ-ների վրա նման տնտեսական տեղահանման ազդեցությունների չափը, ինչպես նաև նրանց կենսամակարդակի փոփոխությունները կորոշվի ՏԾ-ի պատրաստման ընթացքում ՍՏՈՒ արդյունքների հիման վրա: Այն ԱԵՏՏ/ԱԵԱ-երը, որոնք կազդվեն տնտեսական տեղահանման ազդեցություններից և կենսամակարդակի փոփոխություններից, իրավասու կլինեն ստանալու կենսամիջոցների վերականգնման օժանդակություն, ինչպես նախատեսված է սույն ՏՇ-ում: Իրավունքների սխեման (Աղյուսակ 2) նաև նախատեսում է կենսամիջոցների վրա որոշ ազդեցություններից խուսափելու և դրանք նվազեցնելու միջոցներ, օրինակ՝ թույլ տալով բերքահավաքը մինչև հողը ձեռքբերողի կողմից զբաղեցնելը: Այս իրավունքները հետևյալն են.

2.2.1 Փոխհատուցման իրավունքներ

1) Հողի կորուստ

ա. Հողի կորուստը կփոխհատուցվի՝ 1) շուկայական արժեք գումարած 15%-ի չափով, կամ 2) եթե ԱԵՏՏ-ի ապրուստը հիմնված է հողի վրա, առկա է հավասար և համապատասխան որակի հող և պահանջվում է սեփականատիրոջ կողմից, ապա կտրամադրվի հավասար բնութագրերով փոխարինող հողատարածք (հաշվարկված փոխհատուցման սահմաններում՝ ինչպես նշված է վերևում): Այս դեպքում ձեռքբերողը կապահովի ԱԵԱ-ի փոխարինող հողի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը:

Հողի չօտարվող հատվածները, որոնք սեփականատիրոջ համար կորցնում են տնտեսական կամ գործառնության ին նշանակությունը, որն ունեին մինչև օտարվող մասի օտարումը կամ գույքի չօտարվող այն մասը, որը օտարվող մասի համեմատությամբ աննշան է, ևս կարող է օտարվել, եթե դրա օտարման պահանջն ԱԵԱ-ի կողմից ներկայացվել է օրենքով սահմանված կարգով և ժամկետում և ձեռքբերողի կողմից ընդունվել է օրենքով սահմանված կարգով: Եթե ազդեցության է ենթարկվել մշակվող գյուղատնտեսական նշանակության հողի ավելի քան 10%-ը, ԱԵԱ-ները (սեփականատերերը, վարձակալները, հողօգտագործողները) պետք է խիստ ազդեցության համար լրացուցիչ օժանդակություն ստանան, որը համարժեք է կորցրած հողից ստացված բերքի տարեկան միջին եկամտի շուկայական արժեքին:

բ. Այն ԱԵԱ-ները, որոնց սեփականության իրավունքը ազդակիր հողամասի նկատմամբ ենթակա են ձևակերպման և պետական գրանցման (այսուհետ՝ օրինականացման), կարող են ձևակերպել իրենց իրավունքները, որից հետո նրանց կորուստներն ամբողջությամբ պետք է փոխհատուցվեն այնպես, ինչպես սեփականատերերինը: Այն ԱԵԱ-ները, որոնց իրավունքները չեն կարող օրինականացվել կամ այն ԱԵԱ-ները, որոնք ազդակիր հողն օգտագործում են առանց դրա նկատմամբ գրանցված իրավունքների (չձևակերպված օգտագործող) կստանան փոխհատուցում միայն հողի վրա առկա մշակաբույսերի (բերքի) և բարելավումների համար:

գ. Համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալները (նաև ենթավարձակալները), օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով, կարող են ձեռք բերել հողամասի նկատմամբ սեփականության իրավունք և փոխհատուցվել որպես լիարժեք սեփականատեր և հողի սեփականության իրավունքը ձեռք բերելու հետ կապված վճարները պետք է վճարվեն վարձակալի կողմից: Նրանք նաև կստանան կենսամիջոցների վերականգնման օժանդակություն, ինչպես ներկայացված է ստորև (Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ-երի համար): Եթե դա հնարավոր չէ, նրանց կարող է տրվել նոր փոխարինող վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ իրականացնել, ապա վարձակալները (նաև ենթավարձակալները) կստանան շուկայական արժեքին գումարած 15%-ին համարժեք փոխհատուցումից (վարձակալության մնացած տարիների թվից կախված) հետևյալ մասնաբաժինը՝ ա) մինչև 1 տարի՝ վարձակալությամբ ծանրաբեռնված ազդակիր հողի փոխհատուցման արժեքի 5%-ի չափով, բ) մինչև 15 տարի՝ վարձակալությամբ

ծանրաբեռնված ազդակիր հողի փոխհատուցման արժեքի 14%-ի չափով, գ) մինչև 25 տարի՝ վարձակալությամբ ծանրաբեռնված ազդակիր հողի փոխհատուցման արժեքի 20%-ի չափով, դ) 25 և ավելի տարի՝ վարձակալությամբ ծանրաբեռնված ազդակիր հողի փոխհատուցման արժեքի 25%-ի չափով:

դ. Մասնավոր հողի վարձակալներին և ենթավարձակալներին կտրամադրվի դրամական փոխհատուցում արդեն վճարված վարձավճարի չօգտագործված մասի և վարձատուևի համաձայնությամբ կատարված անբաժանելի բարելավումների համար:

ե. Հողօգտագործողները (գրանցված և չգրանցված) նաև կստանան փոխհատուցում առկա մշակաբույսերի համար (տես ստորև «2.2» բաժնի 5 ենթակետը):

զ. Հողօգտագործողներին (գրանցված և չգրանցված) հողամասի ձեռք բերման մասին տեղեկատվությունը պետք է տրամադրվի հողի ձեռք բերման պահից առնվազն երեք ամիս առաջ՝ հողօգտագործողներին օգտագործման համար այլ հող գտնելու հնարավորություն տալու համար:

է. Գործարքի բոլոր ծախսերը՝ ներառյալ ԱԵԱ-ների կողմից վճարվելիք հարկերը, տուրքերը և այլ վճարները հատուցվելու են ձեռքներողի կողմից:

ը. Հողամասի օգտագործման սահմանափակման դեպքում, սեփականատերերը և իրավական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ-երը կփոխհատուցվեն շուկայական արժեքով հողօգտագործման/ սերվիտուտի պայմանագրի հիման վրա հողամասի այն մասի/երի համար, որը չի կարող օգտագործվել իր նշանակությամբ՝ պայմանավորված կոմունալ ենթակառուցվածքների, բուֆերային գոտիների կամ այլ պաշտպանական/ անվտանգության գոտիների պատճառով: Եթե հողամասը չի կարող օգտագործվել իր նշանակությամբ, քանի որ այն դառնում է տնտեսապես ոչ կենսունակ կամ անհասանելի, ապա ամբողջ հողամասը ձեռք կբերվի փոխարինման լրիվ արժեքով:

թ. Համայնքային հողամասը կփոխհատուցվի շուկայական արժեքով՝ գումարած 15%:

2) Բնակելի շենք, շինությունների կորուստ

ա. Բնակելի տուն կորցնող ԱԵԱ-երը կստանան փոխհատուցում՝ փոխարինման արժեքով գումարած 15%-ի չափով՝ անկախ շենք, շինության նկատմամբ ԱԵԱ-երի գրանցված իրավունքներից կամ գույքի իրավական կարգավիճակից: Փոխհատուցումը տրամադրվելու է առանց մաշվածության (ամորտիզացիոն) մասնահանումների և գործարքի համար ծախսերի նվազեցումների՝ անկախ ազդեցության ենթակա գույքի գրանցման կամ հաշվառման հանգամանքից: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի համար այն դեպքում, եթե շինության ոչ ազդակիր մասի հետագա օգտագործումը և շահագործումը տեխնիկապես հնարավոր է: Նշված դեպքում փոխհատուցման են ենթակա նաև շինության վերանորոգման ծախսերը:

բ. Վերաբնակեցվող վարձակալներին կտրվի դրամական փոխհատուցում արդեն վճարված վարձավճարի չօգտագործված մասի և վարձատուևի համաձայնությամբ կատարված անբաժանելի բարելավումների համար դրամական փոխհատուցում: Վերաբնակեցվող ԱԵՏՏ-ին կտրվի նաև վերաբնակեցման և խիստ ազդեցություն կրելու օժանդակություն՝ ՏՇ-ով սահմանված կարգով:

գ. Տան օտարման մասին գրավոր ծանուցումը պետք է տրամադրվի շինության ապամոնտաժումից առնվազն վեց ամիս առաջ՝ բնակիչներին այլ կացարան գտնելու հնարավորություն տալու համար:

դ. Գործարքի բոլոր ծախսերը՝ ներառյալ ԱԵԱ-ների կողմից վճարվելիք հարկերը, տուրքերը և այլ վճարները հատուցվելու են ձեռքներողի կողմից:

3) Ոչ բնակելի շենքեր և շինությունների կորուստ

ա. Ոչ բնակելի շենքերի և շինությունների (բացառությամբ ինքնակամ կառույցների) համար փոխհատուցում պետք է տրամադրվի փոխարինման արժեքին գումարած 15%-ի չափով: Մասնակի ազդեցության դեպքում փոխհատուցում տրամադրվում է շինության ազդեցության ենթակա հատվածի համար գումարած շինության վերանորոգման ծախսերը, եթե շինության ոչ ազդակիր մասի հետագա օգտագործումը և շահագործումը տեխնիկապես հնարավոր է:

բ. ԱԵԱ-երին սեփականության իրավունքով պատկանող հողամասերում գտնվող

ինքնակամ ոչ բնակելի ինքնակամ կառույցների կորստի դիմաց ԱԵԱ-ին կտրամադրվի դրամական փոխհատուցում ինչպես նշված է վերևում, սակայն շինությունը օրինականացնելուց/գրանցելուց հետո՝ եթե դա հնարավոր է: Եթե հնարավոր չէ, ինքնակամ կառույցը կառուցած կամ օգտագործող ԱԵԱ-ին (ով կարող է լինել հողամասի սեփականատերը) կտրամադրվի վերականգնման օժանդակություն ինքնակամ շենքի կամ շինության փոխարինման լրիվ արժեքի չափով (ոչ պակաս, քան շուկայական արժեքը)՝ առանց 15 տոկոս հավելավճարի:

գ. Համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վրա ինքնակամ կառույց կառուցած կամ օգտագործող ԱԵԱ-երին կտրամադրվի վերականգնման օժանդակություն՝ ինքնակամ շենքի կամ շինության փոխարինման արժեքի չափով (ոչ պակաս, քան շուկայական արժեքը)՝ առանց 15 տոկոս հավելավճարի:

դ. Ոչ բնակելի շինություններից տեղահանվող վարձակալներին կտրվի դրամական փոխհատուցում արդեն վճարված վարձավճարի չօգտագործված մասի համար:

ե. Սույն ենթակետի «բ» պարբերության մեջ նշված դեպքում ինքնակամ շինության օրինականացման/գրանցման պահանջը պարտադիր չէ:

զ. Գործարքի բոլոր ծախսերը՝ ներառյալ ԱԵԱ-ների կողմից վճարվելիք հարկերը, տուրքերը և այլ վճարները հատուցվելու են ձեռքբերողի կողմից:

4) Հանրային գույքի կորուստ

Հանրային գույքը՝ համայնքային և պետական կառույցները և հանրային ենթակառուցվածքները, պետք է վերակառուցվեն և նրանց գործառույթները պետք է վերականգնվեն՝ համայնքային/ պետական իրավասու մարմինների հետ խորհրդակցելով: Եթե դա անհնար է կամ ապացուցվել է, որ դա անհրաժեշտ չէ, ապա՝ համայնքային շենքի կամ շինության դիմաց պետք է տրամադրվի փոխհատուցում փոխարինման լրիվ արժեքին գումարած 15%-ի չափով, առանց մաշվածության/ գործարքի ծախսերի և ապամոտաժված կյուրթերի:

5) Կոմունալ ծառայություններ (գազ, ջուր, էլեկտրականություն և այլն) և մասնավոր կազմակերպություններին պատկանող ենթակառուցվածքային կառույցներ

Կոմունալ ծառայությունները (գազ, ջուր, էլեկտրականություն և այլն) և մասնավոր կազմակերպություններին պատկանող ենթակառուցվածքային կառույցները պետք է վերակառուցվեն և նրանց գործառույթները պետք է վերականգնվեն՝ համայնքային/ պետական իրավասու մարմինների և ենթակառուցվածքի սեփականատիրոջ կամ օպերատորի հետ խորհրդակցելով:

Բոլոր նման ենթակառուցվածքները կարտացոլվեն Գլխավոր կապալառուի մանրամասն նախագծում և աշխատանքների ծավալում և կտեղափոխվեն Ծրագրի հաշվին:

Ազդեցության ենթակա կոմունալ ենթակառուցվածքների տեղափոխման հետևանքով առաջացած ցանկացած գույքի վրա նոր ազդեցությունները կփոխհատուցվեն՝ համաձայն սույն ՏՇ իրավունքների:

6) Բերքի և մշակաբույսի կորուստ

Բերքի և մշակաբույսի կորստի համար կտրամադրվի մեկ տարվա միջին բերքի (տարեկան բերք) ընթացիկ միջին շուկայական արժեքին համապատասխան փոխհատուցում այն ԱԵԱ/ ԱԵՏՏ-երին (սեփականատեր, վարձակալ, փաստացի հողօգտագործող), ով օգտագործում և մշակում է հողամասը վերջնաժամկետի դրությամբ: Նշված փոխհատուցման դրույթները կիրառելի չեն ծառերի և դրանցից ստացվող բերքի փոխհատուցման նկատմամբ (տես՝ ստորև 6-րդ ենթակետը): ԱԵԱ/ ԱԵՏՏ-ին հնարավորություն կտրվի հավաքել մշակաբույսը մինչև հողը ձեռքբերողի կողմից զբաղեցնելը:

7) Ծառերի, այգիների և ստացվող բերքի կորուստ

Ծառերի և ստացվող բերքի համար հողի սեփականատերերին, վարձակալներին և փաստացի օգտագործողներին պետք է տրվի փոխհատուցում շուկայական արժեքին համապատասխան, հիմնվելով ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության ցուցանիշների վրա, հետևյալ կարգով՝

ա. համայնքային կամ պետական հողերի սեփականատերերը կստանան ծառերի համար ամբողջական փոխհատուցում, եթե առկա վարձակալն իրավասու չէ փոխհատուցում ստանալու համաձայն սույն ենթակետի «բ» պարբերության, կամ առկա փաստացի օգտագործողը իրավասու չէ փոխհատուցում ստանալու համաձայն սույն ենթակետի «գ» պարբերության.

բ. եթե հողամասը ծանրաբեռնված է վարձակալությամբ, ապա ծառերի համար ամբողջական փոխհատուցումը կտվի վարձակալին, եթե ծառերը մշակվում են վարձակալի կողմից՝ հողամասի սեփականատիրոջ համաձայնությամբ.

գ. եթե համայնքային կամ պետական հողերը փաստացի՝ առանց իրավաբանական ձևակերպման, օգտագործվում են սեփականություն կամ գույքային իրավունք չունեցող անձի կողմից, ապա ծառերի համար ամբողջական փոխհատուցումը կտրամադրվի հողամասը փաստացի օգտագործողին:

դ. Բոլոր ԱԵԱ-ները, ուրբեր կորցնում են ծառեր՝ անկախ հողի սեփականության/օգտագործման կարգավիճակից կփոխհատուցվեն «2.3» բաժնի 36 կետի 4 ենթակետի համաձայն:

8) Ձեռնարկատիրական գործունեության դադարեցում

Ձեռնարկատիրական գործունեության մշտական և ժամանակավոր դադարեցման դեպքում (որն առաջացել է ծրագրի հետ կապված հողերի օտարման կամ հողօգտագործման սահմանափակումների հետևանքով) տրամադրվում է փոխհատուցում հարկային հաշվետվությունների/ հաշվարկի հիման վրա հետևյալ կարգով՝

ա. ձեռնարկատիրական գործունեության մշտական (1 տարի և ավելի) դադարեցման դեպքում կտրամադրվի փոխհատուցում մեկ տարվա զուտ շահույթի/եկամտի չափով՝ հարկային հաշվետվությունների/հաշվարկի հիման վրա.

բ. ձեռնարկատիրական գործունեության ժամանակավոր դադարեցման (մինչև 1 տարի) դեպքում կտրամադրվի փոխհատուցում ամսական զուտ շահույթի/եկամտի չափով, հարկային հաշվետվությունների/հաշվարկի հիման վրա՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամիսների հաշվարկով.

գ. պետական գրանցման և լիցենզիայի վճարները նույնպես պետք է փոխհատուցվեն (եթե առկա են), բացի այդ գույքի օտարման հետ կապված հարկերը, տուրքերը և այլ վճարները ևս հատուցում է ձեռքբերողը:

Հարկային հաշվետվությունների/հաշվարկի բացակայության դեպքում, ձեռնարկատիրական գործունեության մշտական և ժամանակավոր դադարեցման համար փոխհատուցումը կիրականացվի վերոնշյալ սկզբունքով, սակայն հիմք ընդունելով ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձը (վերջնաժամկետի օրվա դրությամբ ՀՀ օրենքով սահմանված չափով):

Ձեռնարկատիրական գործունեության ժամանակավոր դադարեցման ամիսների քանակը և մշտական դադարեցման ամսաթիվը որոշվում են համաձայն սույն ՏԾ-ի Հավելված «Բ»-ի:

9) Աշխատանքի կորուստ

ա) Ազդեցության ենթակա կազմակերպությունում կամ անհատ ձեռնարկատիրոջ մոտ աշխատող ԱԵԱ-ների աշխատանքի մշտական կորստի դեպքում տրամադրվում է դրամական փոխհատուցում՝ աշխատողին 6 ամսվա միջին ամսական աշխատավարձի չափով (ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված)՝ առանց հարկերի, եթե աշխատանքային պայմանագիրը (հարաբերությունը) դադարում է ազդակիր հողում գործունեության մշտական դադարեցման հետևանքով: Վերոհիշյալ փոխհատուցումը կտրամադրվի այն աշխատողներին, որոնք վերջնաժամկետի դրությամբ առնվազն երկու ամսվա աշխատող են, գործունեության դադարեցման ամսաթվի դրությամբ հանդիսանում են տվյալ կազմակերպության կամ ԱԶ-ի աշխատակից և կներկայացնեն աշխատանքային հարաբերության դադարեցումը փաստող ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան փաստաթուղթ:

բ. Աշխատանքի ժամանակավոր կորստի դեպքում (հարկադիր պարապուրդ) դրամական փոխհատուցում կտրվի նույն հիմունքներով՝ աշխատանքի հարկադրված դադարեցման (պարապուրդի) ամիսների համար՝ մինչև 6 ամիս:

գ. Փոխհատուցման ստացման հետ կապված հարկերը հատուցում է ձեռքբերողը:

դ) Ձեռնարկատիրական գործունեության ժամանակավոր դադարեցման ամիսների քանակը և մշտական դադարեցման ամսաթիվը որոշվում են համաձայն սույն ՏՇ-ի Հավելված «Բ»-ի:

10) Ժամանակավոր ազդեցություններ

Ժամանակավոր ազդեցություն (որն առաջացել է հողօգտագործման սահմանափակումներ հետևանքով) կրող անձանց և տնային տնտեսություններին կտրամադրվի վնասների փոխհատուցում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ սույն ՏՇ Իրավունքների սխեմայով սահմանված փոխհատուցման իրավունքներին համապատասխան: Ժամանակավոր ազդեցություն կրող անձինք և տնային տնտեսություններին տրամադրվող փոխհատուցումը չի ներառի ՏՇ-ով սահմանված վերականգնման օժանդակությունները:

11) Չնախատեսված ՀՕՏ ազդեցություններ (առկայության դեպքում)

Ծրագրի իրականացման ընթացքում ՏԿԵՆ/ՃԴ կանդրադառնա չնախատեսված ազդեցություններին և կհոգա դրանց հետ կապված փոխհատուցումը կամ օժանդակության տրամադրումը, ըստ ՏՇ դրույթների:

Չնախատեսված ազդեցությունների դեպքում կկիրառվեն ՏՇ-ով սահմանված բոլոր ընթացակարգերը (սոցիալական ազդեցության գնահատում և այլ անհրաժեշտ հետազոտություններ և իրավական ընթացակարգեր, ներառյալ թարմացված ՏՇ կամ ՏՇ հավելվածի պատրաստում (անհրաժեշտության դեպքում)):

Շինարարական աշխատանքների ընթացքում Կապալառուի (կամ ենթակապալառուի) պատճառած վնասը կփոխհատուցվի սույն ՏՇ-ի համաձայն:

12) Բարելավումների դիմաց փոխհատուցում

Բարելավումները, որոնք ներառված չեն իրավունքի սխեմայում, սակայն առկա են ազդեցության ենթարկված հողի վրա (բացառությամբ՝ շարժական գույքի) կփոխհատուցվեն փոխարինման լրիվ արժեքով:

13) Տեղափոխման օժանդակություն

ա) Տարաբնակեցման օժանդակություն՝ իրենց բնակության վայրից տեղահանված ԱԵՏՏ-երին (ներառյալ վարձակալները), կտրամադրվի տրանսպորտային ծախսերը հոգալու համար բավարար տարաբնակեցման օժանդակություն (կորոշվի տվյալ տարածքում շուկայի ուսումնասիրության հիման վրա և կտրամադրվի որպես միանվագ վճար):

բ) Շարժական գույքի տեղափոխման ծախսեր` ԱԵՏՏ-եր, որոնք ազդակիր հողամասում կամ շենքում ունեն շարժական գույք, որը պետք է տեղափոխվի` անկախ հողի կամ շենքի նկատմամբ իրավունքից, կստանան դրամական օժանդակություն շարժական գույքը տեղափոխելու բոլոր տրանսպորտային ծախսերը հոգալու համար:

2.2.2 Կենսամիջոցների վերականգնման օժանդակություններ ստանալու իրավունքները

Կենսամիջոցների վերականգնման օժանդակությունները ենթակա են պարզաբանման ՏԾ-ում` հիմնվելով ՄՏՀ-ի և գույքագրման արդյունքների վրա:

1) Հողի կորստի պատճառով եկամտի և/կամ ապրուստի միջոցների կորուստ

Կենսամիջոցների վերականգնման հետևյալ օժանդակությունը կտրամադրվի գյուղատնտեսությամբ զբաղվող ԱԵԱ-երին (սեփականատերեր և իրավական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ-եր /վարձակալներ, ովքեր կարող են ձեռք բերել սեփականության իրավունք)`

- գյուղատնտեսական փորձագետի կողմից արդյունավետ/բարելավված գյուղատնտեսություն վարելու վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում.
- վարձակալելու կամ ձեռք բերելու հնարավորություն (ունենան գնման կամ վարձակալելու նախապատվություն).
- դեպի արտադրական ռեսուրսներ և շուկաներ հասանելիության ոլորացում.
- աջակցություն ձեռք բերման նպատակով այլընտրանքային հողատարածք գտնելու համար.

Կենսամիջոցների վերականգնման հետևյալ օժանդակությունը կտրամադրվի հողամասը գյուղատնտեսական նպատակով օգտագործող վարձակալներին (ում ապրուստի միջոցները հիմնված են հողի վրա)`

- աջակցություն օգտագործման նպատակով այլընտրանքային հողատարածք գտնելու համար.
- գյուղատնտեսական փորձագետի կողմից արդյունավետ/բարելավված գյուղատնտեսություն վարելու վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում:

Իրավական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա ԱԵԱ-երին կտրամադրվի կենսամիջոցների վերականգնման հետևյալ օժանդակությունը`

- աջակցություն ԱԵԱ-երին գրանցման հարցում, որպեսզի նրանք համայնքից հող վարձակալելու կամ ձեռք բերելու հնարավորություն (ունենան գնման կամ վարձակալելու նախապատվություն).
- գյուղատնտեսական փորձագետի կողմից արդյունավետ/բարելավված գյուղատնտեսություն վարելու վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում:

2) Բնակելի շենքերի և շինությունների կորստի պատճառով եկամտի և/կամ ապրուստի միջոցների կորուստ

Տարաբնակեցված տնային տնտեսությունները նաև կստանան կենսամիջոցների վերականգնման հետևյալ օժանդակությունը`

- աջակցություն բնակության վայրի գրանցման և նոր բնակելի վայրում կոմունալ ծառայություններին միացման հարցում.
- բնակության տարածքի փոփոխման դեպքում` աջակցություն սոցիալական ենթակառուցվածքներին հասանելիության հարցում (օրինակ` գրանցում նոր դպրոցում, մանկապարտեզում կամ պոլիկլինիկաներում).

- աջակցություն զբաղվածության հասանելիության հարցում (շինարարության ընթացքում):

Տարաբնակեցված վարձակալները նաև կստանան կենսամիջոցների վերականգնման հետևյալ օժանդակությունը՝

- աջակցություն այլ վայրում բնակվելու համար նոր վարձակալություն գտնելու հարցում:

3) Ոչ բնակելի շենքերի ու շինությունների և ենթակառուցվածքի կորստի պատճառով եկամտի և/կամ ապրուստի միջոցների կորուստ

Ազդակիր ոչ բնակելի շենքերի սեփականատերերը կստանան կենսամիջոցների վերականգնման հետևյալ օժանդակությունը՝

- աջակցություն գույքի տեղափոխման թույլտվությունների ապահովմանը և խորհրդատվության տրամադրում, եթե պահանջվում են նոր շինարարական թույլտվություններ/Էլեկտրաէներգիայի կամ ջրի վերամիացումներ:

Ոչ բնակելի շինությունների տեղահանված վարձակալները կստանան կենսամիջոցների վերականգնման օժանդակություն նոր վարձակալություն գտնելու հարցում աջակցության տեսքով:

4) Մշակաբույսի կորստի պատճառով եկամտի և/կամ ապրուստի միջոցների կորուստ

Մշակաբույսեր ցանած և բարելավումներ կատարած բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ հողի նկատմամբ սեփականության իրավունքներից, նաև կստանան կենսամիջոցների վերականգնման հետևյալ օժանդակությունը՝

- հողը ձեռքբերողի կողմից զբաղեցնելուց առաջ բերքահավաքի հնարավորություն.
- աջակցություն օգտագործման նպատակով այլընտրանքային հողատարածք գտնելու համար՝ եթե կիրառելի է.
- գյուղատնտեսական փորձագետի կողմից արդյունավետ/բարելավված գյուղատնտեսություն վարելու վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում:
- աջակցություն զբաղվածության հասանելիության հարցում (շինարարության ընթացքում):

5) Ծառերի/այգիների և ստացվող բերքի կորստի պատճառով եկամտի և/կամ ապրուստի միջոցների կորուստ

Բոլոր ԱԵՏՏ-ները, ովքեր ունեն ծառեր/այգիներ և կատարել են բարելավումներ՝ անկախ հողի նկատմամբ սեփականության իրավունքից, կստանան կենսամիջոցների վերականգնման հետևյալ օժանդակությունը՝

- խորհրդատվություն այն շուկաների վերաբերյալ, որտեղ կարելի է գնել պտղատու ծառերի տնկիներ, և խորհրդատվություն սելեկցիայի և ինամքի վերաբերյալ.
- գյուղատնտեսական փորձագետի կողմից արդյունավետ/բարելավված գյուղատնտեսություն վարելու վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում:
- աջակցություն զբաղվածության հասանելիության հարցում (շինարարության ընթացքում):

6) Աշխատանքի կամ ձեռնարկատիրական գործունեության կորստի պատճառով եկամտի և/կամ ապրուստի միջոցների կորուստ

Ձեռնարկատիրական գործունեություն կորցնող կամ ազդակիր կազմակերպությունում կամ ԱԶ-ում աշխատանքային պայմանագրի (կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի) հիման վրա աշխատող ԱԵԱ-երը կստանան:

ա) Աշխատանքի կամ Ձեռնարկատիրական գործունեության մշտական կորստի դեպքում ապրուստի միջոցների վերականգնման աջակցություն՝

- աջակցություն ծրագրի հետ կապված զբաղվածության հասանելիության հարցում.
- աջակցություն մասնագիտական ուսուցման, գյուղատնտեսական ուսուցման.
- համակարգչային դասընթացների կամ այլ հասանելիության հարցում:

բ) Ապրուստի միջոցների վերականգնման աջակցություն աշխատանքի կամ Ձեռնարկատիրական գործունեության ժամանակավոր կորստի դեպքում՝

- աջակցություն մասնագիտական ուսուցման, գյուղատնտեսական ուսուցման, համակարգչային դասընթացների կամ այլ հասանելիության հարցում:

7) Օժանդակություն խիստ ազդեցության դեպքում

ա. Ծրագրի խիստ ազդեցության համար դրամական օժանդակություն տրամադրվում է ազդեցության ենթակա այն ԱԵՏՏ-ներին (ներառյալ՝ վարձակալներին և հողի փաստացի օգտագործողներ հանդիսացող ԱԵՏՏ-ներին), որոնց պատկանող կամ որոնց կողմից մշակվող գյուղատնտեսական նշանակության հողի 10% կամ ավելին ազդակիր է, և տվյալ հողամասի օգտագործման արդյունքում տվյալ ԱԵՏՏ-ները ստանում են օգուտներ՝ պտուղների, բերքի, մշակաբույսի տեսքով:

Վերոհիշյալ օժանդակության հաշվարկման համար հիմք է հանդիսանում հողերի փաստացի գործառնական նշանակությունը, անկախ անշարժ գույքի կադաստրային տվյալներում, իրավունքի վկայականներում և իրավունքը հաստատող այլ փաստաթղթերում հողամասի համար սահմանված նշանակությունից: Այն դեպքում, երբ 10 և ավելի տոկոսով ազդեցության ենթակա հողամասը թեև չի հանդիսանում գյուղատնտեսական նշանակության հողամաս, սակայն փաստացի օգտագործվում է գյուղատնտեսական արտադրանք ստանալու համար, և որից փաստացի բերք և մշակաբույս է ստացվում, ապա վերջինս ենթակա է փոխհատուցման՝ վերոհիշյալ սկզբունքների համաձայն՝ առանց օրինականացման պահանջի ապահովման:

բ. Տարաբնակեցվող ԱԵՏՏ-երը (ներառյալ՝ վերաբնակեցվող վարձակալները) կստանան վերականգնման (կենսամիջոցների վերականգնման) օժանդակություն խիստ ազդեցության համար ամսական նվազագույն աշխատավարձի (ՀՀ օրենսդրությամբ սահմանված) 6-ապատիկի չափով:

գ. Եկամուտ ստեղծող գույքի 10%-ը կամ ավելին կորցնող ԱԵՏՏ-երը և ձեռնարկատիրական գործունեությունից զրկվող ԱԵՏՏ-երը կստանան վերականգնման (կենսամիջոցների վերականգնման) օժանդակություն խիստ ազդեցության համար՝ ամսական նվազագույն աշխատավարձի (ՀՀ օրենսդրությամբ սահմանված) 6-ապատիկի չափով:

8) Օժանդակություն խոցելի անձանց/ԱԵՏՏ-ներին

խոցելի անձանց կտրվի վերականգնման օժանդակություն ամսական նվազագույն աշխատավարձի (ՀՀ օրենսդրությամբ սահմանված) 6 (վեց)-ապատիկի չափով, ինչպես նաև ծրագրի շրջանակներում նախատեսվող աշխատատեղերում աշխատելու համար գերակայություն: Սոցիալապես խոցելի անձինք են՝

ա. այն տնային տնտեսությունները, որոնք հաշվառված են ընտանիքի անապահովության գնահատման համակարգում (ԸԱԳՀ) և ստանում են նպաստ.

բ. միայնակ ծնողի կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները, որտեղ տարիքային կենսաթոշակառու հանդիսացող կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանցից, Հայաստանի Հանրապետության զինված

ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցնող կամ մինչև քսաներեք տարին լրացած և ուսումնական հաստատություններում ցերեկային ուսուցմամբ սովորողներից բացի այլ չափահաս, աշխատունակ տարիքի անձ չկա՝ եթե ընտանիքը նպաստառու չէ:

գ. տարիքային կենսաթոշակառու հանդիսացող անձանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները, որտեղ կենսաթոշակառու կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանցից, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցնող կամ մինչև քսաներեք տարին լրացած և ուսումնական հաստատություններում ցերեկային ուսուցմամբ սովորողներից բացի այլ չափահաս, աշխատունակ տարիքի անձ չկա՝ եթե ընտանիքը նպաստառու չէ:

դ. 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները, որտեղ կենսաթոշակառու կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանցից, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցնող կամ մինչև քսաներեք տարին լրացած և ուսումնական հաստատություններում ցերեկային ուսուցմամբ սովորողներից բացի այլ չափահաս, աշխատունակ տարիքի անձ չկա՝ եթե ընտանիքը նպաստառու չէ:

ե. կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները, որտեղ տարիքային կենսաթոշակառու հանդիսացող կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանցից, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցնող կամ մինչև քսաներեք տարին լրացած և ուսումնական հաստատություններում ցերեկային ուսուցմամբ սովորողներից բացի այլ չափահաս, աշխատունակ տարիքի անձ չկա՝ եթե ընտանիքը նպաստառու չէ:

9) Կենսամիջոցների վերականգնման աջակցություն

ՍՏՈՒ -ի ընթացքում հայտնաբերված ԱԵԱ-երը (ՏԾ մշակման ընթացքում), որոնց կենսամիջոցները ենթարկվում են ազդեցության, որոնք ներառված չեն սույն ՏԾ իրավունքների սխեմայում, կստանան կենսամիջոցների վերականգնման օժանդակություն սույն ՏԾ-ի և Վարկատուների պահանջներին համապատասխան:

2.3 Միավորի փոխհատուցման արժեքի գնահատումը

36. Անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատումն իրականացվում է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, ՀՀ-ում անշարժ գույքի գնահատման Հայաստանի ազգային ստանդարտով, Կիրառելի չափանիշների և սույն ՏԾ-ի պահանջների համաձայն, որից ելնելով տարբեր ազդեցությունների՝ միավորի դիմաց փոխհատուցման արժեքի գնահատման Վարկատուների և ՀՀ կառավարության համար փոխհամաձայնեցված մեթոդաբանությունը հետևյալն է՝

1) **Հողամասը** պետք է գնահատվի փոխարինման արժեքով, այսինքն՝ շուկայական կամ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է) գումարած 15 տոկոս:

2) **Շենքերը և շինությունները** պետք է գնահատվեն փոխարինման արժեքով՝ շինության տեսակի, շինանյութերի արժեքի, շինարարության տեսակի, աշխատուժի, տրանսպորտի ու այլ շինարարական և գրանցման (եթե կիրառելի է) ծախսերի հիման վրա: Մաշվածության (ամորտիզացիոն) մասհանումներ կամ գործարքի դիմաց ծախսերը չեն կիրառվում և չեն նվազեցվում: Ազդեցության ենթակա հողի վրա առկա ինքնակամ շինությունների օրինականացման ծախսերը հաշվարկվում են անկախ գնահատողի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված դրույքաչափերով:

3) **Մեկ տարվա մշակաբույսից ստացվող բերքի** փոխհատուցման արժեքը պետք է գնահատվի գյուղատնտեսական ապրանքների նախորդ 3 տարիների միջին գների և միջին բերքատվության ցուցանիշների վրա:

Այն դեպքում, երբ ԱԵԱ-ին վճարման ենթակա է ավելի քան մեկ տարվա փոխհատուցում, առաջին տարուց հետո բերքի դիմաց փոխհատուցում պետք է տրամադրվի շուկայական միջին արժեքին համապատասխան:

4) **Ծառերը (թփերը)** պետք է գնահատվեն տարբեր մեթոդաբանությամբ՝ կախված այն հանգամանքից, թե արդյոք կորցրած ծառը (թուփը) ոչ պտղաբեր ծառ (թուփ) է, թե՛ պտղաբեր:

ա) Ոչ պտղաբեր՝ փայտանյութ տվող և դեկորատիվ ծառերը (թփերը)՝ պետք է գնահատվեն ըստ հետևյալ խմբերի. ա) մանր ծառեր, բ) միջին ծառեր և գ) խոշոր ծառեր, հիմք ընդունելով ծառատեսակը (թփատեսակը) և գնահատման հետևյալ չափման միավորները՝ փայտանյութի (վառելափայտի կամ շինափայտի) ծավալը, ծառի (թփի) բարձրությունը, ինչպես նաև տվյալ ծառատեսակի (թփատեսակի) համար կիրառելի այլ չափման միավորներ, որոնք կսահմանվեն ՏԾ-ով:

բ) Պտղաբեր ծառերը (թփերը, խաղողը) պետք է գնահատվեն այգետնկման տարիքի հիման վրա: Պտղաբեր ծառերի (թփեր, պտղատու կամ խաղողի այգիներ) դիմաց փոխհատուցում պետք է տրամադրվի ներդրված արժեքի հիման վրա, և այնքան, որքան կազմում է տվյալ ծառատեսակի (թփատեսակի) մեկ տարվա բերքի փոխհատուցման շուկայական արժեքը՝ բազմապատկած տվյալ ծառի (թփի) այգետնկման օրվանից հաշված տարիների քանակով, սակայն ոչ ավելի քան այն տարիների քանակն է, որն անհրաժեշտ է տվյալ ծառատեսակին (թփատեսակին) լիարժեք բերքատվության տարիքի հասնելու համար:

37. Միավորի դիմաց փոխհատուցման դրույքաչափերը պետք է գնահատվեն որակավորված անկախ գնահատողի կողմից՝ Վարկատուների կողմից ընդունելի հստակ և թափանցիկ մեթոդաբանության հիման վրա: Որակավորված անկախ գնահատողը գույքի բոլոր տեսակների համար կազմում է գնահատման և հաշվարկման հաշվետվություններ, որտեղ անկախ գնահատվող գույքի տեսակից, պետք է նշվեն բոլոր ելակետային տվյալների ստացման աղբյուրները և գնահատման ժամանակահատվածը:

2.4 Սեփականության օտարման պայմանները

38. Սեփականության օտարումն իրականացվում է գերակա շահի հիման վրա օրենքով սահմանված որոշակի ընթացակարգերի համաձայն: Մասնավորապես, հանրության գերակա շահերի ապահովման համար սեփականությունը կարող է օտարվել՝ ա) պայմանագրի համաձայն, բ) փոխհատուցման ենթակա գումարը դեպոզիտ հանձնելով և գ) դատական կարգով:

39. Սեփականությունը կարող է օտարվել՝ ձեռքբերողի և օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջ միջև կնքվող պայմանագրի համաձայն: Այս դեպքում կողմերի համաձայնությամբ են որոշվում օտարվող սեփականության դիմաց տրվող համարժեք փոխհատուցման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմաններն ու կողմերի պատասխանատվությունը, որոնք սակայն չպետք է հակասեն սույն ՏԾ դրույթներին կամ ԱԵԱ-երի նկատմամբ լինեն պակաս բարենպաստ, քան ՏԾ ներքո նրանց տրված իրավունքները: Օտարման պայմանագրի կողմ պետք է հանդիսանան նաև օտարվող սեփականության նկատմամբ ձեռքբերողին հայտնի գույքային իրավունքներ ունեցողները: Ծրագրի ներքո նախապատվությունը պետք է տրվի օտարման նշված եղանակին և ՏԿԵՆ պետք է իր լավագույն ջանքերը գործադրի հաջող բանակցություններ իրականացնելու միջոցով սեփականությունը օտարելու համար:

40. Եթե ԱԵԱ-ների անհամաձայնության և այլ պատճառներով 3-ամսյա ժամկետում պայմանագիր չի կնքվում, ապա ձեռքբերողը, Օրենքով սահմանված ժամկետներում, սեփականության օտարման դիմաց տրամադրվող փոխհատուցման գումարը հանձնում է դատարանի կամ նոտարի դեպոզիտ հաշվին:

41. Եթե օրենքով սահմանված կարգով դեպոզիտից չեն ստանում փոխհատուցման գումարը, ապա ձեռքբերողը մեկամսյա ժամկետում դիմում է դատարան՝ սեփականության հարկադիր օտարման պահանջով: Ընդ որում՝ եթե օրենքով սահմանված ժամկետում և կարգով ԱԵԱ-ները դեպոզիտից ստանում են փոխհատուցման գումարը, ապա սեփականության օտարման պայմանագիրը համարվում է կնքված:

42. Հողի ձեռք բերումը հարկադիր (դատական կարգով) օտարման ընթացակարգը կարող է երկար տևել, ուստի Ծրագրի շրջանակներում անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել դատական կարգով օտարումները նվազագույնի հասցնելու համար: Ձեռքբերողը չպետք է զբաղեցնի օտարվող հողամասերը մինչև օտարվող սեփականության նկատմամբ օրենքով սահմանված կարգով չգրանցվի ձեռքբերողի սեփականության իրավունքը կամ օրենքով սահմանված կարգով համապատասխան դատական ակտը չմտնի օրինական ուժի մեջ և օտարվող սեփականությունը չհանձնվի ձեռքբերողին:

43. Օտարման հետ կապված ծախսերի հատուցումը

Սեփականությունն օտարելու գործընթացում առաջացած ծախսերը կատարվում են ազդակիր հողը և այլ անշարժ գույքը ձեռքբերողի հաշվին: Օտարման գործընթացի ընթացքում առաջացող ծախսերը կսահմանվեն սույն ծրագրի համար նախապատրաստվող ՏԾ մշակման ընթացքում:

Սեփականության օտարման հետ կապված օտարվող սեփականության սեփականատիրոջ համար պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այդ կապակցությամբ առաջացող ֆինանսական պարտավորությունները (հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ) հատուցում է ազդակիր հողի և այլ անշարժ գույքի ձեռքբերողը:

2.5 Օրինականացման պայմանները

44. Օտարվող սեփականության իրավատեր հանդիսացող բոլոր ԱԵԱ-ները (անձ, ով ունի օտարվող սեփականության նկատմամբ իր իրավունքը հավաստող փաստաթղթեր, սակայն դեռևս չի գրանցել իր սեփականության իրավունքը) իրավունք ունեն ԶԶ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել իրենց սեփականության և այլ գույքային իրավունքները, որը կերաշխավորի սեփականության օտարման կապակցությամբ տրվող փոխհատուցումների ավելի բարձր մակարդակ:

45. Այն ԱԵԱ-ները, որոնք օտարվող սեփականության նկատմամբ ունեն իրավունքներ, սակայն չեն ապահովել դրանց պատշաճ ձևակերպումը և պետական գրանցումը, օրենքով սահմանված կարգով, իրավունք ունեն մինչև օտարման պայմանագրի կնքումը կամ դատական ակտի կայացումը, օրինականացման գործընթացի արդյունքում, ձեռք բերել ազդակիր գույքի նկատմամբ իրավունքներ և ստանալ փոխհատուցում՝ ձեռքբերված իրավունքներին (սոր ձևակերպված և պետական գրանցում ստացած) համապատասխան:

46. ԱԵԱ-երն իրենց նախաձեռնությամբ և հայեցողությամբ կարող են սկսել իրավունքների ձևակերպման կամ պետական գրանցման համապատասխան գործընթաց՝ ԶԶ օրենսդրությամբ սահմանված կարգով: ՏԿԵՆ-ը կապահովի Նշված ԱԵԱ-երի պատշաճ իրազեկումը և իր իրավասության շրջանակներում կաջակցի այն ԱԵԱ-երին, որոնք կնախաձեռնեն օրինականացման գործընթաց:

47. Օրինականացման գործընթացի պայմանները և ժամկետները՝ ըստ օտարվող սեփականության նկատմամբ ԱԵԱ-ների իրավունքների (սեփականության օրինական տիրապետողները, ձեռք բերման վաղեմության ուժով սեփականության փաստացի տիրապետողները, օգտագործողները, սեփական հողամասում ինքնակամ կառույց իրականացրած ԱԵԱ-ները և այլն), ՏԿԵՆ օժանդակության ձևերն ու կարգը կսահմանվեն սույն ենթածրագրի ՏԾ-ում՝ օրինականացման պլան կազմելու և ընդունելու միջոցով:

48. Օտարվող սեփականության նկատմամբ սեփականության կամ այլ իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք չունեցող կամ օտարվող սեփականության նկատմամբ օրենքով ակնկալիք ունեցող, սակայն իրենց իրավունքները չձևակերպած և չգրանցած ԱԵԱ-ները՝ համապատասխան ազդեցությունների համար փոխհատուցումը ստանում են և սույն ՏԾ-ով նախատեսված փոխհատուցման իրավունքներից օգտվում են որպես իրավական կարգավիճակ չունեցող ԱԵԱ-ներ:

Է. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

49. Կանայք կարևոր դեր են խաղում ծրագրի ազդակիր տարածքներում և ներգրավվում են գյուղատնտեսական և շուկայավարման եկամտաստեղծ գործողությունների լայն շրջանակում: Ծրագրի շրջանակներում պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել կանանց կողմից իրենց գործողություններին առնչվող փոխհատուցման ապահովմանը և հետևել, որպեսզի այն կանայք, ովքեր

ընտանիքը փաստացի ղեկավարողն են, հստակորեն ներառված լինեն այն շահառուների ցանկում, որոնց համար վարկի շրջանակներում փոխհատուցում և վերականգնում է նախատեսվում: Վերը նշվածն ապահովելու համար պետք է հաշվի առնել հետևյալ գործողությունները.

1) կանանց ներգրավել ազդեցությունները գնահատող խմբում.

2) ԱԵՏՏ-ների/ԱԵԱ վրա ազդեցությունների գնահատում, որը պարունակում է ընտանիքների և մարդկանց ընդհանուր քանակն ըստ սեռի՝ հստակ նշելով, թե քանի կին կարող է ազդեցության ենթարկվել (ներառյալ գենդերային բնույթի (ԳԲ) հավանականությունը՝ փոխհատուցման հետ կապված վեճերի պատճառով) ծրագրի արդյունքում, ինչպես նաև նկարագրել ծրագրից առաջ ունեցած նրանց կենսապայմանները:

3) փոխհատուցման իրավունքները սահմանելու, դրանց շուրջ բանակցելու և ՏԾ-ն իրականացնելու համար խորհրդատվական գործընթացներում կանայք պետք է հիմնական մասնակիցներ լինեն, և, անհրաժեշտության դեպքում, ՏԾ-ում պետք է նախատեսվի գենդերային հարցերով խորհրդատվություն.

4) ՏԾ իրականացման ընթացքում հատուկ ուշադրություն պետք է դարձնել, որ հողերի օտարման, փոխհատուցման և տարաբնակեցման գործընթացները չմեծացնեն ԳԲ հավանականությունը.

5) ՏԾ-ի մշտադիտարկման և գնահատման ընթացքում հատուկ ուշադրություն պետք է դարձնել կանանց և այլ խոցելի խմբերի վրա տարաբնակեցման հետևանքներին:

Ը. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ, ՇԱՀԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱԿՈՒՄ ՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀՐԱՂԱՐԱԿՈՒՄ

50. Վարկատուների չափանիշներին համաձայն՝ ԱԵԱ-ին պետք է լիարժեք խորհրդատվություն տրամադրել և հնարավորություն ընձեռել մասնակցելու հողի օտարման և տարաբնակեցման աշխատանքների պլանավորմանը և իրականացմանը: Նրանց նաև պետք է ժամանակին և պատշաճ կերպով տեղեկություններ տրամադրել պլանավորման գործընթացի արդյունքների, ինչպես նաև ՏԾ իրականացման ժամկետների և ընթացակարգերի վերաբերյալ: ԸՂ-ն հողի օտարման և տարաբնակեցման գործընթացի բոլոր փուլերում պետք է իրականացնի հանրային տեղեկատվության և խորհրդատվության քարոզարշավ: Բացի այդ, ԸՂ-ն պետք է կազմակերպի նաև հանրային իրազեկման հանդիպումներ՝ ԱԵԱ մասնակցությունը ՎԶՀ-ին, ՏԾ-ի ամբողջական բացահայտումը և ԱԵԱ իրազեկումը փոխհատուցման վճարման և վերաբնակեցման ընթացակարգերի վերաբերյալ ապահովելու նպատակով:

51. Սկզբնական ՀՕՏԾ-ն թարգմանվել է հայերեն, հրապարակվել է ԸՂ կայքում և բաշխվել ազդակիր համայնքներում: Սույն ՏԾ-ն կթարգմանվի հայերեն և կիրառարակվի ԸՂ, ՎՁԵԲ, ԱՁԲ և ԵՆԲ կայքերում ՎՁԵԲ, ԱՁԲ, ԵՆԲ և ՀՀ կառավարության կողմից հաստատվելուց հետո:

52. Նախնական ՀՕՏԾ մշակման ընթացքում մարզային և համայնքային մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպում է անցկացվել Սյունիքի մարզպետարանում (ք. Կապան) 23.02.2016թ.-ին: Այս հանդիպմանը ներկա էին ԸՂ իրավաստիրոգ կազմակերպության, նախնական ՀՕՏԾ խորհրդատուի, ինչպես նաև շահագրգիռ բոլոր համայնքների, տեղական ՀԿ-ների, քաղաքացիական հասարակության և այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներ: Օպտիմալ նախագծային տարբերակն ընտրելուց հետո 17.11.2016թ. (Սիսիանի քաղաքապետարան) և 18.11.2016թ. (Կապան քաղաք, Սյունիքի մարզպետարան) կազմակերպվել են հանրային քննարկումներ նախնական նախագծի, ՀՕՏ ընթացակարգերի և բնապահպանական միջոցառումների վերաբերյալ, որին մասնակցել են ազդակիր համայնքները և այլ շահագրգիռ կազմակերպություններ: Համապատասխան ՀՕՏ նյութերը տրամադրվել են ազդակիր համայնքներին:

53. Այս ՏԾ-ի մշակման մասին տեղեկացնելու համար ազդակիր համայնքներում անց են կացվել հետևյալ 10 խորհրդատվական հանդիպումները.

Ամսաթիվ	Վայրը	Ժամը	Մասնակիցների թիվը
08.12.2021	Սյունիքի մարզպետարան, Կապան ք	16:00	6
09.12.2021	Սյունիքի մարզ, Քաջարան համայնք	10:30	10
09.12.2021	Սյունիքի մարզ, Սիսիան համայնք	15:30	10
27.12.2021	Սյունիքի մարզ, Սիսիան համայնք, Վաղատին բնակավայր	13:30	6
27.12.2021	Սյունիքի մարզ, Սիսիան համայնք, Որոտնավան բնակավայր	15:00	3
27.12.2021	Սյունիքի մարզ, Սիսիան համայնք, Լոր բնակավայր (ներառում է Շենաթաղ բնակավայրը)	16:00	3
27.12.2021	Սյունիքի մարզ, Սիսիան համայնք, Դարբաս բնակավայր	17:00	3
27.12.2021	Սյունիքի մարզ, Սիսիան համայնք, Աղիտու բնակավայր	18:00	3
28.12.2021	Սյունիքի մարզ, Քաջարան համայնք, Գեղի բնակավայր	11:00	3
28.12.2021	Սյունիքի մարզ, Քաջարան համայնք, Լեռնաձոր բնակավայր	13:00	3

2021 թվականի հանդիպումների ընթացքում ազդակիր համայնքների և վարչական միավորների ներկայացուցիչները հաստատեցին, որ 2016 թվականի համեմատ առաջարկվող ճանապարհի ուղեգծի սահմաններում հողօգտագործման Եական փոփոխություններ չեն եղել՝ նոր մեծ տարածքներ չեն օտարվել, շինարարական թույլտվություններ չեն տրամադրվել և նոր մեծ կառույցներ չեն կառուցվել:

54. ԱԵԱ-ների հետ հանրային քննարկումներ կիրականացվեն բոլոր ազդակիր համայնքներում ՏԾ-ի մշակման փուլում՝ ներկայացնելու ծրագրի նպատակները, ՀՕՏ գործընթացի փուլերը, ինչպես նաև Ծրագրի փոխհատուցման իրավունքները: Հատուկ տեղեկատվական գրքույկ կմշակվի ՀՕՏ-ի հետ կապված սկզբունքների և ընթացակարգերի վերաբերյալ և կբաժանվի մասնակիցներին: ԱԵԱ-երի հետ դեմ առ դեմ խորհրդատվություններ կիրականացվեն ՏԾ իրականացման փուլում: ԱԵԱ-ների մտահոգությունները և առաջարկությունները հաշվի կառնվեն ՏԾ պլանավորման և իրականացման ժամանակ:

55. ՀՕՏ ծրագրի տարբեր փուլերում (պլանավորում, իրականացում և մշտադիտարկում) պետք է իրականացնել հետևյալ գործողությունները. բաժանել հասարակության իրազեկման հայերեն բրոշյուրներ (որը կներառի հողերի օտարման և փոխհատուցման ուղեցույց) և գրքույկներ, ՏԾ-ի հայերեն տարբերակները տրամադրել մարզպետարաններին և համայնքապետարաններին և ՏԾ-երը տեղադրել Վարկատուների կայքում:

56. Համայնքային իշխանությունները պետք է իրազեկվեն Ծրագրի մասին, և նրանցից աջակցություն կարելի էրել մարդահամարի, ազդեցության ենթակա գույքի հաշվառման, գույքագրման և մանրամասն չափագրման հետազոտության իրականացման հարցում: Բացի այդ, նախքան ՏԾ-ն ավարտին հասցնելը և այն ՀՀ ՏԿԵՆ ներկայացնելը ԱԵԱ-ները պետք է մանրամասնորեն իրազեկվեն ԱԵԱ ցուցակագրման մարդահամարի, ազդեցության ենթակա գույքի հաշվառման, գույքագրման և ՎԶՀ-ի արդյունքների մասին, և համապատասխանաբար պետք է հաշվի առնվեն նրանց նախապատվությունները փոխհատուցման և տարաբնակեցման համար տրամադրվող այլ աջակցության առումով: ԱԵԱ-երի և այլ շահառուների ակտիվ մասնակցությունն ապահովող գործընթացներն ու մեխանիզմները պետք է մանրամասն ներկայացվեն ՏԾ-երում, ներառյալ ժամկետը, մասնակիցների ցուցակը և խորհրդատվական հանդիպումների արձանագրությունները:

Թ. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

57. Ծրագրի Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածը նախատեսվում է ֆինանսավորվել ՎՉԵԲ, ԱՉԲ և ԵՆԲ կողմից: Սույն ՏՇ-ում նկարագրված փոխհատուցման և կենսամիջոցների վերականգնման ծրագիրը ներառում է հստակ գործընթացներ, դիսամիկա և տարբեր դերակատարներ: ԸՂ-ն կիրականացնի ծրագիրը ԶԶ անունից, ինչպես լիազորված է ԶԶ կառավարության որոշմամբ: ԸՂ-ն խորհրդատուների աջակցությամբ յուրաքանչյուր ծրագրի համար կմշակի և կիրականացնի ՏԾ՝ ՏՇ-ում որդեգրված քաղաքականության և ընթացակարգերին համապատասխան: Մի շարք այլ պետական և ոչ պետական կազմակերպություններ աջակցող դեր կկատարեն ԶՕՏ գործընթացներում: Գործող օրենսդրության համաձայն՝ ԶԶ կադաստրի կոմիտեն ապահովում է անշարժ գույքի սեփականատերերի և գույքային իրավունքներ ունեցողների, իրավունքների սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը և իրավունքների պետական գրանցումը: Տեղական ինքնակառավարման մարմինները նույնպես ներգրավված կլինեն այս գործընթացներում: Նշված կառույցների դերը մանրամասն ներկայացված է ստորև: Ծրագրի կազմակերպչական կառուցվածքը ներկայացված է **պատկեր 2**-ում:

Թ 1. ՏԿԵՆ ԵՎ ԸՂ

58. ՏԿԵՆ-ն ընդհանուր պատասխանատուն է Ծրագրի իրականացման համար: Դա ներառում է բոլոր ԶՕՏ աշխատանքների նախապատրաստումը, իրականացումն ու ֆինանսավորումը, ինչպես նաև տարբեր կառույցների գործողությունների համակարգումը: ԶԶ կառավարության որոշման համաձայն ՏԿԵՆ-ը հանդիսանում է Ծրագրի շրջանակներում հողերի օտարման գործառույթների իրականացման համար պատասխանատու լիազոր պետական մարմին, որի լիազորությունները սահմանված են Օրենքով: ՏԿԵՆ-ն իր որոշ գործառույթները կարող է իրականացնել ԸՂ միջոցով:

59. ԶԶ կառավարության որոշմամբ ԸՂ-ն հանդես է գալիս հանրության գերակա շահերի ապահովման համար օտարման ենթակա հողամասերի ձեռքբերող՝ ԶԶ –ի անունից և պատասխանատու է ԶՕՏ բոլոր առաջադրանքների պլանավորման և իրականացման, ինչպես նաև օրենքով ձեռքբերողին վերապահված բոլոր գործառույթների համար: ԸՂ-ն ունի սոցիալական և տարաբնակեցման հարցերով համապատասխան թիմ (այսուհետ՝ ՄՏՀԱ), որը կապահովի ԶՕՏ աշխատանքների պլանավորման և իրականացման ընդհանուր կառավարումը:

60. ԸՂ-ն պարտավոր է՝ 1) աջակցել խորհրդատուներին քարտեզագրման, ուսումնասիրության և գույքի իրավական կարգավիճակի, սեփականության և այլ իրավունքների ստուգման գործում: 2) ՏԻՄ-ի և խորհրդատուների աջակցությամբ կազմակերպել հանրային քննարկումներ: 3) ՏՇ-ն ներկայացնել Վարկատուների հաստատմանը: 4) հրապարակել ՏՇ-երը և տեղեկատվական բրոշյուրները: 5) պլանավորել և կառավարել ՏՇ-ի իրականացումը և փոխհատուցման տրամադրման գործընթացը: 6) աջակցություն ցուցաբերել բողոքների լուծման գործընթացում: 7) ապահովել պատշաճ ներքին մշտադիտարկում և դրա արդյունքների հրապարակումը: 8) վարձել Արտաքին մշտադիտարկման գործակալություն (ԱՄԳ) համաձայն ՄՖԶ-երի առաջարկությունների: 9) ԱԵԱ-ների տվյալների բազայի պահպանումը: 10) ԸՂ-ը նաև պետք է հավաքագրի և ներկայացնի բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ ապահովելու համար ԶՕՏ-ի բյուջեների արագ տեղաբաշխումը, ինչպես նաև ԶՕՏ հետ առնչվող բոլոր գործողությունների համակարգումը:

61. ԸՂ-ի ՄՏՀԱ-ն կհամակարգի նաև ՏՇ իրականացումը: ԸՂ-ն կնախաձեռնի իրականացնող խորհրդատուի (ԻԽ) վարձումը՝ ԶՕՏ իրականացման գործողությունները կատարելու և օտարման գործընթացն իրականացնելու համար: ԻԽ-ի հիմնական առաջադրանքները, չսահմանափակվելով սակայն շարադրվածով, հետևյալն են՝ 1) աջակցել ԸՂ-ին ձեռնարկել հանրային տեղեկատվական արշավներ՝ ազդեցության ենթակա համայնքներին տեղեկացնելու համար տարաբնակեցման քաղաքականության և իրավունքների փաթեթի մասին: 2) ձեռնարկել շահագրգիռ կողմերի ներգրավման տարբեր տեսակի գործողություններ, որպեսզի ազդակիր տնային տնտեսություններին և համայնքներին հնարավորություն ընձեռնի բարձրաձայնել մտահոգությունները և առաջարկություններ անել ՏՇ պլանավորման և իրականացման գործընթացի վերաբերյալ: 3) որպես կապող օղակ հանդես գալ ԸՂ-ի և ԱԵԱ-երի միջև՝ կանոնավոր

հանդիպումների միջոցով, այդ թվում բողոքների լուծման խմբի միջոցով. 4) աջակցել ԱԵԱ-երին իրենց բողոքների լուծման հարցում՝ ՏԾ-ում սահմանված բողոքների լուծման մեխանիզմի միջոցով, և աջակցել ԱԵԱ-երին՝ բողոքներին պատշաճ լուծում տալու համար. 5) անհրաժեշտության դեպքում վերանայել ԱԵԱ-ների կողմից ուղարկված պայմանագրերի նախագծերի դիտողությունները և պատասխանել դրանց. 6) իրականացնել օտարման գործընթացը՝ իրականացնել օտարման պայմանագրերի (համաձայնագրերի) նախագծերի կազմումը, ստորագրումը և իրավունքների պետական գրանցումը. 7) աջակցել ԱԵԱ-երին բանկային հաշվեհամարներ բացելու հարցում. 8) ապահովել խորհրդատվություն և աջակցել օրինականացման ելթակա ԱԵԱ-երին՝ օրինականացման գործընթացում. 9) աջակցել ԱԵԱ-երին Ծրագրի ներքո սեփականության օտարման համար փոխհատուցում ստանալու հարցերում. 10) տարածայնության դեպքում ԻԽ-ը կօժանդակի ԱԵԱ-երին հետամուտ լինելու իրենց իրավունքներին՝ բողոքների լուծման մեխանիզմի միջոցով. 11) աջակցել ԱԵԱ-ներին՝ վերաբնակեցման և իրենց բիզնեսի տեղափոխման սահուն կազմակերպման հարցում. 12) այլ առաջադրանքներ որոնք կտրվեն ՃԴ կողմից՝ սեփականությունների օտարման գործընթացի պատշաճ իրականացումն ապահովելու համար:

62. Ծրագրի միջոցների կառավարման նպատակով (այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում ՅՕՏ հարցերով որոշումների կայացման նպատակով) ձևավորված Է Ծրագրի կառավարման խորհուրդ (ԾԿԽ), որը բաղկացած է շահագրգիռ նախարարությունների և այլ մարմինների ներկայացուցիչներից:

Թ 2. Տեղական ինքնակառավարման մարմիններ

63. Տեղական ինքնակառավարման մարմինները օրենքով օժտված են իրենց իրավասության սահմաններում համայնքի վարչական սահմաններում հողային հարաբերություններ կարգավորելու լիազորությամբ: Տեղական ինքնակառավարման մարմինները կաջակցեն ազդեցության սոցիալական հետազոտությունների, ԱԵԱ-երի հետ հանրային լուծումների, բողոքների լուծման, ԱԵԱ-երին խորհրդատվության մատուցման, ԱԵԱ-երի իրավունքների օրինականացման, իրազեկման և փոխհատուցումների տրամադրման հարցում:

Թ 3. Այլ կառույցներ և հաստատություններ

64. Մի շարք այլ մարմիններ նույնպես կմասնակցեն ՅՕՏ աշխատանքների նախապատրաստմանն ու իրականացմանը՝

1) **ՀՀ ֆինանսների նախարարություն.** ՏԾ-ն ՀՀ կառավարության կողմից հաստատվելուց հետո ՏԾ-երի իրականացման համար նախատեսված բյուջեն սահմանված կարգով կտրամադրվի ՏԿԵՆ:

2) **ՀՀ կադաստրի կոմիտե.** ՀՀ կադաստրի կոմիտեն տեղեկատվություն է տրամադրում ազդակիր հողամասի և այլ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների, հողամասի գնահատված կադաստրային արժեքի մասին, ինչպես նաև իր իրավասության սահմաններում ապահովում է օտարված գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը և այլ գործառույթներ, որոնք սահմանված են օրենքով

3) **Դատարաններ.** Հանրության գերակա շահերը ապահովելու նպատակով սեփականության օտարման վերաբերյալ վիճահարույց դեպքերը կլուծվեն դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռներով:

Թ 4. Խորհրդատուներ

65. ՅՕՏ-ի գործառույթների իրականացմանը կներգրավվեն տարբեր խորհրդատուներ՝

1) **ՅՕՏ և սոցիալական խորհրդատուներ.** ՃԴ-ն կվարձի միջազգային և/կամ ազգային խորհրդատուներ ՏԾ պատրաստելու, ինչպես նաև ՏԾ պատրաստման գործընթացի մշտադիտարկման համար: Դա կներառի միջազգային և տեղական ՅՕՏ կարողություններ և անհրաժեշտ հետազոտական խմբեր, ովքեր կիրականացնեն բոլոր դաշտային հետազոտությունները և կնախապատրաստեն անհրաժեշտ ՏԾ-ն:

2) **Մանրամասն նախագծման խորհրդատուներ (ՄՆԽ)/տեխնիկական խորհրդատու.** դա կներառի միջազգային և տեղական ինժեներներին, որոնք կտրամադրեն անհրաժեշտ տեղեկատվություն Ծրագրի ՏԾ-ի մշակման համար:

3) **Անկախ արտաքին մշտադիտարկման գործակալություն (ԱՄԳ).** այս գործակալությունը իրականացնելու է արտաքին մշտադիտարկում և ՏԾ իրականացման գնահատում: ԱՄԳ-ն պարբերաբար հաշվետվություններ կտրամադրի որոնք ենթակա են ՃԴ, ՎՁԵԲ, ԱՁԲ և ԵՆԲ դիտարկման և հաստատման: ԱՄԳ-ն ՃԴ-ին և Վարկատուներին է ներկայացնելու ՀՕՏ իրականացման համապատասխանության հաշվետվություն, որն ենթակա են իրենց կողմից դիտարկման և հաստատման՝ մինչև շինարարական աշխատանքները սկսելը: ԱՄԳ-ն նաև կիրականացնի ավարտական աուդիտ հողերի օտարման ավարտից մոտ 1 տարի հետո (ֆիզիկական տեղահանման և հողերի ձեռք բերման համար) կամ ավելի ուշ (2-3 տարի հետո)՝ ինչպես ֆիզիկական տեղահանման, այնպես էլ կենսամիջոցների վերականգնման գործողությունների արդյունքները բացահայտելու համար:

5) **ՏԾ իրականացման խորհրդատուներ.** ՃԴ-ն կներգրավի փորձառու մասնագետների թիմ՝ ՏԾ իրականացման ամբողջ գործընթացը պլանավորելու և իրականացնելու նպատակով: ՏԾ իրականացման խորհրդատուի անձնակազմը բաղկացած կլինի իրավաբաններից, փաստաբաններից, սոցիալական զարգացման/վերաբնակեցման մասնագետներից, ՏԾ բազայի/տվյալների կառավարման մասնագետից և այլ մասնագետներից, որոնք անհրաժեշտ կլինեն ՏԾ-ն լիարժեք իրականացնելու համար:


Թ 5. ՎՁԵԲ, ԱՁԲ և ԵՆԲ

ՎՁԵԲ և ԱՁԲ

66. Ծրագրի պարբերական վերահսկում իրականացնելուց բացի, ՎՁԵԲ-ի և ԱՁԲ-ի Ծրագրի ղեկավարը (սոցիալական մասնագետ) հաստատում է ՏԾ-ն, ծրագրի ՏԾ-ն և ԱՄԳ մշտադիտարկման հաշվետվությունները, որի արդյունքների հիման վրա տրամադրում թույլտվություն պայմանագրերի շնորհման, ինչպես նաև շինարարական աշխատանքների մեկնարկի համար:

ԵՆԲ

67. ԵՆԲ-ն հաստատում է ՏԾ-ն և ՏԾ-ն՝ ՎՁԵԲ-ի հետ խորհրդատվությամբ: ՏԾ իրականացման պարբերական վերահսկումից բացի, ԵՆԲ Ծրագրի ղեկավարը (սոցիալական մասնագետ) կհաստատի ԱՄԳ մշտադիտարկման հաշվետվությունները և դրա արդյունքների հիման վրա կտրամադրի թույլտվություն պայմանագրերի շնորհման և շինարարական աշխատանքների մեկնարկի համար:



Պատկեր 2. ՅՕՏ կազմակերպչական կառուցվածքը և գործողությունները

Ժ. ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ԴԺԳՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

68. Ծրագրի շրջանակներում պետք է ներդրվի և առկա լինի բողոքների լուծման մեխանիզմ, որը հնարավորություն կտա ԱԵԱ-երին բողոքարկել հողամասերի կամ այլ գույքի օտարումից բխող ցանկացած որոշում, գործելակերպ կամ գործողություն, որը կարող է ազդել ԱԵԱ-երի վրա ծրագրի ողջ ընթացքում: Երբ բողոքը վերաբերում է տարաբնակեցմանը, հիմնական նպատակն է փոխադարձ համաձայնությամբ լուծել հողերի օտարման և տարաբնակեցման վերաբերող ցանկացած բողոք՝ ԱԵԱ-երի հետ խորհրդատվության միջոցով, սեփականատիրոջ կողմից կամավոր, փոխադարձ համաձայնությամբ կնքվող պայմանագրի հիման վրա սեփականության օտարումը իրականացնելու, ինչպես նաև ՏԾ իրականացմանը սահուն ընթացք ապահովելու համար: Մեկ այլ կարևոր նպատակ է համարվում տեղական մակարդակում ազդեցության ենթակա անձանց համար ապահովել օտարման գործընթացի հասանելիությունը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը:

69. Բողոքների լուծման մեխանիզմը կստեղծվի և կգործի մինչև ՏԾ-ն հաստատման ներկայացնելը: Բողոքների լուծման մեխանիզմը կգործի ամեն անգամ երբ ԱԵԱ-երը կներկայացնեն իրենց բողոքները ՃԴ: ՃԴ-ն առանձին-առանձին դիտարկելու է այդ բողոքները անմիջական շփման, ուղղակի հաղորդակցության և հեռախոսագանգերի միջոցով՝ իրականացնելով տեխնիկական ստուգում և հետազոտություն: Բողոքի հիմնավոր լինելու դեպքում փոխհատուցման արժեքները կամ ազդեցությունները կթարմացվեն կամ կվերանայվեն: ԱԵԱ-երն իրավունք ունեն նաև նշված համակարգով բողոքները ներկայացնել՝ սեփականության օտարման և իրենց փոխհատուցման վերաբերյալ պայմանագրի/համաձայնագրի նախագիծը ստանալուց հետո: ԱԵԱ-երը սեփականության օտարման պայմանագրի ստորագրմանը նախորդող ցանկացած փուլում իրավունք ունեն գրավոր ներկայացնել իրենց բողոքներն անմիջականորեն ՃԴ-ին և ՏԿԵՆ-ին:

70. Բողոքների դիտարկման այս տարբերակից բացի ՃԴ-ն, ՏԾ առկա բողոքները քննելու և լուծելու նպատակով, ձևավորելու է բողոքների և դժգոհությունների լուծման ֆորմալ մեխանիզմ: Բողոքների լուծման մեխանիզմում ընդգրկվելու են մի քանի շահագրգիռ կողմեր, որոնք են՝ ՃԴ-ն, Բողոքների քննարկման խումբը (ԲՔԽ) և պետական լիազոր մարմինը (ՏԿԵՆ): Բողոքների լուծման մեխանիզմը պետք է երաշխավորի ազդեցության ենթակա անձանց համար տեղեկատվության և բողոքների համակարգման թիմի հետ խորհրդատվության հնարավորությունը, ինչպես նաև իրենց բողոքների և խնդիրների բարձրացման հնարավորությունը: Բողոքների ընդունումը և հաշվառումն իրականացվում է երկու հիմնական բողոքները մուտքագրող կետերի միջոցով, որն ապահովվում է ազդակիր համայնքներում նշանակված համապատասխան անձի կամ Բողոքի ընդունման առանցքային անձի (Բողոքի առանցքային անձ) կողմից: Բողոքի առանցքային անձը կլինի ՃԴ/ԻԽ ներկայացուցիչը: Համայնքի համապատասխան ներկայացուցիչը և Բողոքի առանցքային անձը կապահովեն բողոքների հաշվառումը և փոխանցումը ՃԴ-ին և ՏԿԵՆ-ին:

71. Բողոքների լուծման փուլերը հետևյալն են՝

1) ԱԵԱ-ն կարող է ներկայացնել իր բողոքը ՃԴ՝ համայնքի համապատասխան ներկայացուցչի կամ Բողոքի առանցքային անձի միջոցով.

2) ՃԴ-ն կքննարկի բողոքը և կներկայացնի իր դիրքորոշումը ԱԵԱ-ին գրավոր՝ բողոքը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ ժամկետներ նախատեսված չէ, ինչպես նաև կհետևի հարցի լուծման ընթացքին՝ մինչև վերջնական լուծումը.

3) ԱԵԱ-ի պահանջով ՃԴ-ն կարող է կրկնակի քննության առնել բողոքը՝ ներգրավելով Բողոքների քննման խմբին (ԲՔԽ).այս խումբը կծառայի որպես վեճերի անաչառ լուծման մեխանիզմ.

4) բողոքների քննման խումբը կազմված է հետևյալ անդամներից՝ ՃԴ/ԻԽ ներկայացուցիչ, ՏԻՄ ներկայացուցիչ (ըստ անհրաժեշտության), արտաքին (ով չի ներկայացնում ՃԴ կամ ՏԿԵՆ) որակավորված տեխնիկական/ տարաբնակեցման փորձագետ (ըստ անհրաժեշտության), խորհրդատուի, կապալառուի ներկայացուցիչը (ըստ անհրաժեշտության), ԱԵԱ-ն կամ վերջինիս ներկայացուցիչը, անկախ դիտորդ (օրինակ՝ ՀՀ ներկայացուցիչ)՝ ըստ ԱԵԱ պահանջի.

5) ԲՔԽ-ն կուսումնասիրի և քննության կառնի բողոքը՝ ներկայացնելով իր դիրքորոշումը ԱԵԱ-ին և ձեռքբերողին՝ 10-ից 30 օրվա ընթացքում:

6) Եթե ճԴ-ի և ԲՔԽ կայացված որոշումները չեն բավարարում ԱԵԱ-ին, ապա բողոքը ԱԵԱ-ի կողմից կարող է ներկայացվել ՏԿԵՆ: ՏԿԵՆ-ն կքննարկի բողոքը և կներկայացնի իր դիրքորոշումը ԱԵԱ-ին՝ 30 օրվա ընթացքում:

72. Այն դեպքում, եթե բողոքների լուծման մեխանիզմը չի բավարարում ԱԵԱ-ին, վերջինս կարող է բողոքը ներկայացնել դատարան: Վերոհիշյալ մեխանիզմը չի ազդում կամ սահմանափակում ԱԵԱ-երի իրավունքը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրենց իրավունքները, ներառյալ դատական կարգով և բողոքների լուծման գործընթացի ցանկացած պահին դիմել դատարան և պետական այլ մարմիններին:

ԺԱ. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՅԱՏՈՒՄ

73. Ծրագրի շրջանակներում ՀՕՏ գործառույթները պետք է ենթարկվեն ինչպես արտաքին, այնպես էլ ներքին մշտադիտարկման: Ներքին մշտադիտարկումը պետք է իրականացվի ճԴ-ի կողմից: Արտաքին մշտադիտարկման իրականացման պարտականությունը պետք է վերապահվի անկախ արտաքին մշտադիտարկում իրականացնող գործակալությանը, որը պետք է վարձվի ճԴ-ի և հաստատվի՝ ՎՁԵԲ, ԱՁԲ և ԵՆԲ կողմից: ԱՄԳ-ն պետք է ընտրվի հասարակական կազմակերպությունների (ՀԿ), գիտական հաստատությունների կամ խորհրդատվական ընկերությունների շրջանակից: ՎՁԵԲ ծրագրի իրականացման գործընթացը սկսելուց հետո ՏԿԵՆ-ին խորհրդատվություն կտրամադրի ԱՄԳ-ի տեխնիկական առաջադրանքի վերաբերյալ:

ԺԱ.1 Ներքին մշտադիտարկում

74. ՃԴ-ն իրականացնում է ընթացիկ ներքին մշտադիտարկում անմիջականորեն կամ խորհրդատուի միջոցով և արդյունքների մասին տեղեկացնում է ՎՁԵԲ-ին ծրագրի իրականացման վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունների միջոցով: Ներքին մշտադիտարկման ցուցանիշները պետք է առնչվեն գործընթացին և անմիջական արդյունքներին: Ներքին մշտադիտարկման արդյունքները կամփոփվեն Ծրագրի առաջընթացի եռամսյակային և սոցիալական մշտադիտարկման կիսամյակային հաշվետվություններում և կներկայացվեն ՎՁԵԲ և ԵՆԲ: Մշտադիտարկման հատուկ չափորոշիչներն են՝

- 1) հողի օտարման կարգավիճակ և հողի դիմաց փոխհատուցման վճարներ.
- 2) օտարման ենթակա շինությունների և այլ գույքի դիմաց փոխհատուցման տրամադրում.
- 3) ԱԵԱ տեղահանում.
- 4) եկամուտների կորստի դիմաց փոխհատուցում.
- 5) տարաբնակեցման և տարահանման օժանդակությունների վճարումներ.
- 6) կենսամիջոցների վերականգնման ուղղությամբ գործողություններ,
- 7) բողոքների դիտարկում.
- 8) այլ օժանդակող ծառայություններ:

75. Ներքին մշտադիտարկումը իրականացվելու է ըստ ազդակիր համայնքների, ՏԾ իրականացման գործընթացը վերահսկելու միջոցով: Այն իրականացվելու է ազդեցության հետազոտությունների ընթացքում հայտնաբերված ԱԵԱ-ների 100%-ի համար (մարդահամարը և ՍՏՈԻ-ն): ԻԿ/ՃԴ, որը պատասխանատու է ծրագրի տարաբնակեցման գործողությունների ամենօրյա մշտադիտարկման համար, հավաքագրում է վերը նշված տեղեկությունները հետևյալ գործիքների միջոցով՝

- 1) Ազդեցության ենթակա մարդկանց մարդահամարի և փոխհատուցման իրավունքների տվյալների վերանայում.
- 2) ԱԵԱ տրամադրված խորհրդատվություն և ոչ պաշտոնական հարցազրույցներ.
- 3) Առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցներ և.
- 4) Համայնքային հանրային հանդիպումներ:

ԺԱ.2 Անկախ արտաքին մշտադիտարկում

76. Արտաքին մշտադիտարկումը իրականացվում է յուրաքանչյուր ՏԾ զուգահեռ և ներկայացվում է յուրաքանչյուր ենթահատվածում ՏԾ իրականացման համապատասխանության (արտաքին մշտադիտարկման) հաշվետվությունների տեսքով և պատշաճ ուսումնասիրության մասին հեշվետվության տեսքով այն հատվածների համար որտեղ չի նախատեսվում ՀՕՏ ազդեցություն: Արտաքին մշտադիտարկումը պետք է իրականացվի ԱՄԳ-ի կողմից, որտեղ ընդգրկված կլինեն ՀԿ-ների, ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ կամ ճԴ անկախ խորհրդատուներ: Մասնավորապես, արտաքին մշտադիտարկումը իրականացնելու է երկու տեսակի գործողություններ՝ կարճաժամկետ մշտադիտարկում և ՏԾ իրականացման ու փոխհատուցման (կենսամիջոցների վերականգնման օժանդակությունների) տրամադրման գնահատում, ու ԱԵԱ-երի կենսակերպի ՏԾ իրականացումից հետո ազդեցության գնահատման երկարաժամկետ մշտադիտարկում:

77. **Կարճաժամկետ մշտադիտարկում և գնահատումը** իրականացվելու են յուրաքանչյուր ՏԾ իրականացման հետ զուգահեռ և ներառելու են լայնածավալ դաշտային այցելություններ և հաղորդակցություններ ԱԵԱ-երի ու ճԴ/ՏԿԵՆ-ի հետ: Սույն առաջադրանքը արտացոլվելու է համապատասխանության (արտաքին մշտադիտարկման) հաշվետվությունների մեջ՝ նշելով, թե արդյոք փոխհատուցման ծրագիրը իրականացվել է ՏԾ դրույթների և ՎՁԵԲ ԻՊ5/ԵՆԲ ԲՍՍ5/ԱՁԲ անվտանգության պահանջների հիման վրա և բարելավել է ԱԵԱ-երի կենսամակարդակը: Մշտադիտարկման փուլերը որոշվելու են մշտադիտարկման պլանավորման ժամանակ ելնելով ՀՕՏ իրականացման կարգավիճակից և շինարարական աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու նպատակից: Համապատասխանության հաշվետվությունները նաև կբացահայտեն անհամապատասխանության խնդիրները, որոնք պետք է լուծվեն Ուղղիչ գործողությունների ծրագրում ու ներկայացվելու են ճԴ (ՏԿԵՆ)-ին և ՎՁԵԲ/ԵՆԲ/ԱՁԲ-ին և նախապայման են հանդիսանալու շինարարական աշխատանքների մեկնարկի համար: Համապատասխանության հաշվետվությունը ներառելու է հետևյալ գործողությունների արդյունքները՝

- 1) ճԴ կողմից մշակված ներքին մշտադիտարկման հաշվետվությունների ստուգում.
- 2) ԱԵԱ-երի և ԱԵՏՏ-երի ստուգում.
- 3) ստուգել, որ արձանագրությունների մեջ նշված ազդեցության չափը համընկնում է իրական ազդեցության հետ.
- 4) ստուգել, որ արձանագրություններում նշված միավորի համար փոխհատուցման դրույթաչափի համընկնում են ՏԾ դրույթներին.
- 5) ստուգել, որ փոխհատուցումը տրամադրվել է բոլոր ԱԵԱ-ներին -և այն չափով, որը սահմանված է ՏԾ-ի մեջ.
- 6) փոխհատուցման գործընթացի գնահատում, արձանագրելով, որ այն կատարվել է ՏԾ դրույթներին և արդյունավետության չափանիշներին համապատասխան ռչ.
- 7) բողոքների վերանայում, ներառյալ՝ ստուգում, արդյոք բողոքների լուծումը իրականացվել է ՏԾ դրույթներին համապատասխան և բավարարել է ԱԵԱ-երին, թե ոչ.
- 8) ԱԵԱ-ների բավարարվածության գնահատում՝ հիմնվելով 25 % ԱԵՏՏ-ների ընտրանքային հետազոտության վրա.
- 9) հանրային լուսմների, շահագրգիռների ներգրավման և ճԴ-ԱԵԱ կապի գնահատում.
- 10) հարկադիր օտարման դեպքերի վարման գնահատում.
- 11) խիստ ազդեցության ենթարկված, խոցելի և վերաբնակեցված ԱԵԱ-երին օժանդակությունների տրամադրման գնահատում.
- 12) ՏԾ իրականացման համապատասխանության վերջնական գնահատում: Եթե ՏԾ իրականացումը բավարար չէ, վերջնական գնահատման մեջ մանրամասն պետք է նկարագրվի անհրաժեշտ ուղղիչ միջոցառումները, որոնք պետք է իրականացվեն ճԴ՝ մանրամասն Ուղղիչ գործողությունների ծրագրին համապատասխան:

78. **Ավարտական աուդիտ՝ ԱԵԱ-ների կենսակերպի վրա ՏԾ իրականացման ազդեցության երկարաժամկետ գնահատումը** կատարվելու է ՏԾ իրականացումից մոտ 1 տարի հետո՝ պարզելու համար, թե արդյոք հողերի ձեռք բերումը և ֆիզիկական տարաբնակեցումը հաջող են իրականացվել կամ ավելի ուշ փուլում (2-3 տարի հետո)

պարզելու համար, թե արդյոք հողերի ձեռք բերման, ֆիզիկական տարաբնակեցման և ՏԾ կենսամիջոցների վերականգնման նպատակները իրականացվել են: ՏԾ մշակման համար հավաքագրված ՄՏ տվյալները չափորոշիչներ կապահովեն համեմատելու համար Ծրագրից առաջ և դրանից հետո պայմանները: Եթե ՄՏ տվյալների որակը չբավարարի, ապա նախքան ՏԾ իրականացումը պետք է կատարել ելակետային ընտրանքային հետազոտություն: ՏԾ իրականացումից հետո կատարված ուսումնասիրությունը պետք է մանրամասնի հետևյալը՝

- 1) ԱԵԱ սոցիալ-տնտեսական պայմանները տարաբնակեցումից հետո.
- 2) ԱԵԱ կողմից հետադարձ կապ իրավունքների, փոխհատուցման տարբերակների, այլընտրանքային զարգացումների և տարաբնակեցման ժամանակացույցերի և այլնի վերաբերյալ.
- 3) կացարանով ապահովվածության և եկամտի մակարդակի փոփոխություն.
- 4) գույքի գնահատում.
- 5) բողոքների ներկայացման ընթացակարգեր.
- 6) փոխհատուցման վճարումներ.
- 7) ԱԵԱ բավարարվածության աստիճանը տարաբնակեցումից հետո.
- 8) ազդեցության ենթակա անձանց տնտեսական և սոցիալական կարգավիճակի վերականգնման աստիճանը.
- 9) իրավունքների երկարաժամկետ արդյունավետություն, ազդեցություն և կայունություն.
- 10) հետագա մեղմացնող միջոցների անհրաժեշտություն և քաղված դասերը:

79. Եթե ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ՏԾ նպատակները լիովին չեն իրականացվել, ԱՄԳ-ն կիրականացնի ավարտական աուդիտ և ԱԵԱ-երի համար կառաջարկի համապատասխան ուղղիչ գործողություններ և լրացուցիչ աջակցություն, որը կներառվի Ուղղիչ գործողությունների ծրագրի մեջ:

ԺԲ. ՏԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԿԱՐԴՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

80. Ծրագրի ղեկավար անձնակազմը կանցնի հիմնական ներածական վերապատրաստում, մինչդեռ ՉՕՏ իրականացման գործողություններում ներգրավված ՃԴ համապատասխան անձնակազմը երկօրյա մանրամասն վերապատրաստում պետք է անցնի ՎՉԵԲ/ԱՉԲ/ԵՆԲ-ի տարաբնակեցման քաղաքականության, դրա կառավարման և ՉՕՏ Չայաստանի Չանրապետության օրենսդրության վերաբերյալ՝ դրա անհրաժեշտության դեպքում: Կախված շահագրգիռ անձնակազմի նախկին փորձից, այս վերապատրաստումը կարող է ավելի երկար և խորացված լինել: Վերապատրաստումը պետք է իրականացվի տարաբնակեցման միջազգային և տեղական մասնագետների կողմից: Վերապատրաստումը պետք է ընդգրկի հետևյալ թեմաները՝

- 1) հողամասերի օտարման սկզբունքներ և ընթացակարգեր.
- 2) հանրային խորհրդատվություն, շահագրգիռների ներգրավում և մասնակցություն.
- 3) իրավունքներ և փոխհատուցման ու նպաստների վճարման մեխանիզմներ.
- 4) բողոքների քննարկում և լուծում.
- 5) տարաբնակեցման գործողությունների մշտադիտարկում:

ԺԳ. ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԲՅՈՒՋԵ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

81. ՏԾ-ի նախապատրաստման և իրականացման բոլոր ծախսերը, ներառյալ փոխհատուցման և ՉՕՏ-ի վարչարարության արժեքը, հարկերը, կհամարվեն ծրագրի արժեքի անբաժանելի մասը և կտրամադրվեն Չայաստանի կառավարության կողմից՝ որպես վարկառու կողմի համաֆինանսավորում: Յուրաքանչյուր ՏԾ պետք է ներառի բյուջեին վերաբերող բաժին, ներառյալ՝ բոլոր ազդեցության ենթարկված ակտիվների համար միավորի փոխհատուցման դրույքաչափերը, փոխհատուցման արժեքները և օժանդակությունները, միավորի փոխհատուցման դրույքաչափերի և փոխհատուցման արժեքի գնահատման և հաշվարկման մեթոդաբանությունը, օտարման և փոխհատուցման համար անհրաժեշտ ծախսերի աղյուսակը, ներառյալ վարչական

ծախսերը, հարկերը և չնախատեսված ծախսերը: Արտաքին մշտադիտարկման գործառնությունների և ուսումնասիրությունների և ՏԾ-երի նախապատրաստման ծախսերը կարող են հատկացվել վարկի շրջանակներում:

82. Լինելով Ծրագրի պատասխանատուն՝ ՏԿԵՆ-ն պատասխանատու է ՏԾ-երի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսների ժամանակին հատկացման համար: Հատկացումները պետք է վերանայվեն տարին երկու անգամ՝ հիմնվելով ՏԾ-երում նշված բյուջետային պահանջների վրա: Համաձայն ՀՕՏ ֆինանսական հոսքերի՝ փոխհատուցման և կենսամիջոցների վերականգնման բյուջեն պետք է ճԴ-ի կողմից վճարվի անմիջապես ԱԵԱ-ին:

ԺԴ. ՏԾ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

83. Հայաստանում առկա փորձի հիման վրա ՏԾ-ի մշակումը կարող է տևել մինչև մի քանի ամիս: ՏԾ-ի մշակման և իրականացման ուղղությամբ ՀՕՏ առնչվող հիմնական քայլերը ամփոփված են ստորև բերված Շրջանակ 1-ում և սույն ՏԾ-ի «Դ» բաժնում:

ՇՐՋԱՆԱԿ 1. ՀՕՏ-Ի ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Քայլ	Գործողություն	Պատասխանատվություն
Ա)	ՏԾ ՄՇԱԿՈՒՄԸ	
1	Մանրամասն նախագծի ստուգում	ՄՆԽ/ՏԿԵՆ/ՃԴ
2	Մշակել հաշվառման/ցուցակագրման և ՄՉՀ-ի ձևաթղթեր, վերապատրաստել հաշվառում/ցուցակագրում և ՄՉՀ իրականացնող տեղական աշխատանքային խմբերին	Սոցիալական և ՀՕՏ խորհրդատու/ՏԿԵՆ/ՃԴ ՄՏՀԱ
3	Նախագծի ազդակիր տարածքի կադաստրային տվյալների և հողատարածքների քարտեզների հավաքագրում, չափագրում	Սոցիալական և ՀՕՏ խորհրդատու/ՃԴ ՄՏՀԱ
4	Ստուգել նախագծի ազդակիր հողատարածքների մասին տվյալները, թարմացնել կադաստրային քարտեզները և իրականացնել ազդեցությունների և գնահատման ուսումնասիրություն՝ մանրամասն չափագրման հետազոտություն (ՄՉՀ) և սոցիալ-տնտեսական ուսումնասիրություն (ՄՏՀ)՝ նկատի ունենալով կենսամիջոցների վրա ազդեցությունները	Սոցիալական և ՀՕՏ խորհրդատու/ՃԴ ՄՏՀԱ
5	Իրականացնել հանրային խորհրդատվություններ	Սոցիալական և ՀՕՏ խորհրդատու/ՃԴ ՄՏՀԱ
6	Բանակցություններ ԱԵԱ հետ	Սոցիալական և ՀՕՏ խորհրդատու/ՃԴ ՄՏՀԱ
7	Հաշվառման/ցուցակագրման արդյունքում հավաքագրված տվյալները ներառել ՏԾ-ի մեջ	Սոցիալական և ՀՕՏ խորհրդատու/ՃԴ ՄՏՀԱ
8	ՏԾ-ն ներկայացնել ՀՀ կառավարության և ՎՉԲ/ԱՉԲ/ԵՆԲ-ի հաստատմանը	ՍԿԵՆ/ՀՀ կառավարություն/ ՎՉԲ/ԱՉԲ/ԵՆԲ
9	Տեղեկությունների տրամադրում	Սոցիալական և ՀՕՏ խորհրդատու/ՃԴ ՄՏՀԱ
Բ)	ՏԾ ամփոփում (մանրամասն նախագիծ)	
1	Ստուգված մանրամասն նախագծի հաստատում	ՄՆԽ/ՃԴ
2	Հաստատված մանրամասն նախագծի հիման վրա վերանայել ազդեցությունները և ԱԵԱ ցուցակը	ՄՆԽ /ՃԴ ՄՏՀԱ
3	Նորացված դրույքաչափերի հիման վրա վերանայել արժեքները	ՄՆԽ / ՃԴ ՄՏՀԱ
4	Օրինականացման ենթակա ԱԵԱ-երի կարգավիճակի օրինականացում	ՏԿԵՆ/ ՃԴ ՄՏՀԱ
5	Վերջնական ՏԾ մշակում	ՄՆԽ/ ՃԴ ՄՏՀԱ
6	ՎՉԲ-ի/ԱՉԲ-ի/ԵՆԲ-ի հաստատում	ՎՉԲ/ԱՉԲ/ԵՆԲ
7	ՏԾ հրապարակում. ՏԾ-ի և տեղեկատվական բրոշյուրների տարածում Հայաստանի այն համայնքներում, որտեղ իրականացվելու է ծրագիրը՝ միաժամանակ հրապարակելով ՏԾ-ի անգլերեն տարբերակը ՎՉԲ/ԱՉԲ/ԵՆԲ կայքում և հայերեն ու անգլերեն տարբերակը՝ ՃԴ կայքում	ՏԿԵՆ /ՃԴ ՄՏՀԱ /ՎՉԲ/ԱՉԲ/ ԵՆԲ
8	Շինարարական պայմանագրի ստորագրում	ՎՉԲ/ԱՉԲ/ԵՆԲ/ ՏԿԵՆ/ՃԴ
Գ)	ՏԾ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ	

Քայլ	Գործողություն	Պատասխանատվություն
1	Պայմանագրերի ստորագրման հաստատում	ՎՉԵԲ/ԱՉԲ/ԵՆԲ
2	Փոխհատուցումների գործողությունների պլանի մանրամասն ժամանակացույց	ՃԴ ՍՏՅԱ
3	ԱԵԱ վերաբնակեցման ծանուցումների տրամադրում	ՏԿԵՆ/ՃԴ ՍՏՅԱ
4	Գույքի օտարման պայմանագրերի ստորագրում	ՏԿԵՆ/ ՃԴ ՍՏՅԱ
5	Գույքի փոխհատուցման և աջակցության/վերականգնման գումարների տրամադրում	ՏԿԵՆ/ ՃԴ ՍՏՅԱ
6	Օտարման ենթակա կառույցների/գույքի քանդում/տեղափոխում	ՏԿԵՆ/ Կապալառու
7	ՏԾ իրականացման ուսումնասիրություն համապատասխանության հաշվետվության միջոցով	ԱՍԳ/ՃԴ ՍՏՅԱ/ՏԿԵՆ/ ՎՉԵԲ/ԱՉԲ/ԵՆԲ
8	Շինարարական աշխատանքները սկսելու մասին թույլտվություն և ծանուցում, եթե ՏԾ-ի իրականացումը գնահատվում է բավարար	ՏԿԵՆ/ՃԴ/ՎՉԵԲ/ԱՉԲ/ԵՆԲ
Դ)	ՏԾ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՑ ՅԵՏՈ	
1	ՏԾ-ի անկախ գնահատում և ավարտական աուդիտ	ԱՍԳ
2	Ավարտական աուդիտի հաշվետվության հաստատում	ՃԴ/ՎՉԵԲ/ԱՉԲ/ԵՆԲ
3	Ուղղիչ գործողությունների ծրագրի իրականացում եթե մշակվել է Ավարտական աուդիտի հաշվետվության մեջ	ՃԴ ՍՏՅԱ
Ե)	ՑԻԿԼԱՅԻՆ/ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
1	Ներքին մշտադիտարկում. կիսամյակային հաշվետվություններ ՎՉԵԲ/ԱՉԲ/ԵՆԲ-ին	ՃԴ ՍՏՅԱ
2	Արտաքին մշտադիտարկում տարեկան հաշվետվողականություն	ԱՍԳ
3	Բողոքների քննարկում/դատական վարույթներ	ՏԿԵՆ/ՃԴ ՍՏՅԱ /Դատարան
4	Միջգերատեսչական համակարգում և կապ ԱԵԱ-երի հետ	ՏԿԵՆ/ՃԴ ՍՏՅԱ

ՀԱՎԵԼՎԱԾ Ա**ՏԻՊԱՅԻՆ ՏՇ-Ի ԱՍՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ****1. Ծրագրի ՀՕՏ հիմնական խնդիրների շրջանակ**

Այս բաժնում նկարագրվում է ՀՕՏ պահանջող ծրագրի գործողությունները և կետերը. տրամադրվում է ՀՕՏ-ի հիմնական խնդիրների շրջանակը, մեղմացման այլընտրանքային տարբերակները (եթե այդպիսիք կան), հաշվի առնելով հողի օտարման և դրա ազդեցությունների նվազագույնի հասցնելու անհրաժեշտությունը. և ինչու են նկարագրված ազդեցություններն անխուսափելի:

2. ՀՕՏ ազդեցությունները և առաջարկվող մեղմացնող միջոցառումները

Այս բաժնում նկարագրվում է ազդեցությունների նախապատրաստումը (իրականացնողն ու նախաձեռնման ժամկետը) և նշվում է յուրաքանչյուր տեսակի ազդեցության լիարժեք գնահատումը և ազդեցության ենթակա անձանց հաշվառումը՝ ՏՇ-ին համապատասխան: Այս բաժնում նաև ներառված է յուրաքանչյուր ազդեցության ենթարկված առարկայի միավորի փոխհատուցման դրույքաչափի և լրացուցիչ հատկացումների/նպաստի, օժանդակության որոշման մեթոդաբանությունը:

3. Խնդիրները, քաղաքականության շրջանակը և իրավունքները

ՏՇ-ի հիման վրա այս բաժնում նկարագրվում են փոխհատուցում ստանալու իրավունքը և փոխհատուցման դրույքաչափերը:

4. Խորհրդատվության տրամադրումը, շահագրգիռների ներգրավում և բողոքների քննարկման գործընթացը

Այս բաժնում ամփոփված են ՏՇ-ում նկարագրված ազդեցության ենթակա անձանց բողոքների քննարկման ընթացակարգերը, ինչպես նաև նկարագրված են տվյալ ենթածրագրի շրջանակներում իրականացված խորհրդատվության տրամադրման, շահագրգիռների ներգրավման, մասնակցության և բողոքների քննարկման գործընթացները:

5. Փոխհատուցում, վերաբնակեցում և եկամտի վերականգնում

Այս բաժնում նկարագրված են փոխհատուցման տրամադրման միջոցառումները:

6. Ինստիտուցիոնալ շրջանակները

Այս բաժնում նկարագրված են այն ինստիտուցիոնալ միջոցառումները, որոնք հիմնված են սույն ՏՇ-ի վրա: Այն ներառում է հիմնական գործառույթների և պլանավորման, բանակցությունների, խորհրդատվության տրամադրման, հաստատման, համակարգման, իրականացման, ֆինանսավորման, մշտադիտարկման, ինչպես նաև հողի օտարման ու տարաբնակեցման գնահատման աշխատանքներին վերաբերող հարցեր:

7. Տարաբնակեցման բյուջե և ֆինանսավորում

Այս բաժինը մշակում է յուրաքանչյուր ազդակիր առարկայի փոխհատուցման միավորի դրույքաչափը և գնահատում է նախագծի ՀՕՏ բյուջեն: ՀՕՏ բյուջեն պետք է ներառի ազդակիր սեփականության փոխհատուցումը և դրա հետ կապված հնարավոր ծախսերը, այդ թվում բերքի դիմաց փոխհատուցումը, լրացուցիչ հատուցումները, մշտադիտարկման և գնահատման ծախսերը, ինչպես նաև վարչական ծախսերը, որը պետք է համապատասխանեցվի գների սղաճին և կիրառելի հարկերին:

8. Իրականացման ժամանակացույցը

Այս բաժնում ներկայացվում է ՀՕՏ-ի գործառույթները շինարարական աշխատանքների իրականացման հետ կապող ՀՕՏ-ի գործընթացների ժամանակացույցը:

9. Մշտադիտարկում և գնահատում

Այս բաժնում ներկայացվում են ընթացիկ և անկախ մշտադիտարկման և գնահատման գործողությունների հատուկ միջոցառումները:

ՀԱՎԵԼՎԱԾ Բ

ՁԵՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿՈՐՍՏԻ ՀԱՄԱՐ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՎ ԽՈՑԵԼԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՍԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Սույն փաստաթղթում ներկայացված են տարաբնակեցման շրջանակում (ՏՇ) նշված իրավունքների սխեմայի Փոխհատուցման իրավունքների 7-րդ «Ձեռնարկատիրական գործունեության դադարեցման», 8-րդ «Աշխատանքի կորուստ» և Կենսամիջոցների վերականգնման իրավունքների 8-րդ «Օժանդակություն սոցիալապես խոցելի անձանց/ ԱԵՏՏ-ներին» ենթակետերով նախատեսված փոխհատուցում տրամադրելու սկզբունքները և մեթոդաբանությունը:

2. Սույն հավելվածում օգտագործված հապավումները սահմանված են ՏՇ-ով:

3. Սույն փաստաթղթում օգտագործված են հետևյալ սահմանումներն ու հայեցակետերը.

1) Ազդեցության ենթակա անձինք (ԱԵԱ) են համարվում՝ իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը, որոնք տնօրինում են ազդեցության ենթակա բիզնեսը, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեությունը տնօրինողը/ սեփականատերը՝ անկախ հարկային հաշվետվությունների /հաշվարկի ներկայացումից և գործունեության իրավական կարգավիճակից:

2) Մշտական ազդեցության ենթակա ԱԵԱ-եր են համարվում այն ազդեցության ենթակա անձինք, որոնց ձեռնարկատիրական գործունեությունը մշտապես դադարեցվում է Ծրագրի արդյունքում:

3) Ժամանակավոր ազդեցության ենթակա ԱԵԱ-եր են համարվում այն ազդեցության ենթակա անձինք, որոնց ձեռնարկատիրական գործունեությունը ժամանակավորապես է դադարեցվում:

4) Ձեռնարկատիրական գործունեությունը համարվում է մշտապես դադարեցված, եթե վերջինս դադարեցվում է առնվազն 12 ամսով: Ձեռնարկատիրական գործունեության ժամանակավոր դադարեցում է համարվում մինչև 12 ամսով գործունեության դադարեցումը:

4. Ըստ ՏՇ սկզբունքների՝ փոխհատուցում ստանալու իրավունքը սահմանափակվում է Վերջնաժամկետով, որը ազդեցության ենթակա սեփականության նկարագրության արձանագրությունների կազմման (ստորագրման) օրն է: Նշված օրվանից հետո իրականացված բարելավումները փոխհատուցման ենթակա չեն, բացառությամբ Օրենքով և ՏՇ-ով սահմանված դեպքերի:

5. Յուրաքանչյուր ամսվա համար տրամադրվող փոխհատուցման չափը չպետք է պակաս լինի «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձից:

II. ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՁԵՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՎՆԱՍՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ

Հարկային հաշվետվություն կամ այլ հարկային տեղեկություն/տեղեկանք ներկայացնող ազդեցության ենթակա անձանց փոխհատուցումը

6. Հարկման ընդհանուր համակարգի շրջանակներում հարկվող և մշտական ազդեցության ենթարկվող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը կփոխհատուցվեն տարեկան զուտ շահույթի չափով, որը հաշվարկվում է հարկային մարմին ներկայացրած նախորդ տարվա շահութահարկի հաշվարկում նշված հարկվող շահույթի և շահութահարկի գումարի տարբերության չափով:

Հարկման ընդհանուր համակարգի շրջանակներում հարկվող և ժամանակավոր ազդեցության ենթակա իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը կփոխհատուցվեն վերոհիշյալ կարգով, սակայն միայն գործունեության դադարեցման ամիսների համար՝ մինչև մեկ տարի:

7. Շրջանառության հարկի համակարգի շրջանակներում հարկվող և մշտական ազդեցության ենթարկվող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը կփոխհատուցվեն տարեկան զուտ եկամտի չափով, որը հաշվարկվում է հարկային մարմին ներկայացրած նախորդ չորս եռամսյակների շրջանառության հարկի հաշվարկում նշված հարկվող եկամտի և շրջանառության հարկի գումարի ու ներգրավված վարձու աշխատողների աշխատավարձի հանրագումարի տարբերության չափով:

Հարկման հատուկ համակարգի շրջանակներում հարկվող և ժամանակավոր ազդեցության ենթակա կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը կփոխհատուցվեն վերոհիշյալ կերպով, սակայն միայն գործունեության դադարեցման ամիսների համար՝ մինչև մեկ տարի:

8. Միկրոձեռնարկատիրության համակարգի շրջանակներում հարկվող և մշտական ազդեցության ենթարկվող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք կփոխհատուցվեն տարեկան զուտ եկամտի չափով, որը հաշվարկվում է հարկային մարմին ներկայացրած նախորդ տարվա գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության և միկրոձեռնարկատիրությունում ներգրավված վարձու աշխատողների աշխատավարձի գումարի տարբերության չափով:

Միկրոձեռնարկատիրության համակարգի շրջանակներում հարկվող և ժամանակավոր ազդեցության ենթակա կազմակերպությունները և ֆիզիկական անձինք կփոխհատուցվեն վերոհիշյալ կերպով, սակայն միայն գործունեության դադարեցման ամիսների համար՝ մինչև մեկ տարի:

Հարկային հաշվետվություն կամ այլ հարկային տեղեկություն/տեղեկանք/հաշվարկ չներկայացնող ազդեցության ենթակա կողմերի փոխհատուցումը

10. Մշտական ազդեցության ենթակա իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը, որոնք հարկային հաշվետվություն կամ այլ հարկային տեղեկություններ/տեղեկանք/հաշվարկ չեն ներկայացնում, կստանան միանվագ փոխհատուցում ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափով (վերջնաժամկետի օրվա դրությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված)՝ 12 ամսվա համար:

11. Ժամանակավոր ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը, որոնք հարկային հաշվետվություն կամ այլ հարկային տեղեկություններ/տեղեկանք/հաշվարկ չեն ներկայացնում, կստանան միանվագ փոխհատուցում ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափով (վերջնաժամկետի օրվա դրությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված) ձեռնարկատիրական գործունեության դադարեցման ամիսների համար:

Ձեռնարկատիրական գործունեության ժամանակավոր դադարեցման ժամկետի և մշտական դադարեցման ամսաթվի որոշում

12. Ձեռնարկատիրական գործունեության ժամանակավոր դադարեցման ամիսների քանակը կհաշվարկվի, հիմք ընդունելով ճանապարհի շինարարական աշխատանքների տևողությունը, որը կազդի ձեռնարկատիրական գործունեության վրա: Ծրագրային աշխատանքների իրականացման արդյունքում ձեռնարկատիրական գործունեության դադարեցման երկարաձգման դեպքում տրվում է հավելյալ փոխհատուցում շինարարական աշխատանքների լրացուցիչ ամիսների համար, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա համար (եթե գերազանցում է 12 ամիսը, ապա համարվում է մշտական):

Ձեռնարկատիրական գործունեության մշտական դադարեցման ամսաթիվը տվյալ կազմակերպությանը կամ ԱԶ-ին պատկանող ազդակիր գույքի նկատմամբ ձեռքբերողի իրավունքը գրանցվելու ամսաթիվն է:

ձեռնարկատիրական գործունեության պետական գրանցման և լիցենզիա ստանալու հետ կապված վճարների, պետական տուրքերի փոխհատուցում

13. Մշտական ազդեցության ենթակա հարկային հաշվետվություն կամ այլ հարկային տեղեկություն/տեղեկանք ներկայացնող իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը կփոխհատուցվեն նաև պետական գրանցման և գործունեության լիցենզիայի համար կատարված ծախսերի համար: Այն լիցենզիաները, որոնք տրամադրված են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, միայն տվյալ վայրում գործունեություն իրականացնելու համար («Վ» տառի նշումով գործունեության տեսակներ) և չեն դադարեցվում, այլ վերաձևակերպվում են իրավաբանական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) գործունեության իրականացման այլ հասցեի համար, ապա այս դեպքում փոխհատուցվում է լիցենզիայի վերաձևակերպման համար նախատեսված պետական տուրքի գումարը:

14. Ժամանակավոր ազդեցության ենթակա հարկային հաշվետվություն կամ այլ հարկային տեղեկություն/տեղեկանք ներկայացնող իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը կփոխհատուցվեն այն լիցենզիաների մասով, որոնց համար սահմանված է տարեկան պետական տուրք, փոխհատուցման գումարը հաշվարկվում է տարեկան պետական տուրքի գումարի 1/12-ի և գործունեության ժամանակավոր դադարեցման ամբողջական ամիսների արտադրյալի չափով:

III. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿՈՐՄՏԻ ՓՈԽՂԱՏՈՒՑՈՒՄԸ

15. Փոխհատուցման են ենթակա գրանցված, աշխատանքային պայմանագրի (կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի) հիման վրա աշխատող այն աշխատողները, ովքեր աշխատել են ազդեցության ենթակա կազմակերպությունում կամ ԱԶ-ում Վերջնաժամկետի դրությամբ առնվազն երկու ամիս և մինչև գործունեության դադարեցման պահն անընդմեջ և կներկայացնեն աշխատանքային հարաբերության դադարեցումը փաստող ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան փաստաթուղթ:

Փոխհատուցման հաշվարկը կկատարվի հետևյալ սկզբունքներով՝

1) գործունեության մշտական դադարեցման դեպքում (մշտական ազդեցություն) աշխատողը կստանա դրամական փոխհատուցում՝ 6 միջին ամսական աշխատավարձի (ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված) չափով՝ առանց հարկերի, եթե աշխատանքային պայմանագիրը դադարում է ազդակիր հողում կազմակերպության կամ ԱԶ-ի գործունեության դադարեցման հետևանքով:

2) գործունեության ժամանակավոր դադարեցման արդյունքում աշխատանքի ժամանակավոր կորստի դեպքում (հարկադիր պարապուրդ) դրամական փոխհատուցում կտրվի վերոնշյալ հիմունքներով՝ հիմնված աշխատանքի հարկադրված դադարեցման ամիսների համար, բայց ոչ ավելի, քան վեց ամսվա համար:

16. Ապօրինի (չգրանցված) զբաղվածությունը կփոխհատուցվի հետևյալ կերպ՝

1) գործունեության մշտական դադարեցման դեպքում (մշտական ազդեցություն) աշխատողը կստանա դրամական փոխհատուցում՝ 6 ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի (վերջնաժամկետի օրվա դրությամբ ՀՀ օրենքով սահմանված չափով) եթե զբաղվածությունը դադարում է ազդակիր հողում ձեռնարկատիրական գործունեության դադարեցման հետևանքով:

2) գործունեության ժամանակավոր դադարեցման արդյունքում աշխատանքի ժամանակավոր կորստի դեպքում դրամական փոխհատուցում կտրվի վերոնշյալ հիմունքներով՝ հիմնված զբաղվածության հարկադրված դադարեցման ամիսների համար, բայց ոչ ավելի, քան վեց ամսվա համար:

IV. ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԽՈՑԵԼԻ ԱՆՁԱՆՑ ՏՐԱՄԱԴԻՎՈՂ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

17. Սոցիալապես խոցելի անձանց տրամադրվելու է միանվագ դրամական օժանդակություն նվազագույն ամսական աշխատավարձի վեցապատիկի չափով:

18. Սոցիալապես խոցելի են համարվում հետևյալ տնային տնտեսությունները.

1) այն տնային տնտեսությունները, որոնցում ընդգրկված ընտանիք(ներ)ը հաշվառված է (են) ընտանիքի անապահովության գնահատման համակարգում և

ստանում են նպաստ.

2) միայնակ ծնողի կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները, որտեղ տարիքային կենսաթոշակառու հանդիսացող կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանցից, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցնող կամ մինչև քսաներեք տարին լրացած և ուսումնական հաստատություններում ցերեկային ուսուցմամբ սովորողներից բացի այլ չափահաս, աշխատունակ տարիքի անձ չկա՝ եթե ընտանիքը նպաստառու չէ.

3) տարիքային կենսաթոշակառու հանդիսացող անձանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները, որտեղ տարիքային կենսաթոշակառու կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանցից, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցնող կամ մինչև քսաներեք տարին լրացած և ուսումնական հաստատություններում ցերեկային ուսուցմամբ սովորողներից բացի այլ չափահաս, աշխատունակ տարիքի անձ չկա՝ եթե ընտանիքը նպաստառու չէ.

4) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները, որտեղ տարիքային կենսաթոշակառու կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանցից, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցնող կամ մինչև քսաներեք տարին լրացած և ուսումնական հաստատություններում ցերեկային ուսուցմամբ սովորողներից բացի այլ չափահաս, աշխատունակ տարիքի անձ չկա՝ եթե ընտանիքը նպաստառու չէ.

5) կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները, որտեղ տարիքային կենսաթոշակառու հանդիսացող կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանցից, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցնող կամ մինչև քսաներեք տարին լրացած և ուսումնական հաստատություններում ցերեկային ուսուցմամբ սովորողներից բացի այլ չափահաս, աշխատունակ տարիքի անձ չկա՝ եթե ընտանիքը նպաստառու չէ:

19. Եթե նկարագրության արձանագրությունների կազմման ընթացքում ՃԴ-ը բացահայտում է, որ ազդեցության ենթակա տնային տնտեսությունն (ընտանիքը) աղքատ է, սակայն ընդգրկված չէ ընտանեկան նպաստների համակարգում, ապա ՃԴ-ը տեղեկացնում է այդ տնային տնտեսության (ընտանիքի) մասին տվյալ տարածաշրջանը սպասարկող միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ տվյալ ընտանիքին ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառելու համար: Եթե մինչև սեփականության օտարումը՝ այդ տնային տնտեսությունը հաշվառվի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում և նպաստի իրավունք ձեռք բերի, ապա անհրաժեշտ հիմքերը ներկայացնելու դեպքում այդ տնային տնտեսությունը կստանան փոխհատուցում՝ որպես սոցիալապես խոցելի տնային տնտեսություն: